

ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻ

ՆԵՐԲՈՂԵԱՆ ԱՍԱՑԵԱԼ
Ի ՀՐԱՃԱՓԱՌ ԳԱԼՈՒԿՍ ՀՈԳԻՅՆ ՍՐԲՈՅ



NERSĒS OF LAMBRON

PANEGYRIC PRONOUNCED UPON
THE MIRACULOUS DESCENT OF THE HOLY SPIRIT

Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this book

Մատենադարան
Սերոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՏԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն գրքի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

NERSĒS OF LAMBRON

PANEGYRIC PRONOUNCED UPON THE MIRACULOUS DESCENT OF THE HOLY SPIRIT

Introduction, Critical Text, and Eastern Armenian
Translation by Arpine Avetisyan
English Translation with Introductory Note by Abraham Terian

Yerevan - 2022

ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ

ՆԵՐՔՈՂԵԱՆ ԱՍՑԵԱԼԻ ՀՐԱՇՎՓԱՌԻ ԳԱՂՈՒՍ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ

Առաջաբանը, քննական բնագիրը և
արևելահայերեն թարգմանությունը՝ Արփինե Ավետիսյանի
անգլերեն թարգմանությունը առաջաբանով՝ Աբրահամ Տերյանի

Երևան - 2022

ՀՏԴ 821.19.0:27
ԳՄԴ 83.3(5Հ)+86.37
Լ 631

Հրատարակվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ Գոհար Մուրադյան

Ներսես Լամբրոնացի. ՆԵՐԲՈՂԵԱՆ ԱՍԱՑԵԱԼ Ի
Լ 631 ՀՐԱՇԱՓԱՌԻ ԳԱՆՈՒՄՍ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ / Առաջաբանը,
քննական բնագիրը և արևելահայերեն թարգմանությունը՝
Արփինե Ավետիսյանի: Անգլերեն թարգմանությունը
առաջաբանով՝ Աբրահամ Տերյանի.- Եր.: Մատենադարան,
2022.- 128 էջ:

Գրքում ներկայացված է հայ միջնադարյան ականավոր մատենագիր Ներսես Լամբրոնացու (1153-1198)՝ Սուրբ Հոգու գալստյանը նվիրված ներբողի քննական բնագիրը՝ արևելահայերեն և անգլերեն թարգմանություններով: Ներբողը տողատված է նոր տարբերակով. հաշվի է առնված ռիթմավորված հատվածների և հանգի հաճախակի կիրառումը: Ձևական բնագիրը կազմվել է Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանություններում պահվող մեկական, Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի չորս ձեռագրերի, ինչպես նաև Վենետիկում հրատարակված օրինակի համեմատությամբ:

Գիրքը նախատեսված է բանասերների, աստվածաբանների և հայ միջնադարյան գրականությամբ հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 821.19.0:27
ԳՄԴ 83.3(5Հ)+86.37

ISBN 978-9939-897-07-3
© Մատենադարան, 2022
© Արփինե Ավետիսյան, 2022
© Աբրահամ Տերյան, 2022



ԱՌԱՋԱԲԱՆ

ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻՆ ԵՎ ՆՐԱ ՆԵՐԲՈՂԸ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՀՐԱՃԱՓԱՌ ԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՍԻՆ

*«Վասն զի ի մանկութենէ բնակեցաւ ի նա շնորհք Սուրբ Հոգւոյն,
որով եւ սկսաւ մեկնել լուսատր մտօք դիրալոր բանիւ
զմատեան Աստուածային գրոց...»*

Ղևոնդ Ալիշան,
«Հայապատում», Բ, էջ 416

Ներսես Լամբրոնացին (ավագանի անունը՝ Սմբատ) հայ միջնադարյան գրականության ամենավաղ ներկայացուցիչներից է, որը թողել է հոգևոր և աշխարհիկ բնույթի ծովածավալ գրական ժառանգություն: Հայտնի է իր եկեղեցական, բարեկորոզական, հասարակական, պետական և ազգային գործունեությամբ: Ծնվել է 1153 թ. Կիլիկիայի Լամբրոն բերդում¹, մահացել է 1198 թ. հուլիսի 14-ին Սկևռայում:

¹ Լամբրոնը գտնվում է Տավրոսի լեռների խորքում, ծովի մակարդակից 455 մետր բարձրության վրա: Այն կանգնեցվել է 300 մետր բարձրությամբ հսկայական ժայռի վրա՝ թողնելով հսկա մարտիկի տպավորություն: «Լամբրոն» անունը ծագել է հունարենից և ըստ Մովսես Վարդապետի (13-րդ դար)՝ նշանակում է «կրակարան»: Հին հունարեն λαμπρός անվանումն ունի «լուսավոր, պայծառ» իմաստը, իսկ միջնադարում նրա գոյականաբար կիրառվող չեզոք սեռի ձևը՝ τὸ λαμπρόν, նշանակում էր «լույս» և «կրակ» (սե՛ն Sophocles, *Greek Lexicon of the Roman and Byzantine*

Լամբրոնացու նախնիները Կիլիկիա էին տեղափոխվել Գանձակի շրջանի «Մայրեաց ջուրք» կոչվող տեղանքից 1073 թ.²: Հայրը՝ Օշին Բ-ն, Կիլիկիայի Լամբրոն բերդի տերն էր, մայրը՝ Շահանդուխտը, Պահլավունի տոհմի ժառանգ էր՝ Գրիգոր Գ Պահլավունի (1093-1166 թթ.) և Ներսես Շնորհալի (1102-1173 թթ.) կաթողիկոսների եղբոր դուստրը, իսկ Գրիգոր Դ Տղա (1133-1193 թթ.) կաթողիկոսը Շահանդուխտի ավագ հորեղբայր Վասիլ Պահլավունու որդին էր: Սա նշանակում է, որ Լամբրոնացին կապեր ուներ եկեղեցական ամենաբարձր շրջանակներում³, ինչն էլ ուղենշեց նրա հետագա կյանքն ու գործունեությունը:

Մինչ Սմբատի ծնունդը, ծնողներն ուխտել էին նորածին զավակին ընծայել Աստվածամորը՝ տանելով Սկևռայի վանք, սակայն երեխայի ծնվելուց հետո փոխում են իրենց միտքը, հավանաբար այն պատճառով, որ ավագ որդին՝ Հեթումը, գե-

Periods from BC 146 to AD 1100, New York, 1900, p. 705): Լամբրոնի կառուցման թիվը հայտնի չէ: Բերդի կառույցները կիսավեր են, սակայն կամարաձև պալատն ամբողջովին հասել է մինչև մեր օրեր: Տե՛ս Archbishop Nerses Lambronac՝i, *Commentary on Wisdom of Solomon*, Introduction, Translation, and Diplomatic Edition of the Armenian Text by Bishop Anoushavan Tanielian, New York, 2007, էջ 11-12, տե՛ս նաև՝ F. C. R. Robinson and P. C. Hughes, “Lampron: Castle of Armenian Cilicia, *Anatolian Studies*, Vol. 19 (1969), էջ 183-207:

² «Ի ՇԻԲ (1073) ամին ի բռնութենէն Տանկաց ել Օշին իշխանն ի ժառանգութենէ իւրմէ՝ որ կոչի Մայրեաց ջուրք՝ հանդէպ Գանձակայ՝ ունելով ընդ իւր գեղբայրն իւր զՀակոբ եւ զմայրն իւր եւ զամուսինն իւր, ազատագունդ իշխանօքն եւ ամենայն աղխիւն, ունելով ընդ իւր եւ զմատն սուրբ առաքելոյն Պետրոսի: Եւ եկեալ յաշխարհն Կիլիկեաց եւ աջողմամբն Քրիստոսի եւ սուրբ մատին առաքելոյն՝ էառ ի Տանկաց եւ զականաւոր բերդն Լամբրոն. որ է մերձ առ ստորոտով լերինն Տօրոսի՝ ի գահ մայրաքաղաքին Տարսունի»: Տե՛ս *Մամուէլ Անեցի և շարունակողները*, «Ժամանակագրութիւն», աշխատասիրութեամբ՝ Մաթնոսյան Կ., Երևան, 2014, էջ 195:

³ Nerses of Lambron, *Commentary on the Revelation of Saint John*, Translation of the Armenian text, notes and introduction by Robert W. Thomson (Hebrew University Armenian Studies 9), Leuven-Paris-Dudley: Peeters, MA, 2007, p. 10.

րի էր ընկել, և իշխանական տան համար ժառանգ էր պետք⁴: Նորածին Սմբատը շատ ծանր հիվանդանում է, և այլևս ոչ մի փրկության հույս չի լինում: Այս ժամանակ մայրը վերցնում է հիվանդ մանկան խանձարուրը և տանում Սկևռայի Աբ. Աստվածածին եկեղեցի, գոջայով, որ դրժել էր ուխտը: Քահանան մոր գրկից ընդունում է Սմբատին, որը շուտով առողջանում է⁵: Այսպես՝ Սմբատը մեծանում է վանական միջավայրում՝ ստանալով հոգևոր-եկեղեցական խոր գիտելիքներ: Թեև Սմբատը ժամանակի մեծ մասն անցկացնում էր վանքում, այնուամենայնիվ նա հաճախ էր լինում տանը և ստանում մայրական դաստիարակությունն ու գորովանքը, որը նաև իրեն փոքրուց հունարեն էր սովորեցնում:

Սմբատը տանվեց տարեկան էր, երբ մահանում է հայրը, որը ցանկանում էր, որ նա դառնա Սկևռայի եկեղեցու առաջնորդը: Այսպիսով՝ մայրը նրան տանում է Հռոմկլա՝ Ներսես Շնորհալի հայրապետի մոտ, և ինդրում, որպեսզի Սմբատին կուսակրոն քահանա ձեռնադրի. Ներսես կաթողիկոսն այդպես էլ անում է. «1168-ին քահանայ կը ձեռնադրէ իսկոյն զՍմբատ Հռոմկլայի Կաթողիկոսական Մայր եկեղեցոյն մէջ և իւր անուամբ կը կոչէ զնա Ներսէս»⁶: Այսուհետ՝ ձեռնադրյալ նոր անվամբ, Ներսես Լամբրոնացին որոշ ժամանակ Հռոմկլայում մնալուց հետո ուղարկվում է Սև լեռան վրա գտնվող Մաղրուի մենաստան, որտեղ էլ Հովհաննես վարդապետի օգնությամբ կատարելագործում է իր աստվածաբանական գիտելիքները: 1173-ին՝ Ներսես Շնորհալու մահից հետո, նորած կաթողիկոս Գրիգոր Տղան ստիպողաբար նրան կանչում է Հռոմկլա, այնուհետև՝ 1175-ին, քսաներկու տարեկան հասակում ձեռնադրում Տարսուսի եպիսկոպոս:

Շատ վաղ տարիքում ստանալով եկեղեցական կոչումները և գիտակցելով իր առջև դրված ողջ պատասխանատվու-

⁴ Ալիքնեան Ն., *Ներսէս Լամբրոնացի*, Վիեննա, 1956, էջ 13-14:

⁵ Գրիգոր Սկևռացի, *Ներքողեան ի սուրբն Ներսէս Լամբրոնացի*, (Սուփերք հայկականք, ԺԵ), Վենետիկ, 1854, էջ 13-14:

⁶ Սաատլեթեան Ա., *Ներսէս Լամբրոնացի*, Ստանպուլ, 2014, էջ 105:

թյունը՝ այնուամենայնիվ, Լամբրոնացին չէր ցանկանում մնալ Լամբրոնում, քանի որ իրեն ավելի հարազատ էր վանական կյանքը, որը հնարավորություն էր տալիս բոլորից հեռու աղոթական միջավայրում զարգացնելու իր գիտելիքները և զբաղվելու գրական գործունեությամբ:

Հայտնի է, որ Լամբրոնացին եկեղեցական մի շարք բարենորոգչական աշխատանքներ է իրականացրել, ինչպես նաև հակված էր հայ և հույն եկեղեցիների միավորմանը՝ առաջնորդվելով ազգամիջյան համերաշխություն հաստատելու և Քրիստոսի սիրով միավորված լինելու բարի կամքով և որևէ կերպով չսևարգելով Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ընդունած դրույթները դավանաբանական հարցերի շուրջ: Այս ամենը հաճելի չէր արևելյան վարդապետներին, որոնք այդ մասին բողոքում են Լևոն Բ արքային, վերջինս էլ նրանց հաճոյանալու համար Լամբրոնացուն հեռացնում է իր մոտից: Նշյալ հանգամանքներն առիթ են հանդիսացել, որ Լամբրոնացին գրի «Ատենաբանութիւն»-ը և «Թուղթ առ Լևոն արքայն հայոց» կամակը:

Նրա հարուստ և բազմաբնույթ գրական ժառանգությունը ներառում է մեկնություններ, թարգմանություններ, քարոզներ, կամակներ, ճառեր, ներբողներ, տաղեր, շարականներ և այլն: Նշանավոր են Սուրբ Պատարագի, Սաղմոսների, Սողոմոնի Իմաստության, Առակաց գրքի, Տասներկու մարգարեների մեկնությունները: Կարևոր են ասորերենից և հունարենից կատարած քաղաքացիական ու զինվորական օրենքների, ինչպես նաև Հովհաննու Հայտնության մեկնության թարգմանությունները:

Լամբրոնացու ստեղծագործության մեջ կարևոր տեղ են գրավում ներբողները, որոնց մի մասը չափաժող է, իսկ մյուսը՝ շարադրված է որպես արձակ բանաստեղծություն: Սրանցից «Ներբողեան ասացեալ ի հրաշափառ գալուստ Հոգւոյն Սրբոյ» ներբողի քննական բնագիրը ներկայացնում ենք սույն գրքում:

Հասկանալու համար, թե ինչու է Լամբրոնացին ճարտասանական ճոխագույն ոճով գրել այս ներբողը, այսքան կարևորություն տալով Հոգեգալուստին, հարկ է ներկայացնել, թե ինչ է Հոգեգալուստը:

Հոգեգալստյան Աստվածաշնչյան պատումը գտնում ենք Ղուկաս Ավետարանչի հեղինակած Գործք Առաքելոց գրքում (Գործք Բ 1-21), որտեղ պատմվում է այն մասին, թե Քրիստոսի Համբարձումից հետո առաքյալները, Քրիստոսի մայրը՝ Մարիամը, և նրա եղբայրները բնակվում էին Վերևատանը՝ սպասելով Սուրբ Հոգու գալուստին, ինչպես որ պատվիրել էր Քրիստոս համբարձվելուց առաջ (Ղուկ. ԻԴ 49): Երբ լրանում են Պենտեկոստի օրերը, բոլորը միատեղ էին, երկնքից հնչում է սաստիկ հողմի ձայնի պես անեղ մի ձայն, և Սուրբ Հոգին կրակե բոցեղեն լեզուների տեսքով իջնում է ամենքի վրա՝ նրանց շնորհ տալով այլևայլ լեզուներով խոսելու: Աշխարհի տարբեր ծագերից Երուսաղեմում հավաքված հեթանոսները ապշում են, քանի որ այդ հասարակ, անկիրթ «գալիլեացիները», խոսում էին իրենց մայրենի լեզուներով. ոմանք նույնիսկ կարծում են, թե նրանք գիտուց հարբած են: Ս. Գրքում երկու անգամ է խոսվում լեզվափոխության մասին՝ Բաբելոնյան աշտարակաշինության ժամանակ, երբ մարդկանց ըմբոստության պատճառով Աստված իջնում և խառնում է բոլորի լեզուները, և նրանք իրար չէին կարողանում հասկանալ, երկրորդ անգամ՝ Հոգեգալստյան օրը, երբ տեղի է ունենում հակառակը՝ Աստված իջնում է, անձանոթ լեզուներով խոսելու շնորհով օժտում առաքյալներին և հնարավորություն տալով բոլոր ազգերին քարոզելու Աստծո խոսքը: Հոգեգալուստը համամարդկային իրադարձություն է, քանի որ այդ պահին ներկա էին տարբեր ազգերի ներկայացուցիչներ, որոնք եկել էին Երուսաղեմ՝ Պենտեկոստեն տոնելու:

Հոգեգալստյան տոնը⁷ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու կարևորագույն տոներից մեկն է, քանի որ քրիստոնեական Եկեղեցու բուն գործունեությունը սկսվել է Սուրբ Հոգու գալստյամբ, որից հետո էլ ձևավորվել են եկեղեցական համայնքները: Անդրադառնալով Հայ եկեղեցու Հավատամքում Սուրբ Հոգու վերաբերյալ առկա ձևակերպմանը՝ Ներսես Լամբրոնացին գրում է. «Սուրբ Հոգուն անեղ ու կատարյալ ենք դավանում: Անեղ՝ որովհետև Հոր բնությունից անճառելի բխում է՝ անձով տարբեր... Իսկ որ անեղ է, հայտնի է նրանից, որ ստեղծվածների արարիչն է, ուստի և Սուրբ Հոգուն խոստովանում ենք Հորն ու Որդուն արարչակից: Իսկ կատարյալ [ենք դավանում], որովհետև ըստ աստվածային բնության ու էության՝ ամբողջապես անթերի է, անկատարների կատարելագործող և ամենքին լցնող՝ երկնայիններին թե երկրայիններին: Ամենքի համար և ամենքի հետ է՝ կյանքով լցնելիս, շնորհներ բաշխելիս, սրբագործելիս, արդարացնելիս, առաջնորդելիս, ավարտին հասցնելիս»⁸:

Սուրբ Հոգու գալստյան տոնը ամենավաղ ժամանակներից ի վեր հանդիսավորապես նշվել է քրիստոնեական եկեղեցու կողմից: Հայ Եկեղեցում հոգեգալստյան տոնակատարման ընթացքը 3 օր էր և կոչվում էր Լան Տոն Երրորդության, սակայն Սուրբ Ներսես Շնորհալի հայրապետը (12-րդ դար) այն յոթօրյա տոն դարձրեց և տոնի ծիսակարգը հարստացրեց շարականներով ու ընթերցվածներով: Հայ միջնադարյան գրականության մեջ հայտնի են տոնին նվիրված բազմաթիվ ստեղծագործություններ, ինչպես Գրիգոր Նարեկացու «Քարոզ ի Գալուստ Սուրբ Հոգույն» գանձը, «Տաղ Գալստեան Սուրբ Հոգույն

⁷ Տոնի հունարեն անունը՝ Պենտեկոստե, հուն.՝ Πεντηκοστή (ήμέρα), նշանակում է հիսուներորդ (օր): Հրեաները Պասեփից՝ Եգիպտոսի գերությունից ազատագրվելու տոնից հիսուն օր հետո նշում էին Սինա լեռան բարձունքում տասնաբանյա օրենքի ստացման հիշատակի տոնը՝ Պենտեկոստեն (եբրայերեն՝ Շավուոտ - תשעה באב), որի հետ քրիստոնեական շրջանում համընկնում է Հոգեգալստյան տոնը:

⁸ Ներսես Լամբրոնացի, *Մեկնություններ «Հավատամքի» և «Հայր մեր»-ի* (Սուրբ Գրքի մեկնություններ, Գ), Սբ. Էջմիածին, 2007, էջ 38:

ի վերնատունն» կամ «Յանկարծահնչեաց» կոչվող տաղը, Շարակնոցում գտնում ենք «Առաքելոյ աղաւոյ», «Զգալուստ հոգոյն օրհնեսցուք», «Որ ի վերայ բոխեալ» շարականները և այլն:

Ներսէս Լամբրոնացու «Ներբողեան ասացեալ ի հրաշափառ գալուստ Հոգոյն Սրբոյ» երկն իր առանձնահատուկ տեղն ունի Հոգեգալստյան տոնին նվիրված ստեղծագործությունների շարքում: Ներբողյանի կիրառության մեզ հայտնի ամենահին օրինակը գտնում ենք 1223 թ. Բաբերդում գրված Ճաշոցում (ծեռ. Վիեննա 5): Ինչպես գիտենք, Ճաշոց գրքերում ներկայացված է հայ եկեղեցու ծիսական տարին բոլոր սուրբգրային և արտականոնական ընթերցումներով, ինչպես նաև տարվա ընթացքում միայն որոշ տոներին ընթերցվող հատուկ ներբողներ, տաղեր, գանձեր, քարոզներ, աղոթքներ և այլն: Սա նշանակում է, որ Հոգեգալստյան ներբողը, առնվազն հեղինակի մահվանից կարճ ժամանակ անց, արդեն ստացել է ծիսական կիրառություն, թեև հստակ է նաև, որ դա համատարած բնույթ չի կրել, քանի որ ոչ բոլոր Ճաշոցներում է առկա, օրինակ՝ Հեթումի հայտնի Ճաշոցում, որ գրվել է 1286 թ., ներբողը բացակայում է:

Ինչպես Լամբրոնացու մյուս երկու ներբողները՝ նվիրված Աստվածածնի վերափոխմանը և Քրիստոսի Համբարձմանը, այս մեկը ևս ուսումնասիրողները մեծ մասամբ համարել են ճառ, թեև նրանում առկա են ներբողի ժանրին բնորոշ բոլոր առանձնահատկությունները, այն ինքնուրույն գեղարվեստական ստեղծագործություն է, որի մեջ քնարականությունն ու ճարտասանական գովասանությունը գերակշռում են պատմողականությանը: Այստեղ բանաստեղծականությունն այնքան շեշտված է, որ բավական հաճախ հեղինակը անցնում է չափածոյի, երբեմն նաև հանգ է կիրառում, ինչպես՝

«...Վարեցաւ ի Հոգոյն առ բանասարկու թշնամոյն ի մարտն
հանդիսի

Եւ ծանեաւ զմեքենայս նետից ամին թունաւորի,

Որ պատրեր գոտսս ըստ բնութեանն արինի ի խոտորումն մեղացն վիի:

Պահեաց ի կերակրոց հաասար դասուց արդարոցն գնդի
Եւ թոյլ ետ մարմնոյն շարժել ըստ հարկատրն իւր ըղծի»:

«... Չքեզ աղաչեմք ամենքեան միաբան,
Եւ խաւիմք ընդ քեզ համարձակ որդիք երկանց արգանդի
քո ծննդեան.

Մի՛ գարշիր ի հաստէ քումմէ վասն հոտոյ մեղաց զազրու-
թեան,

Եւ մի՛ տրտմիր վասն անպարկեշտ բանի բարբառման...»:

Այս յուրահատկությունը հաշվի առնելով՝ Ներբողի քննա-
կան բնագիրը ներկայացնում ենք տողատման կոր տարբերա-
կով:

Ինչպես հատուկ է Ներբողի ժանրին, այս երկը կույնպես ու-
նի կախարան, հիմնական մաս և վերջաբան:

Նախաբանում հեղինակն իր տկարությունը հատուկ կեր-
պով շեշտելով, շնորհ է հայցում Սուրբ Հոգուց և աղոթական
օգնություն ներկաներից, որպեսզի կարողանա թափանցել
Աստծո գիտության խորքերը և անապական կերակուրը՝ այ-
սինքն Աստծո խոսքը, հասցնի ամենքին: Նա նաև զանազան
գեղարվեստական ոճավորումներով հիմնավորում է, թե ինչու
է հենց այս կյուրքն ընտրել: Ներկայացվում է Քրիստոսի աշ-
խարհ գալը, փորձվելը սատանայից, խաչելությունը, դժոխքի
ավերումը, հարությունը և համբարձումը, որից հետո Հիսուս
ներկայանում է Հորը և նրանից խնդրում, որպեսզի իր փոխա-
րեն ուղարկի Մխիթարիչին, ինչպես որ ինքը խոստացել էր
աշակերտներին: Լամբրոնացին այսպես է ներկայացնում այդ
հրաշալի փոխանակումը.

«Ո՛վ մեծի տուրեառութեան շահի երկնայնոցն եւ երկրա-
նոցս, զի սոքա ետուն մարմին, եւ ի նոցանէ առին զՀոգին:

Տունս Ադամայ ընծայեաց զՔրիստոս, եւ տունն Աստուծոյ հատոյց ամա փոխարէն զՄիխիթարիչ Սուրբ Հոգին: Մարդիկ էտուն զմարդն Աստուծոյ, եւ Աստուած էա զԱստուած մարդկութեանս: Այս է տուրեառութիւն՝ Աստուծոյ արդարութեանն քարոզ...»:

Այսպիսով՝ աղամական մեղքի պատճառով Աստծո և մարդկության միջև կտրված կապը վերահաստատվում է՝ Աստված իրեն տալիս է մարդկությանը՝ Սուրբ Հոգու միջոցով:

Արդեն հիմնական բովանդակության մեջ նկարագրվում է հրե լեզուների տեսքով Սուրբ Հոգու էջքը Վերնատանը հավաքվածների վրա: Լամբրոնացին հատուկ կերպով նշում է Աստվածամոր ներկայությունն այնտեղ՝ հիմնվելով Աստվածաշնչյան պատումի վրա: Այդուհանդերձ հետաքրքրական է, որ, օրինակ, հայ մանրանկարչության մեջ Հոգեգալստյան ոչ բոլոր պատկերներում է ներկա Աստվածամայրը, իսկ որտեղ որ ներկա է, կենտրոնական դիրքում է պատկերված՝ խորհրդանշելով եկեղեցին, որի վրա իջնելով՝ Սուրբ Հոգին հաստատում է Քրիստոսի եկեղեցին:

Սուրբ Հոգին առաքյալներին շնորհ է տալիս խոսելու այլևայլ լեզուներով, հասարակ գալիլեացիները կարողանում են ճարտարաբանել իրենց չիմացած լեզուներով, ինչպես Փիլիպպոսը, որ երբևէ որևէ գործ չէր ունեցել Արաբիայի բնակիչների հետ, խոսում էր նրանց լեզվով, Թովմասը խոսում էր եթովպերեն, Թադեոսը՝ հայերեն.

«Թադեոսն այն տխմար՝ տեսէք, որքան վայելուչ Մեծաց Հայոց բառիքն զբանս իւր ասէ...»:

Նշենք, որ Գործք Առաքելոցի մեզ հասած բնագրի Հոգեգալստյան դրվագում Մեծ Հայքի կամ հայերենի մասին հիշա-

տակություն չկա⁹, միևնույն ընդհանրական եկեղեցու հայրերից Տերտուղիանոսը (մահ. 220) և Օգոստինոս Երանելին (մահ. 430) Գործք Առաքելոցի հիշյալ հատվածը մեջբերելիս «Հրեաստանի» փոխարեն գրում են «Հայաստան», ինչը գոնե հյուսիսային Աֆրիկայի քրիստոնեական համայնքում ձեռագրական այս ավանդության առկայության մասին է վկայում: Եվ իրապես, աստվածաշնչյան սույն հատվածում հիշատակված երկրների և ժողովուրդների աշխարհագրական տարածվածությունը, ինչպես նաև «օտար» երկրների շարքում «Հրեաստան» տեղանվան կիրառության անտրամաբանականությունը, հուշում են, որ այստեղ «Հայաստան» ընթերցումն առավել ընդունելի է¹⁰:

Լամբրոնացին այստեղ յուրահատուկ մեկնություն է առաջարկում լեզվախոսության մասին, կշեռով, որ այդ շնորհից Սուրբ Հոգու գալստյան հիմնական նպատակը չէր, այլ լոկ պարզամիտ մարդկանց բազմությունն ի մի ժողովելու միջոց էր: Իսկ Սուրբ Հոգու գալստյան նպատակի ձևակերպման համար արդարացիորեն որպես հիմք է ներկայացվում Հովհաննեսի Ավետարանում առկա Քրիստոսի խոստումը, թե Սուրբ Հոգին գալու է սովորեցնելու և հիշեցնելու համար Տերունական խոսքերը: Նա նաև հոգևոր հասունություն ունեցող հետևորդներին մատակարարում է Աստվածային սերը որպես «պիևդ կերակուր»:

«2ի տղայոց խաղալիկ նշանքն եւ լեզուախաստութիւնն ի Հոգոյն տուեալ, եւ կաթն մանկանց շնորհք բժշկութեան եւ

⁹ «Մենք՝ պարթեւներ, մարեր եւ իլամացիներ, եւ նրանք, որ բնակւում են Միջագետքում, **Հրեաստանում** եւ Գամիրքում, Պոնտոսում եւ Ասիայում, Փռիզիայում եւ Պամփիլիայում, Եգիպտոսում եւ Կիւրենիայի հարեւան Լիբեայի շրջաններում, եւ Հռոմից եկածներ՝ թէ՛ հրէաներ եւ թէ՛ հրէութեան դարձածներ, կրետացիներ ու արաբներ, - լսում ենք, որ նրանք խօսում են մեր լեզուներով Աստծու մեծագործութիւնների մասին» (Գործք Բ 9-11):

¹⁰ Այս մասին առավել մանրամասն տե՛ս էջ 92, ծնթգ. 32 (անգլ.՝ էջ 119, ծնթգ. 107):

աշոդութինք զարութեանց, իսկ կատարելոցն մատակարարէ հաստատուն կերակուր, որ է սէրն Աստուծոյ...»:

Ներքողը հարուստ է պատկերների ու տեսարանների կիրառությամբ, որոնք ներկայացվում են տարատեսակ ոճական հնարքներով: Հետաքրքրական է Պետրոսի ճառը, որտեղ Լամբրոնացին կրկնակի կիրառելով կերպարանառության¹¹ պատկերավորման միջոցը, հրաշալի պատում է ստեղծում՝ նախ խոսեցնելով Պետրոս առաքյալին, ապա նրա բերանով՝ Քրիստոսին, որը Սուրբ Հոգուն համոզում է իջնել և իր առատ շնորհները բաշխել ամենքին:

«Էջ այժմիկ, սիրոյ աղբիւր՝ սիրով առ նոսա եւ մխիթարեան զորս ի պանդխտութեան վայրն նժդեհ եւ անցատր կենալք տառապին:

Դարձն զնոսա ի նանրութեանցն, զոր ի զուր խառվեցուցանէ թշնամին,

Նայել յայս բազմապատիկ ալբեվանս, զոր պատրաստեցաք նոցա:

Բաշխեան նոցա իմաստութիւն առատ, զի մի՛ եղեռնագործն մոլորեցուցէ զնոսա...»:

Սրանով հեղինակը փորձում է առավել ընդգծված ցույց տալ Քրիստոսի սերը և հոգատարությունը իր աշակերտների հանդեպ:

Ներքողյանը ամփոփվում է Լամբրոնացու սրտաբուլի աղոթքով՝ ուղղված Սուրբ Հոգուն: Նա խնդրում է, որպեսզի Սուրբ Հոգին պահպանի թշնամու խոցող նետերից և թույլ չտա փորձվել չարից.

«...Ո՛վ տէր, եւ զարտաքսեալքս ի վայրս նժդեհութեան
Պարսպեալ պահեան ի թշնամեաց նետից խոցոտման:
Չունիմք զարութիւն հանդիսանալ ի մարտ ճգնութեան.

¹¹ Դագինյան Ա., «Դիմառնությունը միջնադարյան հայ բանաստեղծության մեջ», *Ներսես Շնորհալի (հոդվածների ժողովածու)*, Երևան 1977, էջ 34-35:

Խնդրեմք հառաչմամբ՝ մի՛ տար զմեզ ի փորձանս դարանակային չարութեան...»

Այսպիսով՝ Ներսես Լամբրոնացու՝ Սուրբ Հոգու Գալստյանը նվիրված ներբողը, մի հոգևոր գեղեցիկ բանաստեղծություն է, որտեղ հեղինակը վերհանում է մարդկության փրկության խորհուրդը Աստծո Որդու և Սուրբ Հոգու միջոցով:

Ներսես Լամբրոնացու «Ներբողեան ասացեալ ի հրաշափառ գալուստ Հոգոյն Սրբոյ» երկի քննական բնագիրը կազմելիս օգտվել ենք Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանություններում պահվող մեկական, ինչպես նաև Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Սատենադարանի չորս ձեռագրերից: Բնագիրը համեմատել ենք նաև Վենետիկում հրատարակված օրինակի հետ.

Ձեռագրեր

- A - Վիեննա 5, ԺԳ դ. (1223 կամ 1261), 232ա-239ա (վայրը՝ Բաբերդ),
- B - Վենետիկ 207 (հին թիվ՝ 1002), 1251-1288 թթ., թ. 37բ-48ա (վայրը՝ Երզնկա),
- C - ՄՄ 3933, 1359 թ., թ. 90ա-110բ (վայրը՝ անհայտ),
- D - ՄՄ 1521, 1406 թ., թ. 391բ-396բ (վայրը՝ Նկարինայ ուխտ),
- E - ՄՄ 982, 1460 թ., թ. 310ա-318բ (վայրը՝ Արծկէ),
- F - ՄՄ 981, 1653 թ., թ. 334ա-350ա (վայրը՝ Էջմիածին):

Տպագիր

T - Նորին երանելոյն Ներսեսի ներբողեան ասացեալ ի հրաշափառ Գալուստ Հոգոյն Սրբոյ // Ներսես Լամբրոնացի, Ատենաբանութիւն եւ ճառք, Վենետիկ, 1787, էջ 82-100:

Բնագրի պատրաստման ժամանակ առաջնորդվել ենք հետևյալ սկզբունքներով.

Եթե տարընթերցումները վերաբերում են մեկից ավելի բառերի, տողատակում բերում ենք հիմնական բնագրի համապատասխան հատվածը և //-ով նշում ձեռագրերի այլ ընթերցումները:

Եթե նույն ծանոթագրության մեջ բառերի տարբերություն կա ըստ ձեռագրերի, ապա տարընթերցումներն իրարից բաժանել ենք | նշանով:

Որևէ ձեռագրում առկա լրացուցիչ բառերից կամ հատվածներից առաջ օգտագործել ենք + նշանը, իսկ բացակայող բառերի դեպքում՝ չիք նշումը:

Բնագիրը կազմելիս առաջնորդվել ենք գրաբարի ուղղագրական կանոններով՝ ալ/օ, ել/և, տարբերությունները կամ ը-ի ավելորդ կիրառությունները չենք նշել, հիմք ենք ընդունել չհնչյունափոխված երկբարբառները՝ ալ, ել, իսկ ը-ն թողել ենք ըստ հարկի: Տարընթերցումներում նշել ենք ավելի ուշ շրջանի ձեռագրերում հանդիպող այն ձևերը, որոնք թեև գրաբարի պարագային կարող են սխալագրություններ համարվել, սակայն հաճախ են հանդիպում միջին հայերենում, ինչպես՝ «վայելուջ», «պանտիտութիւն» և այլն:

Չանց ենք առել ձեռագրերում առկա առոգանության նշանները, որոնք ըստ երևույթին անհրաժեշտ են եղել եկեղեցական ընթերցանության համար, բացել ենք բոլոր հապավումները:

Այսպիսով՝ ընթերցողի դատին ենք հանձնում Ներսես Լամբրոնացու՝ Սուրբ Հոգու գալստյանն ընծայված ներբողի ընկական բնագիրը արևելահայերեն և անգլերեն թարգմանություններով հանդերձ, որի կազմման և հրատարակության պատրաստման աշխատանքները մեզ վստահելու և աջակցելու համար երախտագիտություն ենք հայտնում Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ Սատենադարանի տնօրինությանը:

Բնագրի անգլերեն թարգմանության, անգլերեն առաջաբանի, ինչպես նաև աստվածաբանական մի շարք խրթին հատվածների ծանոթագրության և բնագրագիտական բնութթի հարցերում սիրահոժար կերպով մեզ ուղղորդելու համար խորին շնորհակալություն ենք հայտնում անվանի հայագետ, աստվածաբանության դոկտոր Աբրահամ Տերյանին:

Աշխատանքի խմբագրումը սիրով ստանձնելու և նշանակալի դիտարկումներ կատարելու համար մեր հատուկ շնորհակալությունն ենք հայտնում Սատենադարանի Թարգմանական մատենագրության բաժնի վարիչ, բ. գ. դ. Գոհար Մուրադյանին:

Ձեռագրերի ձեռքբերմանն աջակցելու համար երախտապարտ ենք Վենետիկի Մխիթարյան միաբանության միաբան հայր Վահան ծ. վրդ. Օհանյանին, Վիեննայի Մխիթարյան միաբանության միաբան հայր Վահան վրդ. Հովակիմյանին, ինչպես նաև Սատենադարանի Ձեռագրապահոցի և Ձեռագրերի թվայնացման բաժնի աշխատակիցներին:

Հոգեգալստյան ներբողյանը ողողված է Աստվածաշնչյան բազմաթիվ մեջբերումներով և անդրադարձներով, որոնց համապատասխան տեղիների ճշգրտման, նաև մշտական խորհրդատվության համար առանձնահատուկ կերպով շնորհակալություն ենք հայտնում տ. Հայկազուն քին. Սահակյանին:

Համոզված ենք, որ Լամբրոնացու այս ներբողը Սուրբ Հոգու Գալստյան ավետարանական դրվագի ճանաչողությանն ուղղված կարևորագույն աշխատություն է, որն ունի ոչ միայն աստվածաբանական, այլև բանասիրական մեծ արժեք:

ՆՈՐԻՆ ԵՐԱՆԵՆՈՅՆ ՆԵՐՍԵՍԻ՝ ՆԵՐԲՈՂԵԱՆ ԱՍԱՑԵԱԼ Ի ՀՐԱՇԱՓԱՌ ԳԱՆՈՒՄՏ ՀՈԳԻՑՆ ՍՐԲՈՅ՝

Ստիպիմ ի սիրոյ սրտիս² բաղձանաց, նուիրել³ զբանս աղ-
քատ⁴ մտաց իմոց աւուրս մեծի⁵: Հանգանակեցէ՛ք⁶ տկարու-
թեան իմոյ զպարգեւս աղաւթից⁷, հանդիսացեա՛լ ժողո-
վուրդ⁸: Տո՛ւք⁹ ինձ գտուեալս¹⁰ այսաւր շնորհս աշխարհի, որ-
պէս զի անվեհեր արկից գանձն իմ¹¹ ի խորս իմաստից գիտու-
թեանս¹² Աստուծոյ եւ սեղանաւորեցից գանապական կերա-

¹ Նորին Երանելոյն Ներսէսի՝ ներբողեան ասացեալ ի հրաշափառ գալուստ Հոգւոյն Սրբոյ // A Ներսէսի Լամբրոնացւոյ ասացեալ ներբողեան ի Հոգին Սուրբ եւ ի սուրբ յառաքեալսն B Գովեստ ներբողական բացասացու-
թեամբ ասացեալ Ներսէսի սրբագան եպիսկոպոսի Տարսոնի ի ճշմարիտն Աստուած Հոգին Սուրբ եւ յիջանելն նորա ի դասս առաքելոցն եւ յաւր Պենդէկոստէին C Բանն ներբողական բացասացութեան ի ճշմարիտն Աստուած Հոգին Սուրբ, եւ յիջանելն Նորա ի դասս առաքելոցն յաւուր Պենտակոստէին Ներսէսի արքեպիսկապոսի Տարսոնի կիլիկեցւոց ասացեալ D Մեծի եւ հրաշափառ աւուր տաւնի իջման Հոգոյն Աստուծոյ: Ներբողեան ասացեալ Տեառն Ներսէսի Լամբրոնացւոյ արքեպիսկոպո-
սին Տարսոնայ: Բան չքնաղ եւ զարմանալի F Մեծի աւուր Պենտակոս-
տէին Երանելոյն Ներսէսի Լամբրոնացւոյ շատաշնորհ վարդապետի եւ
եպիսկոպոսի Տարոսին Կիլիկեցւոց ասացեալ ներբողեան ի Հոգին Սուրբ
Աստուծոյ: Չքնաղ եւ զարմանալի: Աւգնեա՛ Սուրբ Հոգի Աստուած գծողի
Ստեփանոսի E չիք

² A սրտի

³ A նուիրեալ

⁴ B աղքատիմաց

⁵ A չիք աւուրս մեծի

⁶ A հանկանակեցէ՛ք

⁷ D չիք զպարգեւս աղաւթից

⁸ A ժողովուրդ

⁹ A տո՛ւք

¹⁰ C գտուեալ

¹¹ C չիք

¹² C գիտութեան խորհրդոցն F գիտութեան խորոցն

կուրն¹ հոգւոց² պարարիչ:

Ձիր առատ հեղեալ³ այսար⁴ յերկրի⁵: Սաղթեսցուք նշուլից⁶ նորա ճառագայթել⁷ ի հայեցուածս մտաց մերոց⁸ եւ առաջնորդել⁹ ընդ շաւիղս¹⁰ աստուածայնոց¹¹ բանիցն¹² հետեւել¹³:

Ո՛վ սքանչելեացս, զոր ցանկային¹⁴ ընդ աղաւտ¹⁵ ակնարկութեամբ նկատել¹⁶ հրեշտակք [հմմտ. Ա Պետ. Ա 12], այսար շնորհաւք իջեալ¹⁷ ի ստորին¹⁸ գաւառ¹⁹ սփռեցաւ: Եւ ո՞վ²⁰ ոք²¹ ո՛չ յուսասցի հաւատով²² ի պարգեւս նորա վայելել:

¹ BFT կերակուր C կերակուրս | զանապական կերակուրն // D գկերակուրն
անապական E զանապականն կերակուր

² BC հոգոց D ոգոց

³ C հեղաւ

⁴ C + ի

⁵ այսար յերկրի // DE յերկրի այսար

⁶ A նշոյլից D նշուղից

⁷ A ճառագայթեալ

⁸ F իմոց

⁹ A առաջնորդեալ | D + մեզ

¹⁰ CDE շաւեղս | C + եւ

¹¹ D աստուածայնոցն

¹² CFT բանից

¹³ A հետեւեալ E հետեւել | բանիցն հետեւել // D հետեւել բանից

¹⁴ D + գոնէ

¹⁵ C աղաւտս

¹⁶ AB նկատեալ

¹⁷ շնորհաւք իջեալ // D իջեալ շնորհաւք

¹⁸ CF ստորինս

¹⁹ DE գաւառս

²⁰ CF ո՞

²¹ CF չիք

²² CEF չիք

Հոգին Սուրբ¹, որում բերանաբաց կալով ի փափագման² դասք սերովբեիցն³ եւ քերովբեիցն⁴ գործանութիւն նորա⁵ ո՛չ կարացին նկատել⁶, յայսմ ատուր իսկապես իջեալ՝ յագեցոյց զմարդիկ⁷ ի գիտութիւն անճառ խորհրդոց⁸ իւրոց⁹: Ընդ որս եւ ես սպասաւորեմ¹⁰ յառատութենէ նորա կաթիլս¹¹ իմաստից ընդունել:

Արդարեւ ձգեաց ի փայտն կենաց մարդն զձեռս¹² իւր, որ յառաջն¹³ ի բաց առաքեցաւ¹⁴ ի նմանէ [իմմտ. Ծննդ. Բ 7, Գ 22-24]: Առ¹⁵ եկեր, եւ զյաւիտենականն¹⁶ անձին սեփականեաց¹⁷ զկենդանութիւն¹⁸:

Եւ ո՞ր¹⁹ այսր շնորհի միջնորդ եւ մատակարար, ո՞վ²⁰ այլ ոք²¹, բայց եթէ²² Տէր մեր Յիսուս Քրիստոս [իմմտ. Ա Տիմ. Բ

1 C չիք
2 C փափաքման
3 BCT սերովբեից D սերոբեից
4 CEFT քերովբեից D քերոբեից + եւ
5 C սորա
6 CF տանել | ո՛չ կարացին նկատել // D նկատել ո՛չ կարացին
7 D մարդիկք
8 A խորհրդոց E շնորհաց F խորհրդոյ
9 CF չիք
10 CDET սպասեմ («սպասաւորեմ» իմաստով, ուստի նախընտրել ենք հնագույն AB ձեռագրերի և F-ի ընթերցումը)
11 C կաթիլ
12 BT զձեռն
13 D յառաջագոյն
14 ADE հրաժարեցաւ
15 F էւ՛ռ
16 A զյաւիտենական
17 C սեփականեաց T սեպիականեաց
18 անձին սեփականեաց զկենդանութիւն // D սեպիականեաց զկենդանութիւն անձին
19 C ո՞ր
20 D ոչ
21 այլ ոք // C ոք այլ
22 D թէ

5]. կեանքն, լոյսն¹, ճանապարհն², դուռնն³, հովին, քահանայապետն, միջնորդն, յոյսն⁴, բարեխաւսն⁵, կարապետն⁶ [տե՛ս Յովհ. ԺԴ 6, Ը 12, Ժ 9, 11, 14, Եբր. Գ 1, Ա Տիմ. Բ 5, Ա 1, Ա Յովհ. Բ 1, Եբր. Զ 20]: Որ առ⁷ անց ընդ երկինս երկնից ինքնիշխան գաւրութեամբ [իմմտ. Սաղմ. ԿԷ 19, Յովհ. Ժ 17-18], եւ եմուտ հրաշափառապէս⁸ ի ներքին կողմն⁹ վարագորին անճառելի հիացմամբ¹⁰, եւ եդ յանդիման Աստուծոյ Հար գառհաւատչեայն¹¹ ի մարդկանէ՝ բարեխաւս վասն մեր [իմմտ. Եբր. Զ 19-20, Է 24-27, Ժ 20]:

Ուստի առեալ փոխարէն զձիր¹² առատ¹³ տարածեաց¹⁴ յերկիր [իմմտ. Սաղմ. ԿԷ 19], յորմէ զմայլեալ արբեցաք¹⁵ [իմմտ. Սաղմ. ԻԲ 5, Եր. ԼԱ 14] եւ զերկունս տրտմութեան¹⁶ նախամարն¹⁷ [Ծննդ. Գ 16] յաւետ մոռացաք:

Այսար խաւարաւ պատրանաց աշխարհի ընկլուզեալքս ընկալաք զլոյսն իմանալի՝ պայծառացուցիչ հոգւոց¹⁸ եւ առաջնորդ յերկիրն¹⁹ կենդանեաց:

¹ A յոյսն | D + աղն, առաջնորդն

² D + ճշմարտութիւնն

³ ABCD դուռն

⁴ միջնորդն, յոյսն // B յոյսն, միջնորդն

⁵ յոյսն, բարեխաւսն // CFD բարեխաւսն, յոյսն | T + եւ

⁶ D + Միածինն E չիք

⁷ CFT չիք

⁸ BCF հրաշապէս

⁹ C կողմ

¹⁰ BD չիք անճառելի հիացմամբ

¹¹ BC գառհաւատչայն | C + որ

¹² C զձիրս D ձիր E զձիրն

¹³ DE + եւ

¹⁴ CEFT + ի

¹⁵ զմայլեալ արբեցաք // D արբեալ զմայլեցաք

¹⁶ C տրտմութեանն

¹⁷ C ադամայ | F + Եւայի

¹⁸ CD հոգոց

¹⁹ D երկրին F յերկրին

Այսար զգեստ¹ թախծութեան², զոր ընկալաք ի հաւրէն մերմէ Ադամայ, մերկացաք [Կող. Գ 9-10, հմմտ. Եփ. Դ 22-24], քանզի նորն Ադամ [հմմտ. Ա Կորնթ. ԺԵ 45] զարդարեաց զմեզ³ յոսկեհունս պսակեալ եւ պաճուճեալ⁴ [Սաղմ. ԽԴ 10, 15]:

Այսար հուրն⁵ սքանչելի երկնաւոր⁶ բոցաճաճանչ նշուլիւք⁷ արտափայլեալ ի⁸ յերկիր⁹ [հմմտ. Գործք Բ 2-3]՝ արծարծեալ կիզեաց ի մարդկանէ զփուշն¹⁰ [հմմտ. Ծննդ. Գ 18] եւ զսաստիկ¹¹ պատիժս¹² պատուհասի¹³ մեղացն¹⁴ անիծից:

Այսար լեզուաց¹⁵ հրեղինաց վիճակի գտեալ արժանի ազգ, որ հաւասարեր¹⁶ անասնոց անմտից¹⁷, դարձեալ ստացաւ¹⁸ վերստին զշնորհն բանի¹⁹ [հմմտ. Դուկ. ԺԵ 11-24]՝ պատկերակից գտեալ²⁰ արարչին իւրոյ [հմմտ. Ծննդ. Ա 26-27, Բ 7]:

¹ A սգեստ D զգեստն T զզգեստ

² BDE թախծութեան

³ D + ի հանդերձս

⁴ պսակեալ եւ պաճուճեալ // ACFT պաճուճեալ եւ պսակեալ E զարդարեալ եւ պսակել

⁵ T հուր

⁶ սքանչելի երկնաւոր // D երկնաւոր սքանչելի

⁷ D նշողիւք F նշուլիւք

⁸ D չիք

⁹ B յերկրի | T + այլայլութեամբ

¹⁰ E զփուշ + դատապարտութեանն

¹¹ T զսաստակիչ

¹² A պատիժն CE պատիժ

¹³ BCEF չիք

¹⁴ C մեղաց

¹⁵ D լեզուացն

¹⁶ T հաւասար էր

¹⁷ անմտից // D անմիտ անբանից + եւ

¹⁸ A սսացաւ

¹⁹ E բարի + եւ

²⁰ D եղեալ E եղել

Այսպես հնչին¹ սաստիկ² քաղցր ցաղոյ³ Հոգոյն⁴ [իմմտ. Սաղմ. ՀԱ 6, Ես. ԻԶ 19] որոտաց⁵ յերկիր [Գործք Բ 22], եւ զբարբառ անիծիցն⁶, որ շարժեցաւ ի վերայ սորա⁷ վասն Ադամայ⁸ [իմմտ. Ծննդ. Գ 17], փոխարկեաց⁹ յաւրինութիւն¹⁰:

Այսպէս հոտ բուրման անուշահոտ կնդրկի անապականութեան¹¹ ծաւալեալ¹² զծուխ մահու մառախլապատ¹³ թանձրութեան¹⁴ յեղաշրջեալ¹⁵ յանմահութիւն հաստատեաց:

Այսպէս զգալի¹⁶ պատարագի, զոր առաքեաց աշխարհս¹⁷ զգալի¹⁸, ի գաւառն իմանալի ընկալաւ առհաւատչեայ փոխարինի զՀոգին իմանալի¹⁹ [իմմտ. Եփ. Ա 13-14], որ կորոգեաց զտարր սորին զգալի²⁰ ի ձեւ պատկերի աննիւթն²¹ քաղաքի:

¹ A հնչին

² T + հողմոյ եւ

³ D աւդոյ E ցաղով

⁴ DE Հոգոյն | D + Աստուծոյ

⁵ BC + ի

⁶ զբարբառ անիծիցն // D զբարբառն անիծից

⁷ T չիք ի վերայ սորա

⁸ ET + դարձեալ

⁹ CD փոխեաց F փոխանակեաց

¹⁰ C յաւրինութիւնն

¹¹ F անապականութիւն

¹² A չիք | E + եւ

¹³ A մառաղխապատ B մառախլապատ C մառախլապատ

¹⁴ D թանձրութեան

¹⁵ B յեղաշրջել

¹⁶ ABC սգալի

¹⁷ A յաշխարհ DEF աշխարհ

¹⁸ A սգալի | աշխարհս զգալի // C սգալի աշխարհս

¹⁹ ABET չիք ընկալաւ առհաւատչեայ փոխարինի զհոգին իմանալի | փոխարինի զհոգին իմանալի // D փոխարենի զՀոգին Սուրբ անիմանալի

²⁰ AB սգալի

²¹ B աննիւթ

Ո՛վ մեծի¹ տուրեւառութեան² շահի երկնայնոց³ եւ երկրայնոց⁴, զի⁵ սոքա ետուն մարմին, եւ ի Եոզանէ առին զՀոզին:

Տունս Ադամայ ընծայեաց զՔրիստոս⁶, եւ տուն⁷ Աստուծոյ հատոյց սմա⁸ փոխարէն զՄիսիթարիչ⁹ Սուրբ Հոզին¹⁰: Սարդիկ ետուն զմարդն Աստուծոյ, եւ Աստուած ետ զԱստուած մարդկութեանս: Այս է տուրեւառութիւն¹¹ Աստուծոյ արդարութեան¹² քարոզ¹³.

Եախ¹⁴ ի ծառայիցս¹⁵ պատարագ¹⁶ հնազանդութեան, եւ ապա ի Տեառնէն¹⁷ պարգեւք խաղաղութեան:

Եախ ի մէջ խաղաղութիւնն՝ Քրիստոս, որ քակեալ¹⁸ զմիջտորմն¹⁹ ցանկոյն՝ արար զերկոսեանս²⁰ մի [հմմտ. Եփ. Բ 14],

¹ C մեծ

² ACEF տուրեւառութիւն («մեծի տուրեւառութեան» - բացականչության սեռական է (genetivus exclamationis)՝ հունարանության դրսևորում, և քանի որ «մեծի» ձևը ընդհանուր է բոլոր ձեռագրերի համար բացառությամբ C-ի, ուստի նախընտրել ենք BD ձեռագրերի և T տպագրի ընթերցումը, տե՛ս Մուրադյան Գ., Հունարանությունները դասական հայերենում, Երևան, 2010, էջ 140-141):

³ ACE երկնայնոց

⁴ C երկրայնոց | երկնայնոց եւ երկրայնոցս // D երկրայնոցս եւ երկնայնոցն | F չիք Ո՛վ մեծի տուրեւառութիւն շահի երկնայնոց եւ երկրայնոցս

⁵ C քանզի

⁶ C զՅիսուս

⁷ AE տուն

⁸ C նմա

⁹ C զՄիսիթարիչն

¹⁰ A զՀոզին | C չիք Սուրբ Հոզին

¹¹ C տուրեւառատութիւն

¹² F արդարութեան

¹³ C + զի

¹⁴ DT + ի մէջ

¹⁵ C ծառայից

¹⁶ C + միջնորդ

¹⁷ ACD Տեառնէ | C + են | D + Աստուծոյ

¹⁸ BE քակեաց

¹⁹ E զմիջնորմն

²⁰ C զերկուսեանն DEFT զերկոսինն

եւ ապա¹ յԱստուծոյ² ւետեաց հնչումն, որ ւետարանեաց խաղաղութիւն³ հեռաւորաց եւ⁴ մերձաւորաց [իմմտ. Եփ. Բ 17]⁵:

Յառաջագոյն յՈրդոյն⁶ սուածեալ բնութիւնս՝ զկամս Հարն ի քաղցրութիւն⁷ դրդեաց⁸, եւ ապա Հոգին տկարութեանս⁹ մեր¹⁰ հասեալ ի թիկունս¹¹՝ առ Հայր բարեխաւսեաց [իմմտ. Հռոմ. Ը 26]:

Նախ Քրիստոս մահու խաչի հնազանդեալ [իմմտ. Փպ. Բ 8]՝ զթշնամութիւն յանձն իւր նահանջեաց [իմմտ. Եփ. Բ 16], եւ ապա եկեալ Հոգին՝ զերկրաւորքս ի հանդէս երկնայնոցն խառնեաց¹²:

Խորհո՛ւրդ լայն եւ ընդարձակ. առաւելութիւն¹³ գիտութեան¹⁴ Աստուծոյ տեսանի, եղբա՛րք¹⁵, զի լերինք են արդա-

¹ D + ի Տեռանէ

² D Աստուծոյ

³ CF + ձեզ | D գխաղաղութիւն

⁴ C + խաղաղութիւն

⁵ F + Ո՛վ մեծի տուրեւառութիւն շահի երկնայնոց եւ երկրայնոցս մերձաւորաց

⁶ C յՈրդոյն D յՈրդոյ

⁷ C քաղցրութիւնն

⁸ AD դրդուեաց

⁹ T տկարութեան

¹⁰ T մերոյ

¹¹ տկարութեանս մեր հասեալ ի թիկունս // D հասեալ ի թիկունս տկարութեան մերոյ եւ

¹² Եւ ապա Հոգին տկարութեանս մեր հասեալ ի թիկունս ... ի հանդէս երկնայնոցն խառնեաց // BCF Եւ ապա եկեալ Հոգին՝ Չերկրաւորքս ի հանդէս երկնայնոցն խառնեաց: Նախ Քրիստոս մահու խաչի հնազանդեալ՝ Չթշնամութիւն / C Չթշնամութիւնն յանձն իւր նահանջեաց / F նահանջեաց: Եւ ապա Հոգին տկարութեանս մեր հասեալ ի թիկունս՝ Առ Հայր բարեխաւսեաց | E Եւ ապա եկեալ Հոգին՝ Չերկրաւորքս ի հանդէս երկնայնոցն խառնեաց: Նախ Քրիստոս մահու խաչի հնազանդեալ՝ Չթշնամութիւն յանձն իւր նահանջեաց: Եւ ապա Հոգին հասեալ ի թիկունս տկարութեան մերոյ՝ Առ Հայր բարեխաւսեաց

¹³ C առաւել

¹⁴ E գիտութեան

¹⁵ տեսանի եղբարք // BCF եղբարք տեսանի

րութիւն¹ տորա, եւ իրաւունք² խորք բազումք³ [իմմտ. Սաղմ. ԼԵ 7]. որպէս⁴ վկայեաց մարգարէն:

Պաւղոս մաղթէ զայս իմաստից Հոգի աշակերտացն ընդունել [իմմտ. Եփ. Ա 17], որ հիացուցանէ զքննողս եւ յաճախէ զիղծս փափագանաց⁵, որ առ Աստուած [իմմտ. Եփ. Ա 17-19]:

Առ ի՞նչ մարմնասնալն⁶ Որդւոյ⁷, եւ վասն Է՞ր ընդ մարմնասնալն⁸ ոչ⁹ եղել¹⁰ փրկութիւն աշխարհի:

Ո՞ր աղագաւ անպարտականին խաչն նախատանաց, եւ ընդէ՞ր ո՛չ յետ այնորիկ մարդիկ¹¹ կատարեալք¹²:

Վասն Է՞ր ընդ Որդւոյ¹³ շրջեալ եւ բնակեալ աշակերտացն, եւ անիմաստ¹⁴ մնացեալ,

Եւ վասն¹⁵ ո՞ր պատճառի միայն ընդ իջանել¹⁶ Հոգւոյն¹⁷ այնքան¹⁸ շնորհիւ¹⁹ զարդարեալ²⁰ պսակեցան²¹:

1 B արդարութեան
2 BDFT իրաւունքն
3 BDF բազում
4 BDT + եւ
5 C փափաքանաց D փափագանացն
6 B մարդանալն
7 A Որդւոյն D Որդոյ
8 B մարդանալն
9 A որ
10 C եւ D էղել
11 D մարդիկք
12 T կատարեալ
13 BD Որդոյ
14 CF անիմաստք
15 C սակս
16 ընդ իջանել // BCDF յիջանել
17 D Հոգոյն
18 C այսքան
19 D շնորհաւք
20 C զարագեալք | D + մարդկան
21 C չիք D պայծառացան

Առ ի՞նչ¹ Քրիստոսի այլքան մեծամեծ² նշանալիքն ո՛չ զոք հաւանեցուցեալ³, եւ Պետրոսի⁴ յայսմ աւուր միով բարբառով զթիւ⁵ երից հազարացն աշակերտեալ [Գործք Բ 41]:

Չոր քննել արժան է⁶, եւ զգանձս⁷ իմաստութեանն Աստուծոյ շտեմարանս⁸ սրտից⁹ ամփոփել¹⁰, առ ի կարող¹¹ լինել նախ սրտիւ¹² հաւատալ յարդարութիւն¹³, եւ ապա բերաւով խոստովանել զփրկութիւն¹⁴ [իմմտ. Հռոմ. Ժ 10]:

Քանզի փրկագործութեանս յեղանակ ո՛չ է¹⁵ զաւրութեամբ, այլ իրաւամբք եւ արդարութեամբ, որպէս զի ընդ ամենակարող¹⁶ զաւրութեան¹⁷ Աստուծոյ եւ ամենաբաւական ողորմութիւնն¹⁸ յերկինս¹⁹ եւ յերկրի²⁰ հաստատեսցի²¹ [իմմտ. Եր. Թ 23-24, Ես. Ա 27]:

¹ C + հայի

² E չ/ք

³ B հասուցանել C հաւանեցուցանել

⁴ BDE Պետրոս | B + ի

⁵ C թիւ

⁶ արժան է // C է արժան

⁷ AD զգործս | D + աստուածային

⁸ CF ի շտեմարանս D յիշտեմարանս

⁹ D մտաց

¹⁰ A ամփոփեալ C անփոփել

¹¹ T կարող

¹² նախ սրտիւ // ACF սրտիւ նախ

¹³ CF յարդարութիւնն

¹⁴ BD ի փրկութիւն CF զփրկութիւնն

¹⁵ C չ/ք

¹⁶ CF ամենակար

¹⁷ AB զաւրութիւնն

¹⁸ AE ողորմութիւն C արդարութիւնն

¹⁹ D գերկինս

²⁰ C յերկիր D գերկիր

²¹ C հրատարակեսցի D հաստատեաց

Քանզի¹ այն², որ արար զմարդն ի պատկեր իւրոյ բարերարութեան³ բարի [հմմտ. Ծննդ. Ա 26-31], եւ ետես զնա ի նախանծուէ⁴ բանսարկուիւն դաւաճանեալ եւ մեռեալ, ըստ արդար⁵ իրաւանցն ո՛չ կամեցաւ զպատրանաւք ըմբռնեալն⁶ թողոյ ի ծեռս որսողին: Ասաց առ⁷ Բանն համագոյական⁸.

«Էջ, հաղորդեաց ընդ բնութիւնն⁹, զոր ստեղծաք ի բարի.

Մի՛ արդեաւք¹⁰ բնաւորապէս բոխե՛¹¹ զծուխ¹² չարութեանն, որ առաջի իմ բարոյի¹³:

Ծանի՛ր¹⁴, զի թե՛¹⁵ ըստ բնական կրիցն¹⁶ տկարանայ առ արէնս իմ,

Ամեղադրելի է ի պատուհասէն, զոր նա սահմանաւն¹⁷ ածէ¹⁸ ի վերայ նորին¹⁹:

Իսկ եթե՛ աստար ի բնութենէ, եւ եկամուտ ունի զայն²⁰ արկածք,

¹ C զի

² A + է

³ իւրոյ բարերարութեանն // D բարերարութեանն իւրոյ ET բարերարութեան իւրոյ

⁴ D նախանծուէ E նախանծու

⁵ F արդարութեան

⁶ C ըմպըռնեալն

⁷ T ընդ

⁸ ABC համագոյակ ED համագոյակից

⁹ D բնութեանս EFT բնութեանն

¹⁰ C արդիւք

¹¹ D բխե

¹² T զծուխս

¹³ B բարձի

¹⁴ D + զնա

¹⁵ C եթե

¹⁶ B չ/իք

¹⁷ B սահմանաւքն D սահմանաւ

¹⁸ B ած

¹⁹ D նորա

²⁰ C զայս

Չպատրոզն յանդիմանեալ դատապարտեա՛ եւ զնա ողորմութեամբ եւ գթութեամբ¹ ևորոգեա՛» [իմմտ. Ես. Խ 31, Եգ. ԼԶ 26, Սոփ. Գ 17, Հռ. ԺԲ 2, Բ Կորնթ. Դ 16, Փպ. Գ 21]:

Չայս պատուեր առեալ ի Հաւրէ Բանն² հաղորդեցաւ ընդ³ մարմինս⁴ եւ մարմինս⁵ խառնեցաւ⁶ ընդ Աստուծոյ. խառնումն անճառ եւ յատկութիւն եութեանցն անշփոթ, որպէս զի զսպառընթաց⁷ մարմնոյն անծամբ անծին փորձեալ⁸ ծանիցէ:

Եկաց նովաւ զամս երեսուն եւ ո՛չ խոնարհեցաւ⁹ ատար ի բնութենէն ի¹⁰ ներգործութիւնն¹¹: Եկն ի Յորդանան¹² նուիրել¹³ զամենակատար մաքրութիւնն Հաւր, եւ¹⁴ դաւանեցաւ¹⁵ ի Նմանէ¹⁶ հաւասարապատիւ Որդի¹⁷ սիրելի¹⁸ [իմմտ. Մատթ. Գ 17]:

Վարեցաւ ի Հոգւոյն¹⁹ առ²⁰ բանսարկու²¹ թշնամոյն²² ի մարտն²³ հանդիսի [իմմտ. Մատթ. Դ 1]

¹ D + քաւեալ | EF չիք եւ գթութեամբ

² D + Աստուած

³ B ի

⁴ A մարմինն C մարմին D մարմնոյ

⁵ D մարմինն

⁶ D խառնեալ միաւորեցաւ

⁷ CT սպառընթաց

⁸ D փրկեալ

⁹ DEFT հաղորդեցաւ

¹⁰ B չիք

¹¹ CEFT ներգործութիւնն

¹² F + եւ

¹³ ACF նուիրեալ

¹⁴ BCF չիք

¹⁵ F անուանեցաւ

¹⁶ D Հաւրէ

¹⁷ C + եւ

¹⁸ B + Եւ փառաբանակից Հաւր եւ Հոգւոյն ճշմարտի

¹⁹ BDE Հոգոյն

²⁰ D ընդ

²¹ առ բանսարկու // C առարկու

²² BC թշնամոյն

²³ AB մարդոյ C մարտ | ի մարտն // D ի մարտ մարդոյ E ի մարտոյ F մարդոյ

Եւ ծանեալ¹ զմեքենայս նետից աւծին թունաւորի²,
Որ պատրեր³ զսոսա⁴ ըստ բնութեանն⁵ աւրինի ի խոտո-
րումն մեղացն⁶ վիի:

Պահեաց ի կերակրոց⁷ հաւասար դասուց⁸ արդարոցն⁹
զնդի

Եւ թոյլ ետ մարմնոյն շարժել¹⁰ ըստ հարկաւորն իւր ըղծի:
Իսկ թշնամին առնթեր կացեալ սպասեր,
Եւ որչափ Նա¹¹ անձնիշխան կամաւք ի փափագ¹² կերակ-
րոցն ոչ ձգտեր¹³,

Եւ ոչ¹⁴ զմեքենայսն¹⁵ ձգել ի նպատակն ուժել¹⁶ ժպրիեր:
Եւ¹⁷ յորժամ շարժեցաւ¹⁸, զնետս սրեալս¹⁹ ի պատկանդա-
րանէն ձգել²⁰ ի Տէրն յուսացաւ:

1 A ծանեալ
2 A թոյնաւորի, B թինաւորի
3 E արար
4 D զմարդիկք
5 E բնութեան T բնութենէն
6 B աւրինացն
7 T կերակրոցն
8 C դասու
9 դասուց արդարոցն // D արդարոցն դասուց
10 A շարժեալ FT շարժիլ
11 A նախ
12 CT փափաք
13 ABCF ձկտէր
14 D + նա
15 D զմեքենայն
16 C ուժեղ
17 D բայց
18 D + Տէրն ի կերակուր, ապա եւ չարն
19 D սրեալ
20 A ձգեալ

«Հաց, - ասէ, - արա՛ գքարինսդ¹ զարուծեամբ քո², որ զայդչափ ժուժկալութիւն³ պահոց⁴ տոկացեր, եւ լեր արարիչ հակառակ Աստուծոյ»:

Եւ լուեալ⁵, եթէ⁶ «բանիւ Աստուծոյ⁷ կեայ⁸ մարդ, առաւել քան հացիւ է գրեալ»⁹, գրովք¹⁰ զնա հնարեր¹¹ գողանալ [իմմտ. Մատթ. Դ 3-7]:

Յայնժամ ծանեաւ զհաղբս, իսայտառակեաց զմեքենայսն, պատառեաց¹² զպարուրեալ թակարդն¹³, որով որսայր¹⁴ զմարդիկ¹⁵: Սեկնեաց¹⁶ առաջի Հաւր¹⁷ իւրոյ¹⁸ եւ հրեշտակաց¹⁹, եւ ինքնիշխանութեամբ²⁰ ի բաց վարեաց²¹ զպատրողն²² պատրած²³ բնութեանս արիւնաւք:

¹ C գքարինսն

² CD քով

³ E ժուժկալութիւնդ

⁴ E չիք

⁵ D պատասխանի

⁶ C թէ

⁷ D չիք

⁸ A կեա՛ | F + ամենայն

⁹ D + ասէ

¹⁰ D գրով

¹¹ զնա հնարեր // D հնարեր զնա

¹² CF չիք

¹³ E թակարթն

¹⁴ T սովոր էր որսալ

¹⁵ DE զմարդիկք

¹⁶ D մերկեաց

¹⁷ CF Հաւրն

¹⁸ C իւր

¹⁹ D սրբոց

²⁰ CD ինքնիշխանութեամբն

²¹ C + զպարտեալն

²² B զպատրաւդն C չիք

²³ CF պատրիչ

Մանուկն Դանիել արդար դատեցաւ դատաստան¹, յամալօ արար զծերսն չար² զպատրիչ³ մարդկութեան⁴, որ⁵ զմեղս իւրեանց սմա համբաւէին [տե՛ս և հմմտ. Դան. Ա(ԺԳ) 1-64]:

«Ա՛յ հնացեալ, – ասէ, – աւուրբք⁶ չարութեան, այժմ եկին հասին մեղք⁷ քո, զոր գործէիր յառաջագոյն, զի դատէիր դատաստան անիրաւութեան⁸ եւ զանմեղ բնութիւն⁹ մարդկան քեզ կցորդս¹⁰ դատապարտէիր [հմմտ. Դան. Ա(ԺԳ) 52-53]: Նախանձ քո չար պատրեաց զքեզ, եւ ախտ¹¹ մարդատեցութեան շրջեաց զսիրտ քո [հմմտ. Դան. Ա(ԺԳ) 56]: Այդպէս¹² խաբէիք զորդիս մարդկան, եւ¹³ նոքա առ երկիւղի հաւասարէին կամաց ձերոց, բայց ոչ եւ Որդի¹⁴ երկնաւոր Հարն կալաւ յանձին զանաւրէնութիւնս¹⁵ ձեր» [հմմտ Դան. Ա(ԺԳ) 57]:

Չայս ասելով եւ առ ոտն կոխելով զաւձն¹⁶ ծերացեալ՝ յայտ արար զառաջինն յաղթութիւն¹⁷ եւ զանմեղութիւն¹⁸ բնութեանս առաջի Հար¹⁹ իւրոյ²⁰ եւ հրեշտակաց:

¹ D + եւ

² D չ/ք F չարս

³ C զգրպարտիչ E զգրպարտող F զրպարտիչ | D + բնութեանս

⁴ B մանկութեանս CEFT մարդկութեանս D մարդկան

⁵ CDEFT որք

⁶ ասէ աւուրբք // C աւուրբք ասէ E աւուրք

⁷ D մեղքն

⁸ D անիրաւութեամբ

⁹ D բնութիւնս F բնութիւնն

¹⁰ F կցորդ

¹¹ D ախտն

¹² AT այսպէս

¹³ C չ/ք

¹⁴ C Որդին

¹⁵ D զանաւրէնութիւն

¹⁶ A զանձն

¹⁷ զառաջինն յաղթութիւն // CET զառաջին յաղթութիւնն

¹⁸ A զանմեղ

¹⁹ FT Հարն

²⁰ C իւր

Յայնժամ մատենան հրեշտակք¹, եւ պաշտեին² զնա հարկաւորաւքն [հմմտ. Մատթ. Դ 11], յորժամ յաղթեաց չարին բնաւորականաւքն, եւ արդարացեալ բնութեամբս³ տիրեաց ի վերայ դիւացն⁴ հակառակորդաց՝ զաւրաւորն բազկաւք:

Արդ՝ քանզի նա միայն⁵ գտաւ անփորձ ի չարեն⁶ եւ հաճոյ⁷ Աստուծոյ [Եբր. Դ 15], վասն այնորիկ⁸ սկսաւ կոչել զմարդիկ յապաշխարութիւն կենաց⁹ Արքայութեանն¹⁰ յուսով¹¹ [հմմտ. Մատթ. Դ 17]:

Իսկ նոքա՝ խաւարեալք ի պատրանաց¹², դժուարեին¹³ հետեւել¹⁴ կոչողին,

Եւ ծանրանայր սահեցելոցն յերկիր՝ նայել ընդ¹⁵ երկինս¹⁶.

Եւ պատրեալքն¹⁷ ի ցանկութիւն¹⁸ աշխարհիս¹⁹ ո՛չ ախորժեին²⁰ զփառս²¹ վերին²²,

¹ T հրեշտակքն
² BCDEF պաշտեցին
³ DT բնութիւնս
⁴ F չիք
⁵ C + արդար
⁶ E չարէ
⁷ D հաւասար
⁸ CT այսորիկ
⁹ C + եւ
¹⁰ D + Աստուծոյ
¹¹ C յուսոյ
¹² BEFT պատրանացն | D + բանսարկւին
¹³ D դժուարանային
¹⁴ A հետեւեալ
¹⁵ C ի
¹⁶ C յերկին
¹⁷ A պատրեալք
¹⁸ CD ցանկութիւնս
¹⁹ C աշխարհի D աշխարհին
²⁰ C + ստանալ
²¹ CF զփառսն
²² E վերինս

Եւ բռնութեամբ¹ ձգել² անմարթ Էր անծնիշխան զնոսա³
Ստեղծողին,

Եւ նշանաւք⁴ եւ վարդապետութեամբն⁵ սակաւք⁶ եկին⁷ ի
հաւանութիւն:

Ապա զի՞նչ առներ, ո՛վ սքանչելեացս⁸, քանզի պատժոց
պարտական էին մարդիկ⁹, եւ պարտ Էր զպատիժն հատուցա-
նել, եւ ապա յարդարութենէն Աստուծոյ ողորմութեան արժանի
գտանել¹⁰:

Նա, որ անպարտական¹¹ գտաւ առաջի Հաւր իւրոյ¹², ի
գործ արկեալ զբազմապատիկ իմաստութիւնն¹³ իւր¹⁴, մեռաւ
պարտականացս ամենեցուն փոխանակ, եւ ջնջեալ պատա-
ռեաց զձեռագիր մերոց յանցանաց¹⁵ [հմմտ. Կող. Բ 14]:

Էջ ի դժոխս, որում ոչ Էր հնար ըմբռնիլ¹⁶ ի մահուանէ, եւ
արձակեաց զմեռեալսն¹⁷ [հմմտ. Ա Պետ. Գ 18-19]: Եկն առ
կենդանիսն¹⁸ նոյն ինքն եւ հաստատեաց զնոսա¹⁹. Եւ զորս
յանցանաւքն Ադամայ ի ներքոյ էին դատապարտութեան մա-

¹ B բնութեամբ

² A նգել

³ CF գոսսա D գնա

⁴ DF նշանաւք

⁵ BF վարդապետութեամբ D վարդապետական քարոզութեամբն

⁶ CF + ոմանք

⁷ A էին

⁸ F սքանչելեացն

⁹ DE մարդիկք

¹⁰ B գտանիլ

¹¹ C անպարտական

¹² CF չ/իք | DT + եւ հրեշտակաց

¹³ AF իմաստութիւն

¹⁴ BCF չ/իք

¹⁵ մերոց յանցանաց // A յանցանաց մերոց C սոցին հանցանաց DEFT մերոյ
յանցանաց

¹⁶ C ըմպռնիլ

¹⁷ C զմեռեալս | E չ/իք եւ արձակեաց զմեռեալսն

¹⁸ BEFT կենդանիս

¹⁹ C գոսսա

հու, շնորհաւք անմեղութեան իւրոյ վերածեաց¹ յարդարութիւն² կենաց եւ³ յերկիրն կենդանեաց⁴:

Քանզի այսպէս իմանամք ի Պաւղոսէ յայտնեալ զմեծ խորհուրդն⁵ աստուածպաշտութեան, որ երեւեցաւ⁶ մարմնով, արդարացաւ հոգով⁷, յայտնեցաւ հրեշտակաց, քարոզեցաւ ի հեթանոսս⁸, հաւատարիմ եղեւ⁹ յաշխարհի, եւ համբարձաւ¹⁰ փառաւք [Ա Տիմ. Գ 16]:

Եւ մտեալ ի ներքին կողմն վարագուրին՝ [իմմտ. Եբր. Զ 19-20] ընծայեաց պատարագ Հաւր՝ քահանայն մեծ զպատուականն¹¹ իւր արիւն¹² [Եբր. Թ 11-12]:

Ծանոյց եւ զդաւաճանողին պատրանս¹³, եւ բարեխաւսեր առնել զխաղաղութիւն ընդ մարդկան:

¹ B վերածնեաց

² E յարդարութիւնն

³ B ի

⁴ D չ/չք եւ յերկիրն կենդանեաց | T պարգեւաց

⁵ C խորհուրդ

⁶ D էրեւեցան

⁷ CD հոգով

⁸ C չ/չք քարոզեցաւ ի հեթանոսս

⁹ D եղեւ

¹⁰ C վերացաւ

¹¹ CT զպատուական

¹² իւր արիւն // C արիւնն իւր T իւր արիւնն

¹³ B զպատրանս DE պատրանսն

Իսկ Հայրն բարի¹, հաճեալ ընդ² գործս³ սքանչելի⁴ Որդւոյն սիրելոյ⁵ եւ լուծեալ զկնիք⁶ դատապարտութեան⁷ Ադամայ⁸ հարն նախնոյ⁹,

Ետ ի նա զՀոգին՝ սփռեալ¹⁰ ի վերայ արեամբ զնեալ իւր հաւտին,

Եւ լուսաւորել¹¹ զհայեցուածս մտաց¹² ի յոյսն վերին¹³:

Յայնժամ առեալ Միածինն¹⁴ զՄիսիթարիչն¹⁵ ցաւղեալ¹⁶ ի Սաղիմ եւ ձիւնացոյց ի նմա¹⁷ զգումարեալ թագաւորս¹⁸ ըստ նախագուշակ երգողին [Սաղմ. ԿԷ 15]:

Որ եկն¹⁹ եւ²⁰ բնակեցաւ²¹ ի սիրտս մեր²² եւ լուսաւոր արար զլայնութիւն²³ եւ զերկայնութիւն²⁴ առաւելութեան²⁵ սիրոյն Քրիստոսի [իմմտ. Եփ. Գ 18-19]:

¹ C չիք

² C ի

³ CEF գործ

⁴ գործս սքանչելի // B սքանչելի գործ

⁵ C սիրելոյն D Միածնի

⁶ D չիք

⁷ զկնիք դատապարտութեան // C զդատապարտութեան կնիք D զդատապարտութիւն F զդատապարտութեան կնիքն

⁸ CF չիք | D մարն Եւայի

⁹ D չիք հարն նախնոյ | E նախնոյ F նախնոյն

¹⁰ CDFT սփռել

¹¹ D լուսաւոր առնել

¹² D + մարդկան

¹³ C + եւ

¹⁴ C Միածնին | D սիրելի Որդին

¹⁵ D զՄիսիթարիչ Մուրք Հոգին

¹⁶ CD ցողեաց T ցաւղել

¹⁷ T նա

¹⁸ C թագաւորն DEFT թագաւորսն

¹⁹ AB էրն

²⁰ C չիք

²¹ F բնակեաց

²² D նոցին ET նոցա

²³ T զլայնութիւնն

²⁴ BF երկայնութիւն

²⁵ B չիք | D + զիտութեան

Եւ զի շնորի Էր ձրի¹ փոխանակ մահուն Քրիստոսի, յա-
նագս² այսորիկ³ հաւասարապէս⁴ յարժանաւորս եւ յանար-
ժանս տարածանի:

Ուստի եւ ի միոյ⁵ բարբառոյն⁶ Պետրոսի անծինք⁷ երեք հա-
զարք⁸ այսար աշակերտի⁹ [Գործք. Բ 41]:

Ապա յիրաւի վկայեաց բանն սքանչելի գոլ¹⁰ զշնորի¹¹
աւուրս մեծի:

Ձի որպէս քան զսերմանելն ժողովելն¹² Է¹³ ախորժելի,
Այնպէս¹⁴ ամենայն սերմանց¹⁵ խորհրդոյն¹⁶ Քրիստոսի¹⁷
պտուղն ի¹⁸ յայսմ¹⁹ աւուր²⁰ կթի:

Այս Է Հոգին Սուրբ²¹, որում վկայեաց ինքն²² ուսուցանել
մեզ եւ յիշեցուցանել²³ զամենայն առ ի²⁴ յինքենէ ասա-
ցեալսն²⁵ [հմմտ. Յովհ. ԺԴ 26]:

¹ D չիք

² BD վասն

³ BT այնորիկ

⁴ CF հաւասար

⁵ CF մի

⁶ C բարբառն

⁷ C անծինս

⁸ BE հազար C հազարս D հազարացն

⁹ T աշակերտին

¹⁰ վկայեաց բանն սքանչելի գոլ // C սքանչելի վկայեաց գոլ բանն

¹¹ A զշնորին E զշնորիս

¹² A չիք

¹³ F չիք

¹⁴ CE այսպէս T նոյնպէս եւ

¹⁵ A սերմանք

¹⁶ CDE խորհրդոցն

¹⁷ խորհրդոյն Քրիստոսի // T Քրիստոսի խորհրդոյն

¹⁸ CD չիք

¹⁹ A յայս

²⁰ պտուղն ի յայսմ աւուր // T ի յայսմ աւուր պտուղն

²¹ E չիք

²² D Բանն | վկայեաց ինքն // ET ինքն վկայեաց

²³ ուսուցանել մեզ, եւ յիշեցուցանել // D յիշեցուցանել եւ ուսուցանել

²⁴ BDEF չիք

²⁵ E ասացեալն

Այս ցաղը քաղցրութեան զուարթացոյց¹ զբոյսս բանիցն Քրիստոսի [իմմտ. Չաք. Ը 12], եւ արհեսեալ պսակեաց զամս² տնարիւնական³ իւր գործոց⁴ [իմմտ. Ես. ԿԼ 1-2]: Վասն որոյ աղաղակե եկեղեցի. «Չմեռն էանց⁵. այգիք մեր ծաղկեցին⁶ եւ տունն զհոտ⁷» [իմմտ. Երգ Բ 11-12]:

Յայսմ⁸ առաւատու հայեցաւ Հայրն երկնաւոր⁹ ի¹⁰ յերկիր¹¹, արբեցոյց¹² զսա յորդառատ գետով¹³ Սուրբ Հոգւոյն¹⁴ [իմմտ. Յովհ. Է 38] եւ փթթեալ ծաղկեցոյց զանազան¹⁵ բոյսս¹⁶ առաքիւնութեան¹⁷ ի բազմապատիկ տնկոց արմատոց [իմմտ. Եգ. ԽԷ 12], որպէս ասէ¹⁸ մարգարէն¹⁹:

Ահա ծիր, որ ոչ չափի, եւ պարգեւ²⁰, որ²¹ ո՛չ²² կշիռ գործոյ²³ զուգակցի²⁴:

¹ D զուարթացեալ դալարացոյց

² C գամ

³ CF տնարիւնականն

⁴ իւր գործոց // D գործոցն Յիսուսի T գործոցն

⁵ C անց

⁶ DFT ծաղկեցան

⁷ D զհոտս իւրեանց | T + անոյշ

⁸ C + աւուր

⁹ Հայրն երկնաւոր // C երկնաւոր Հայրն

¹⁰ CEF չ/ք

¹¹ D + եւ

¹² CDET արբոյց

¹³ C գետովն D վտակաւք

¹⁴ BD Հոգոյն C Հոգւովն

¹⁵ BDEF զզանազան

¹⁶ E բոյս

¹⁷ D + սորա

¹⁸ DT եւ վկայեաց

¹⁹ Ի բազմապատիկ տնկոց արմատոց, Որպէս ասէ մարգարէն // C Որպէս ասէ մարգարէն. Ի բազմապատիկ տնկոց արմատոց

²⁰ F պարգեւք

²¹ DET որոյ

²² B + ի

²³ CF կշիռ գործոց

²⁴ C զուգակցից

Ահա տուր¹, որոյ իսկութիւն² բնութեան³ ո՛չ պարփակի,
Եւ շնորհ, որոյ⁴ ո՛չ⁵ գեղումն գերագանց մտաց սահմանի:
Ահա⁶ ողորմութիւն առատ, որ⁷ ամենայն թագաւորութիւն
աշխարհի⁸ հաւասարեալ⁹ փոքր գտանի,
Եւ մխիթարութիւն, որոյ ո՛չ ուրախութիւն մարմնաւոր¹⁰ լծոր-
դի:
Քանզի ո՞ր ոք կարաց ընդ տիրելն աշխարհի եւ զանապա-
կանութիւն ստանալ¹¹,
Կամ որո՞ւմ թագաւորի եղել ձեռնարկելի¹² զմահ ի կեանս
փոխել¹³,
Կամ ո՞ր երանութիւն մարմնաւոր կարաց զկեանս¹⁴ յաւի-
տենական¹⁵ ընդգրկել¹⁶:

¹ DE տուրք

² C իսկ

³ իսկութիւն բնութեան // F բնութիւնն իսկ

⁴ ABC որ

⁵ DEF չ/ք

⁶ CF այս է

⁷ CD որոյ

⁸ DET աշխարհիս

⁹ A հաւասարիլ D հաւասարել

¹⁰ BF + զբաղմանց | C մարմնոյ

¹¹ CD + եւ

¹² F ձեռն արկանելի

¹³ AB փոխել | եղել ձեռնարկելի զմահ ի կեանս փոխել // D զմահ ի կեանս
փոխել էղել ձեռնարկելի

¹⁴ B զկեանսն

¹⁵ BEFT յաւիտենականս

¹⁶ B ընդ գրել

Իսկ նա¹ յիջանելն այսար ի վերայ դասուց² առաքելոցն³,
զարացոյց զբազուկս նոցա զայսոսիկ հանուրց⁴ տիեզերաց⁵
բաշխել⁶:

Քանզի⁷ սովաւ նոցա առլցեալ⁸ ստուերաւ զհիւանդս
բժշկեցին⁹ [հմմտ. Գործք Ե 15], թաշկինակաւ զցաւս փարա-
տեցին [հմմտ. Գործք ԺԹ 11-12], ձեռաւք¹⁰ զվեռեալս յարու-
ցին¹¹ [հմմտ. Գործք Ի 9-10], զկաղս¹² զնացուցին [հմմտ.
Գործք Գ 1-9], զկոյրս¹³ լուսաւորեցին [հմմտ. Գործք Թ 3-18],
առաւել զհոգւոց¹⁴ աչս, քան թէ¹⁵ զմարմնոց¹⁶, յերկինս հրա-
ւիրեցին¹⁷, անվախճան¹⁸ փառացն¹⁹ ժառանգաւոր²⁰ զմար-
դիկ²¹ արարին:

¹ BCDF սա

² C + սրբոց

³ դասուց առաքելոցն // F առաքելոցն դասուց սրբոց

⁴ CF հանուր E հանուրցս D ի վերայ

⁵ BCFT տիեզերացս

⁶ A բաշխելն B բաշխեալ F բաշխելով

⁷ C զի

⁸ նոցա առլցեալ // F առլցեալ նոցա

⁹ E բժշկէին

¹⁰ CEF ձեռամք

¹¹ C կանկնեցին F կանգնեցին

¹² D բանիւ զկաղսն

¹³ D զկոյրսն

¹⁴ CD զհոգոց

¹⁵ C եթէ

¹⁶ A զմարմնոյ B մարմնոց | D + բացին եւ

¹⁷ C + եւ

¹⁸ F անվաղճան

¹⁹ B կենացն D փառաց | F + զամենեսին

²⁰ A ժառանկաւոր C ժառանկաւորս F ժառանգաւորս T ժառանգորդս

²¹ CF չիք | ժառանգաւոր զմարդիկ // D զմարդիկ ժառանգաւորս E զմարդիկ
ժառանգորդս

Ահա ապա¹ յայտ եղել, եթե² ո՛չ ինչ յերկրաւորացս երկնայ-
նոց³ տրիցն⁴ գտաւ զուգահաւասար: Որ ո՛չ միայն ի⁵ բանակա-
նացս⁶ եղել ազգ սմա⁷ ներընդունակ⁸, այլ եւ անշունչ տարերք
գեր⁹ մարդկան գտան¹⁰ սովաւ զաւրացեալք: Որ եւ¹¹ նոյն¹²
ինքն յիջանելն՝ նախ գտունն¹³ ելից սքանչելապէս, եւ ապա
հանգեաւ¹⁴ ի նոսա¹⁵ սիրողապէս:

Քանզի ասէ. «Եւ¹⁶ ի կատարել¹⁷ աւուրցն Պենտէկոս-
տից¹⁸՝ էին միաբան ամենեքեան¹⁹ ի միասին: Եւ²⁰ եղել²¹ յան-
կարծակի հնչին յերկնից՝ եկեալ իբրեւ սաստիկ հողմոյ, եւ
ելից զամենայն տունն²² յորում²³ նստէին: Եւ երեւեցան²⁴ նո-
ցա բաժանեալ լեզուք իբրեւ ի հրոյ, եւ նստաւ իւրաքանչիւր²⁵

¹ D չիք

² D որ F թէ

³ A երկնայնոցն

⁴ F տրից

⁵ DEF չիք

⁶ A բանակացս CF բանականաց D բանականս

⁷ եղել ազգ սմա // D ազգ մարդկան եղել նմա E ազգ եղել սմա F ազգս եղել սմա

⁸ B ընդունակ

⁹ DT + ի վերոյ

¹⁰ C գտայն | մարդկան գտան // D գտան մարդկան

¹¹ C չիք

¹² A գնոյն

¹³ C գանունն

¹⁴ BF + յորս նստէին C + որս նստէին

¹⁵ BF նմա C նա

¹⁶ F չիք

¹⁷ B կատարեալ

¹⁸ ABT Պենտէկոստից C Պենդէկոստիցն D Պենդակոստից E Պեն-
դէկոստիցն F Պենտակոստից

¹⁹ BCET ամենեքին | միաբան ամենեքեան // DF ամենեքեան միաբան

²⁰ A չիք

²¹ C չիք D եղել

²² A տուն | զամենայն տունն // E գտունն ամենայն

²³ C որում

²⁴ A երեւեցաւ D էրեւեցան

²⁵ A չիք D յիւրաքանչիւր

ի վերայ ևոցա: Եւ լցան ամենեքին¹ Հոգւով² Սրբով, եւ սկսան խաւսել յայլ եւ այլ³ լեզուա, որպէս եւ Հոգին տայր ևոցա բարբառել⁴» [հմմտ. Գործք Բ 1-4]:

«Միաբան էին⁵ ի միասին»՝ ասէ, որպէս զի ցուցցէ, եթե⁶ ո՛չ երկոտասանք⁷ միայն, այլեւ Աստուածածին Կոյսն ընդ ևոսա՝ հանդերձ կանամբքն⁸, որք⁹ պաշտէին զՅիսուս ի Գալիլեա¹⁰ եւ տեսաւոր¹¹ եղեն¹² յարութեանն: Ընդ որս¹³ եւ եաւթանասնիցն զունդք¹⁴ հանդերձ ամենայն ծանաւթիւքն¹⁵:

Արդ¹⁶, եկն ի վերայ ևոցա¹⁷ Հոգին Սուրբ ըստ նախ խոստմանն¹⁸ Քրիստոսի, որ ասաց¹⁹. «Ահա ես առաքեմ զաւետիս Հաւր իմոյ ի ձեզ, եւ դուք նստարուք ի քաղաքիդ Երուսաղէմ²⁰, մինչեւ զգենուցուք²¹ զաւրութիւն²² ի բարձանց²³» [հմմտ. Գործք Ա 4]:

¹ DFT ամենեքեան

² A Հոգւովն CD Հոգով

³ C այլեայլ

⁴ նոցա բարբառել // BF բարբառել նոցա C նոցա բարբառել

⁵ DT + ամենեքեան

⁶ DF թէ

⁷ C երկոյտասանքն DFT երկոտասանքն

⁸ E կանամբք

⁹ BD որ

¹⁰ C Գալիլիեա D Գալիլէ T Գալիլեայ | E չ/ք պաշտէին զՅիսուս ի Գալիլեա

¹¹ C տեսաւորն DT տեսողք

¹² B էին

¹³ B որ

¹⁴ CF զունդ | եաւթանասնիցն զունդք // D զունդն եաւթանասնիցն

¹⁵ BT ծանաւթիւք

¹⁶ D եւ

¹⁷ CF սոցա

¹⁸ նախ խոստմանն // D յառաջ խոստանալոյն F նախախոստմանն

¹⁹ D ասացն

²⁰ CD յԵրուսաղէմ

²¹ C սգենուցուք

²² A զգաւրութիւն

²³ F բարձունս

Եւ¹ հնչիւն որոտման² հողմոյ³ եհար⁴, որով ցուցաներ⁵ զառաւելութիւն⁶ հեղմանն⁷: Ղարծեալ զի եւ ևոյն Հոգի⁸ էր, որ յիսկզբանն⁹ շրջէր ի վերայ ջուրցն¹⁰ [հմմտ. Ծննդ. Ա 2], ելից զտունն ընդ իմանալի զաւրութեանն¹¹, եւ զգալի¹² տեսակ հրոյ¹³ ի սքանչացումն¹⁴ տղայաբարոյիցն¹⁵:

Եւ ապա բաժանեցաւ¹⁶ ի հրոյն յայնմանէ լեզուք, եւ հանգեաւ ի վերայ իւրաքանչիւր ումեք¹⁷ ի ևոցանէ, որով ևշանակէր զպարգեւս¹⁸ շնորհի այլատարազ լեզուախաւսութեանն¹⁹:

Ուստի եւ ընդ հանգչելն²⁰ ի վերայ ևոցա զգալի²¹ մարմնոյն²² զգայարանացս²³ տեսանելի լեզուքն²⁴ հրեղէնք, Սիտք

¹ D + էղեւ

² D սաստիկ

³ C հողմէ

⁴ D ասէ

⁵ CD ցուցանէ

⁶ C զառատութիւն

⁷ B + ի վերայ նոցա

⁸ C Հոգին

⁹ A յիսկզբան C իսկզբանն T ի սկզբան

¹⁰ C ջուրց

¹¹ C զաւրութեան

¹² B զգալի | C սգալի

¹³ T հրոյն

¹⁴ E սքանչումն

¹⁵ AB տղայաբարոյիցն

¹⁶ D բաժանեցան

¹⁷ C ուրուք

¹⁸ C զպարգեւ

¹⁹ B լեզուս իաւսութեանն E լեզուախաւսութիւն

²⁰ A հանկչելն

²¹ ABC սգալի

²² C մարմնոցն D մարմնոց

²³ ABC սգայարանացս T զգայարանաց

²⁴ A լեզուք

նոցա իմանալի զարութեամբն¹ իմաստնացեալք² սկսան³ յայլատարագ խաւսս⁴ զլեզունս⁵ շարժել:

Ըստ⁶ որում⁷ ասէ. «Խաւսէին յայլ եւ յայլ⁸ լեզուս, որպէս եւ Հոգին տայր նոցա բարբառել»⁹ [հմմտ. Գործք Բ 1-4]:

Ո՛չ եթէ¹⁰ վասն զի լեզուացն շնորհի նախամեծարեր¹¹ [հմմտ. Ա Կորնթ ժԴ 1-39], այլ քանզի առընթեր ո՛չ գոյր այլ նշանակ, զշնորհն՝ որով զարացան¹² հրատարակել¹³:

Իսկ այլատարագս¹⁴ խաւսելով¹⁵՝ զբովանդակ¹⁶ ամբոխ քաղաքին ած ի վերայ նոցա հիացեալ¹⁷, ըստ¹⁸ որում եւ¹⁹ ասէ. «Եկն միաբան²⁰ բազմութիւնն²¹ եւ խոնեցաւ, եւ²² սքանչանալին ամենեքեան²³ զարմացեալք» [հմմտ. Գործք Բ 6-7], եւ

1 T զարութեամբ
2 AC իմաստնացեալ
3 ABCF սկսաւ
4 C խաւս E խաւսսն
5 D զլեզունս նոցա
6 A ընդ
7 D + եւ
8 DET յայլեւայլ | C չիք եւ յայլ
9 նոցա բարբառել // BC բարբառել նոցա
10 C թէ
11 T նախամեծար էր
12 D զարացան
13 A հրատարակեալ
14 A այլագս
15 CF խաւսել
16 C զբովանտակ
17 D հիացմամբ
18 B ընդ
19 AEF չիք
20 T + ամենայն
21 E բազմութիւնն
22 E չիք
23 A ամենեքին

այլք¹ վասն սքանչելի այլափոխմանն ընդ խաղ արկեալ² ասէին, թէ³ «արբեալք իցեն⁴» [հմմտ. Գործք Բ 13]:

Արդ՝ վասն ամենեցուն այսպէս⁵ գիտելի լինելոյ շնորհիս, ո՛չ ներգործեաց ի նոսա⁶ Հոգին ընդ իջանելն՝ զնոստումն Քրիստոսի, այլ զլեզուան⁷: Չի ևս ոչ ասաց՝ եթէ⁸ «ի լեզուս խաւսիք Հոգուովն⁹», այլ՝ թէ¹⁰ «ուսուսցէ ձեզ¹¹, եւ յիշեցուսցէ ձեզ¹² զամենայն, զոր¹³ ինչ¹⁴ ասացի ձեզ¹⁵» [հմմտ. Յովհ. ԺԴ 26]:

Որք թէ¹⁶ զայս¹⁷ առեալ էին ի սկզբանն¹⁸, ոչ այնպէս ամբոխեալ¹⁹ էին եւ զբազմութիւնն²⁰ ի նշաւակ տեսութեան²¹ իւրեանց այլատարազ խաւսիւքն ձգեալ²²: Վասն²³ որոյ ամենիմաստն²⁴ ևս իս որպէս զմանկունս ի խնճոյս²⁵ խաղուց՝ զարմաւալի փոփոխմամբ²⁶ շփոթեաց զնոսա:

¹ AD այլքն

² AET *չ/ք* ընդ խաղ արկեալ

³ B եթէ

⁴ BC են

⁵ A այնպէս

⁶ B նոսին

⁷ C զլեզուս F զլեզուն | D + միայն

⁸ C *չ/ք* D թէ

⁹ D խաւսիցիք Հոգովն

¹⁰ AET եթէ

¹¹ E զձեզ | F + զամենայն

¹² CE *չ/ք*

¹³ C որ

¹⁴ C + ես

¹⁵ C *չ/ք* | զոր ինչ ասացի ձեզ // D առ ի յինքենէ ասացեալսն

¹⁶ DE եթէ | որք թէ // T այլ արդ՝ եթէ

¹⁷ DE *չ/ք* զայս

¹⁸ DEF յիսկզբանն

¹⁹ C ամպոխեալ

²⁰ D զբազմութիւն + ամբոխին

²¹ C տեսութեանցն | EF տեսութեանն

²² BEFT ձգել

²³ C սակս

²⁴ B ամեն իմաստն | D ամենիմաստ + Հոգին Աստուած

²⁵ BDEFT խնջոյս

²⁶ B փոխմամբն CDE փոփոխմամբն

«Չի որք երեկ¹ եւ այսար արք գալիլեացիք²՝ գռեհիկք եւ շի-
նականք ահա, – ասեն, – իբրեւ³ զհմաստուն⁴ հելլենացիս⁵
ճարտարաբանեն, եւ այլք⁶ ի պարթեական տարաշխարհիկ
բարբառ⁷ ևոցա պատասխանեն:

Պետրոս, որ ի Կափառնաում⁸ սնեալ⁹ [հմմտ. Մատթ. Ը 14,
ԺԷ 23-26], լսեմք¹⁰, զի¹¹ ընդ հռովմայեցոց¹² լեզուն¹³ խորիս-
տալով¹⁴ արշաւէ:

Եւ Փիլիպպոս, որ ի Բեթսայիդա¹⁵ գալիլեացոց¹⁶ [հմմտ.
Յովհ. Ա 44]¹⁷ արաբացոց¹⁷ բարբառովն¹⁸ զխաւսս իւր յաղէ:

Յովհաննէս¹⁹, որ ի Նազարեթ²⁰ սնեալ²¹՝ զհա՞րդ կիլիկեց-
ոց²² ձայնիւն²³ ցմեզ²⁴ հարցանէ»:

¹ E երեկ

² D գալիլեացիք F գալիլիացիք

³ ասեն իբրեւ // A իբրեւ ասեն

⁴ C զհմաստունս

⁵ D + եւ

⁶ C այլ

⁷ C բարբառ

⁸ AF Կափառնաումն DE Կափառնաում

⁹ BCF ծնեալ (Պետրոս առաքյալը ծնվել է Բեթսայիդա քաղաքում (տե՛ս Համաբարբառ Յայսմաւուրք (Նախածերենցյան 6 խմբագրությունների), 2 - Յունիս, աշխ.՝ Ս. Ապրեսյանի, Ս. Էջմիածին, 2011, էջ 291), իսկ «սնեալ» ընթերցման համար կարող է հիմք ծառայել Մատթ. ԺԷ 23-26):

¹⁰ E լսեմ

¹¹ C չիք

¹² A հռոմայեցոցն | C հռոմայեցոց | DE հռոմայեցոց | F հռովմայեցի

¹³ A չիք BE լեզուն

¹⁴ A խրախտալով

¹⁵ A Բեթսայիդեա C Բեդսայիդա F Բեթսայիդայ

¹⁶ B սնեալ D գալիլեացոց CF չիք

¹⁷ AB Արաբացոց

¹⁸ D լեզուան

¹⁹ BT Յոհաննէս

²⁰ ABCF Նազարեթ

²¹ E + է

²² AE կիլիկեցոց BD կիլիկեցոց

²³ C + ընդ

²⁴ ET զմեզ

Եւ¹ Թովմասու² սոքա լսեն, որ յերթվացոց³ լեզուն զմարգարեից բանս⁴ յիշեցուցանէ⁵:

«Թաղեուն այն տիմար⁶ տեսէ՞ք, ո՛րքան վայելուչ⁷ Սեծաց⁸ Հայոց բառիւք⁹ զբանս¹⁰ իւր ասէ¹¹:

Եւ Բարդղղիմէուն¹² մանուկ՝ իբր թէ ի¹³ մարս ծնեալ՝ զնոցին¹⁴ խաւսս¹⁵ հնչեցուցանէ¹⁶»:

Ո՛վ սքանչելեացս. Ի զանազան գաւառս¹⁷ ծնաք¹⁸, եւ աշխատութեամբ¹⁹ զբարբառս²⁰ նոցին²¹ վարժեցաք: Եւ ահա սո-

¹ C չ/ք

² DE Թովմասու

³ C յերթվացիոց

⁴ զմարգարեից բանս // BD զմարգարեին բանսն C զմարգարեիցն բանս E զմարգարեիցն զբանսն F զմարգարեին բանս T զբանս մարգարեից

⁵ D քարոզէ

⁶ C ախմար

⁷ D վայելուչ | ABF + ի

⁸ E չ/ք

⁹ B բառիւք

¹⁰ C զբանսն

¹¹ T յառէ

¹² AT Բարդղղոմէոս B Բարդղղովմէոսն C Բարթաղոմէոսն F Բարթողովմէոս

¹³ թէ ի // F եթէ

¹⁴ C նոցին եւ

¹⁵ BF խաւսս C զխաւսս D խաւսն

¹⁶ CF հնչէ

¹⁷ E քաղաքս

¹⁸ F ծնեալք

¹⁹ DT + ի

²⁰ DT բարբառս F զբառս

²¹ E նոցա | զբարբառս նոցին // B զնոցին բարբառս

քա¹, որք² ո՛չ տեսին զայն քաղաքս³, անաշխատ⁴ զնոցին ծայնս⁵ հնչեմ⁶:

«Մեծ է, – ասեն⁷, – արուեստ սքանչելեացս, եւ թէ առ ի՞նչ ունի աւարտել⁸ ո՛չ կարեմք նկատել⁹»:

Յայնժամ յարուցեալ Պետրոս հանդերձ մետասանեալքն¹⁰ համբարձ¹¹ զծայն իւր¹² եւ սկսաւ տարակուսանացն¹³ լուծումն շնորհել [իմմտ. Գործք Բ 14-39]:

«Արք հրեաստանեայք¹⁴, եւ ամենեքին¹⁵, որ բնակեալ¹⁶ էք յերուսաղէմ¹⁷, այս ձեզ յայտնի լիցի, եւ ո՛նկն դիք բանից իմոց:

Ո՛չ է արբեցութիւնս այս զինոյ¹⁸ [Գործք Բ 15] յերեք ժամ¹⁹ աւուրս, որպէս²⁰ դուք կարծէք²¹, այլ բաժակ է բերկրութեան, եւ²² առհաւատչեայ անապականութեան²³, մարգարէիւք²⁴

¹ T սոքին

² B որ

³ A քաղաք D քաղաքսն

⁴ D + եւ անտարակոյս

⁵ զնոցին ձայնս // C զծայնս նոցին E զծայնս նոցա

⁶ D + եւ զնոցին լեզուսն բարբառեն

⁷ A չիք

⁸ A չիք E կատարել

⁹ D ասել

¹⁰ BCT մետասանիւքն E մետասանաւքն

¹¹ BCF ամբարձ

¹² A չիք F զծայնս | D չիք համբարձ զծայն իւր

¹³ B տարակուսանաց C զտարակուսանացն

¹⁴ AE հրեաստանեայք BC հրեաստանայք | D + ասէ

¹⁵ C ամենիքեան EF ամենեքեան D չիք

¹⁶ D բնակեալի

¹⁷ D + ամենեքեան

¹⁸ BCT զինոյ D ի զինոյ

¹⁹ DT ժամու

²⁰ D + եւ

²¹ AET չիք որպէս դուք կարծէք

²² T չիք

²³ F անապականութիւն

²⁴ T մարգարէիւք

նախագուշակեալ¹, եւ յայսմ աւուր² խորհուրդն ի լրումն աւարտեալ³:

Ո՛վ արեւսուսոյցք, եւ մարգարեիցն⁴ աշակերտք, այս այն է ի Յովելեայ ասացեալն⁵ [իմմտ. Յովէլ Բ 28], զոր միշտ ընթեռնոյք⁶ կատարեցաւ, քանզի ահա⁷ յաւուրս յետինս եհեղ Աստուած յՈգոյ իւրմէ⁸ ի վերայ զանազան հասակաց մարմաւորացս⁹, եւ մարգարեանամք:

Այս¹⁰ Յիսուս Նագովրեցի¹¹ որ¹² առ ձեզ երեւեցաւ¹³ նշանաւք եւ արուեստիւք, եւ¹⁴ տարապարտ խաչեցաւ, ել յերկինս՝ եւ¹⁵ նստաւ ընդ աջմէ¹⁶ Աստուծոյ, եւ զայս պարգեւս¹⁷ Հոգւոյն¹⁸ Սրբոյ ընկալեալ ի Հաւրէ՝ ի վերայ մեր սփռեաց¹⁹ [իմմտ. Գործք Ա 6-9]:

¹ A նախագուշակ

² յայսմ աւուր // T ապա

³ DT եկեալ

⁴ T մարգարեից

⁵ ի Յովելեայ ասացեալն // C ի Յովելէ ասացեալ D ասացեալն Յովելեայ մարգարէէ

⁶ DEFT ընթեռնոյք | D + դոյք ահա

⁷ DE չ/ք

⁸ եհեղ Աստուած յՈգոյ (D յՈգոյ) իւրմէ // C եհեղ յՈգոյ իւր Աստուած F եհեղ յՈգոյ իւրմէ Աստուած

⁹ T մարմնաւորաց

¹⁰ BCD այն

¹¹ A Նագարեցի B Նագարեցի CF Նագովրացի DE Նագարացի

¹² D յորժամ

¹³ առ ձեզ երեւեցաւ // D երեւեցաւ առ ձեզ E երեւեցաւ ձեզ T երեւեցաւ առ ձեզ

¹⁴ D + ի ձենջ

¹⁵ C չ/ք

¹⁶ C + Հաւր

¹⁷ E պատուէրս

¹⁸ C Հոգոյս

¹⁹ Հոգւոյն Սրբոյ ընկալեալ ի Հաւրէ՝ ի վերայ մեր սփռեաց // D ի Հաւրէ Աստուծոյ ընկալեալ՝ սփռեաց ի վերայ մեր E ընկալեալ Հոգւոյն Սրբոյ ի Հաւրէ ի վերայ մեր սփռեաց T ընկալեալ Հոգւոյն Սրբոյ ի Հաւրէ սփռեաց ի վերայ մեր

Նա¹, յորժամ համբառնայր յերկինս փառաւք², մեզ ուխտեաց³, Եւ մտեալ յերկինս⁴ Հաւր եւ Հոգոյն⁵ հաւասար⁶ լստեալ⁷՝ զայս ասաց.

«Ես զգործսն⁸, զոր ինձ հաւատացիք⁹ կատարեցի յերկրի¹⁰, զանուն Հաւր¹¹ իմոյ¹² փառաւորեցի առ մարդիկ¹³, զեղծեալն¹⁴ ի մախանաց չարին¹⁵ պատկերակից¹⁶ մեր՝ ընդ բնութիւն¹⁷ աստուածութեանս մեր¹⁸ խառնեալ՝ սրբեցի¹⁹ սքանչելապէս: Ձմահ իմ փոխանակ ողորմելի եւ տառապեալ²⁰ ազգի²¹ մարդկան տուեալ²²՝ զերծուցի զնոսա²³ յանիծիցն: Եւ այժմ նովին²⁴ մարմնով²⁵ եկեալ՝ առնում զերկրպագութիւն յերկնաւորացս²⁶:

¹ T սա

² C չիք | յերկինս փառաւք // A փառաւք յերկինս

³ մեզ ուխտեաց // D + զայս ուխտեաց մեզ տալ այսաւր ի մեզ զայս պարգեւս ի վերուստ

⁴ CD ի յերկինս

⁵ D Հոգոյն Սրբոյ

⁶ Հաւր եւ Հոգոյն հաւասար // C հաւասար Հաւր եւ Հոգոյն

⁷ D նստաւ + եւ

⁸ AC զգործս

⁹ D աւանդեցիք

¹⁰ BF չիք C ի յերկրի

¹¹ CDF Հաւրդ

¹² C իմ

¹³ E մարդիկք

¹⁴ ADE զերծեալ BC զեղծեալ

¹⁵ D չիք

¹⁶ D զպատկերակիցն T զպատկերակից

¹⁷ E բնութեան

¹⁸ CF չիք

¹⁹ D միացուցի

²⁰ D կողուսեալ

²¹ D չիք

²² D ետու + եւ

²³ B չիք

²⁴ այժմ նովին // D արդ նոյն

²⁵ C բնութեամբ F բնակութեամբ

²⁶ C ի յերկնաւորացս

Այսուհետև քեզ¹ եհաս ժամանակ գործոյ, ո՛վ փառակից իմ Հոգի, եւ² պարտիս եւ³ զքոյդ մարդասիրութիւն⁴ ցուցանել ի⁵ յերկիր⁶: Այսուհետև⁷ քեզ ապաստան առնեմ⁸ զանուն աստուածութեանս⁹ մեր յարգել առ մարդիկ¹⁰:

Հայր իմ ներեաց եւ եթող զպարտսն¹¹, որով դու¹² խափանեցար ի հեղոյ առ նոսա, մարմնոյ իմոյ¹³ պատարագաւ¹⁴: Սա առ զիս առհաւատչեայ ի նոցանէ¹⁵, եւ տա¹⁶ նոցա զքեզ խաղաղութիւն:

Էջ այժմիկ¹⁷, սիրոյ աղբիւր¹⁸՝ սիրով առ նոսա եւ մխիթարեա՛¹⁹ զորս ի²⁰ պանդխտութեան²¹ վայրն նժդեհ²² եւ անցաւոր կենաւք տառապիւն²³: Դարձո՛ զնոսա²⁴ ի նանրութեանցն,

¹ T + եկեալ

² D զի ET չիք

³ D + դու

⁴ F մարդասիրութիւնն | զքոյդ մարդասիրութիւն // C զքո մարդասիրութիւնդ

⁵ BDEF չիք

⁶ F յերկիր

⁷ CF յայսմհետէ

⁸ F + եւ

⁹ C աստուածութեան F աստուածութեանն

¹⁰ DE մարդիկք

¹¹ D + մարդկան

¹² D + ով էակից իմ | ET դուն

¹³ BCDT իմ

¹⁴ T պատարագաւն

¹⁵ CF մարդկանէ

¹⁶ T տայ

¹⁷ E այժմ

¹⁸ B աղբեր | F չիք սիրոյ աղբիւր

¹⁹ C + զնոսա

²⁰ C չիք

²¹ E պանդխտութեան

²² CEF նշդեհ

²³ C տառապէիւն

²⁴ CF զսիրտս նոցա

զոր¹ ի զուր խռովեցուցանէ թշնամին², նայել³ յայս բազմապատիկ աւթեվանս⁴, զոր պատրաստեցաք լոցա⁵: Բաշխեա՛ր լոցա իմաստութիւն առատ, զի մի՛ եղեռնագործն մոլորեցուցէ զնոսա⁶,

Հաղորդեցայ կարեաց⁷ լոցա, եւ ծանեայ փործիւ, զի տկար եւ դիրակործան բնութեան եւ վիճակեալ. վասն այլորիկ⁸ աղաչեմ, անմեկնելի լէ՛ր⁹ ի լոցանէ եւ զաւրացո՛ր զնոսա¹⁰ ընդդէմ ամենայն փործանաց, նահանջեա՛ր¹¹ զկամս մարմնոյն¹² եւ զաւրացո՛ր զկամս մտացն¹³:

Քեզ տամ զնոսա, քեզ յանձն¹⁴ առնեմ զնոսա¹⁵, զքեզ խոստացայ լոցա¹⁶, եւ այժմ ի քեզ ամրափակեմ զնոսա¹⁷ զամենեսեան¹⁸, որպէս զի մի՛ լիցի ի¹⁹ նանիր²⁰ հեղումն արեան իմոյ²¹, որ վասն լոցա:

¹ C զորս

² D + եւ

³ A նայեա

⁴ A աւթեւանս

⁵ D + ոչ տա թոյլ

⁶ D + եւ

⁷ A կամաց

⁸ C այսորիկ D որոյ

⁹ A լինել

¹⁰ CF չիք

¹¹ BC նհանջեա | F + եւ

¹² CDET մարմնոցն

¹³ DE մտաց լոցա

¹⁴ B յանձին

¹⁵ A չիք քեզ յանձն առնեմ զնոսա

¹⁶ C չիք

¹⁷ ABCD չիք

¹⁸ B զամենեսին C զամենիսեան

¹⁹ C չի

²⁰ լիցի ի նանիր // E ի նանիր լիցի

²¹ C իմ

Առատացո՛ր ի նոսա, ո՛վ համագոյակից իմ Հոգի¹, զշնորհս բժշկութեան², զմարգարեութիւն³, զխորհելն⁴ զվերինս, զատելն⁵ զներքինս⁶:

Ես թէպէտե՛ս⁷ բազում անգամ խաւսեի⁸ զճառս արքայութեան⁹ երկնից¹⁰, ո՛չ մատուցանեին¹¹ զունկն սիրով¹² առ¹³ ի լսել¹⁴:

Բայց¹⁵ յորժամ բժշկութիւնս մարմնոյ¹⁶ կատարեի¹⁷ մեռեալս¹⁸ յարուցանեի, կոյրս լուսաւորեի¹⁹, կաղս զնացուցանեի²⁰, ամենեցուն²¹ սերն առ իս աճեալ²² առատանայր:

¹ C Աստուած

² C զբժշկութիւն

³ A զմարգարեութիւնս E զմարգարեութեան | D + զառաքելութիւն, զթարգմանութիւ

⁴ D խորհել

⁵ D ատել

⁶ F ներքինսն T գներքինս

⁷ F թէպէտ

⁸ D խաւսեցայ | BDE + ընդ նոսա

⁹ CDE արքայութեանս F արքայութեան

¹⁰ D + եւ

¹¹ A մատուցանելի

¹² զունկն սիրով // EF սիրով զունկն

¹³ D չ/ք

¹⁴ A լսելիս

¹⁵ DET այլ

¹⁶ DF մարմնոց T չ/ք

¹⁷ բժշկութիւնս մարմնոյ կատարելի // C զբժշկութիւն կատարելի մարմնոց E բժշկութիւնս առնելի մարմնոց

¹⁸ C մեռեալ

¹⁹ ADET չ/ք կոյրս լուսաւորելի

²⁰ D + կոյրս լուսաւորելի, իլից լսել տայի եւ զհամերս խաւսեցուցանելի | T + զկուրաց աչս բանայի

²¹ C + նոցա | D ամենեցունց

²² B աճել D աճելի եւ | առ իս աճեալ // E աճեալ առ իս

Չհաց հոգւոց¹ զբանս իմաստութեան տայի² եւ ո՛չ ոք զգաստանայր³,

Իսկ⁴ յորժամ զհաց մարմնոցն առատապէս ետու ի յագումն նոցա, այնչափ⁵ յորդորեցան⁶ ի սեր իմ⁷, մինչ զի⁸ կամէին⁹ յափշտակել¹⁰ եւ թագաւոր զիս¹¹ կացուցանել [իմմտ. Յովհ. Չ 1-15]:

Այս է ճանապարհ մտաց¹² ազգի մարդկան, զոր փորձեցի.

Անկարացեալ եմ զայս¹³ նոցա խոստացեալ¹⁴ վերին բարեացս խորհել¹⁵, ո՛չ եմ ծանաւթ երկնային¹⁶ փառաւորութեանս¹⁷, այլ միշտ ընդ երկիր¹⁸ յածին¹⁹, կարծեալ²⁰ ունին զայս²¹ ճշմարտութիւն եւ այն է համարեալ առ նոսա կեանք վայելուչ²²:

¹ CD հոգւոց

² զբանս իմաստութեան տայի // D տայի զբանս իմաստութեան

³ AC սգաստանայր

⁴ F եւ

⁵ D այնքան

⁶ A յագեցան DE յորդեցան

⁷ C չիք

⁸ ADT չիք

⁹ AE կամեցան

¹⁰ DE + զիս

¹¹ D ինքեանց E չիք

¹² F չիք

¹³ C + մտաց

¹⁴ A խոստացա C զխոստացեալ

¹⁵ վերին բարեացս խորհել // A զվերին բարեացն զխորհելն | զայս նոցա խոստացեալ վերին բարեացս խորհել // D խորհել զայս վերին բարեացս նոցա խոստացեալ

¹⁶ A վերին T երկնաւոր

¹⁷ DE փառաւորութեանցս

¹⁸ E յերկիր

¹⁹ ET + եւ

²⁰ C կարծիք

²¹ ACDF զայսր

²² D վայելուչ

Վասն որոյ դու¹ գտղամտութիւն² ևոցա ևախ ևշանաւք եւ սքանչելեաւք զարմացո՛ւ եւ զկարծիս ևոցա ի հաւատս³ հաւա-
նութեան⁴ բժշկութեան⁵ շնորհիւն ուղղեա՛:

Սի՛ արգելոյր⁶ զառատութեան քո⁷ շնորհս ի փառս եւ ի գովեատ⁸ աստուածութեանս⁹ մեր բաշխել:

Մեճ է, զի որպէս երկինս¹⁰ ևոյնպէս¹¹ 199ի եւ երկիր¹² փա-
ռաւք աստուածութեանս մեր, եւ որպէս զհրեշտակս՝ այսպէս¹³
եւ¹⁴ զմարդիկ¹⁵ ստասցոյք¹⁶ անուանս¹⁷ մեր արհնաբա-
նիչս¹⁸: Ոչ է¹⁹ զարմանք²⁰, եթէ զմեր արարածն մոլորեալ՝ մե-
րով բազմապատիկ զարութեամբս²¹ առ մեզ ևուճեսցոյք:

Արդ՝ է՛ջ, աղաչեմ²², է՛ջ²³, զի պաշարեալ է տարակոյսն զնոս²⁴:

¹ D + ով փառակից իմ Հոգի

² CD գտղայամտութիւն E գտղամտութիւնն F տղայամտութիւնն T գտղայութիւն մտաց

³ CF հաւատ

⁴ C հաւանութեանն

⁵ B բժշկեա

⁶ A արգելոյր T արգելցես

⁷ զառատութեան քո // C զառատութեանդ | F չիք քո

⁸ DE չիք եւ ի գովեստ

⁹ T աստուածութեան

¹⁰ C յերկինս

¹¹ F չիք

¹² 199ի եւ երկիր // E եւ երկիրս 199ի T եւ երկիր 199ի

¹³ B այնպէս DE նոյնպէս T սոյնպէս

¹⁴ BT չիք

¹⁵ D զմարդիկք

¹⁶ F ստասցիք

¹⁷ C անուան

¹⁸ CF արհնաբանս

¹⁹ E են

²⁰ A սահմանք | C զարմանալի

²¹ D իմաստութեամբս

²² D + արի

²³ E չիք

²⁴ տարակոյսն զնոսս // E զնոսս տարակոյսն

Փոքր ինչ ի տևարենություն¹ մահուն մեկնեցայ², եւ երկունք որպէս³ զծննդականի⁴ պաշարեաց զիմ աշակերտսն⁵ մինչ⁶ երագեալ⁷ գյարութիւնն⁸ մխիթարեցի զնոսա⁹:

Մինն ի մետասանիցն ո՛չ էր անդ¹⁰ եւ տասանցն վկայելոյ¹¹ ո՛չ հաւատայր վասն յարութեանն¹² [Յովհ. Ի 24-29], մինչեւ դարձեալ յայտնեցայ լոցա¹³ եւ զխոցուած¹⁴ կողիցս¹⁵ հաւատ նմին¹⁶ մտացն¹⁷ ետու շաւշափել¹⁸:

Եւ այժմ իմ ճանապարհ արարեալ ընդ երկինս¹⁹, մի՛ կարճատուութիւն²⁰ լոցա գայթակղեսցի²¹ ի մխիթարութեան²² քո յուսոյ²³: Վասն որոյ²⁴ երագեա²⁵ մխիթարել²⁶ գորդեակսն իմ եւ

¹ E տնարէնությունէ

² DE + ի նոցանէ

³ DE իբրեւ

⁴ ABF ծննդական C զծննդական DE ծննդականի

⁵ T աշակերտս | պաշարեաց զիմ աշակերտսն // D պաշարեաց զնոսա | E կալաւ զնոսա

⁶ DE մինչեւ

⁷ C + զիմ

⁸ DE + եւ

⁹ D զիմ աշակերտսն E զիմ գաշակերտսն

¹⁰ E ընդ + նոսա | F անտ

¹¹ C վկայեալ E վկայութեան

¹² D չիք վասն յարութեանն

¹³ CF չիք

¹⁴ C զխոցուածս

¹⁵ C + ի

¹⁶ E նորին

¹⁷ C մտանցն E մտաց

¹⁸ հաւատ նմին մտացն ետու շաւշափել // D ետու շաւշափել ի հաւատս մտաց նորս

¹⁹ D + ի վեր ելայ ի բարձունս մտայ եւ ընդ աջմէ Հաւր նստայ, ի յաթոր աստուածութեանս բազմեցայ՝ ուստի բնաւ ոչ մեկուսացայ: Եւ զի

²⁰ B կարճամտութիւն

²¹ BF գայթակղեսցի

²² B տկարութեան D չիք մխիթարութեան T մխիթարությունէ

²³ DT յուսոյդ

²⁴ D + աղաչեմ զքեզ E + աղաչեմ զփառակիցդ իմ

²⁵ T երագեալ | E + զիջումն քո

²⁶ AT մխիթարեա

զաշակերտս: Պևա՛, հանգի՛ր¹ ի նոսա, որպէս խոստացայ նոցա², եւ վարդապետեալ յիշեցո՞³ նոցա⁴ զամենայն առ յինէն⁵ ասացեալսն»:

Յայնժամ սլացեալ⁶ ամենակարն⁷ զաւրութիւն, զփրկականն⁸ առատութիւն⁹, հեզութեան աղբերն¹⁰, մարդասեր շնորհն, հեղումն առատութեանն Աստուծոյ, բարութեան Հոգին¹¹, կենդանարար բղխումն¹² քարոզեալն ի մարգարէիցն¹³ անցանէր ասեղ որոտմամբ ընդ դասակարգութիւն¹⁴ անմարմնականացն պարուց¹⁵, եւ սքանչացեալ պակեան հիացմամբ¹⁶ նահապետութիւնք երկնաւոր¹⁷ զաւրացն¹⁸:

Վասն զի զոր ցանկային ընդ աղաւտ տեսանել, նայեցան իսկական էութեամբն դիմեալ ի վերայ¹⁹ ազգի մարդկան սփռեալ²⁰:

¹ A հանկի՛ր

² CF չիք

³ վարդապետեալ յիշեցո // E վարդապետեա՛

⁴ CDF չիք

⁵ C ի յինէն

⁶ A սլացեալն

⁷ F ամենակատարն

⁸ C փրկական

⁹ A չիք փրկականն առատութիւն | F առատութիւնն

¹⁰ B աղբերն F աղբիւրն

¹¹ Հեղումն առատութեանն Աստուծոյ, բարութեան Հոգին // C հեղումն առատութեանն Աստուծոյ, բարութեան Հոգին D հեղումն առատութեանն Աստուծոյ, Հոգին բարութեան EF առատութեան հեղումն, բարութեան Հոգին T բարութեան Հոգին, հեղումն առատութեանն Աստուծոյ

¹² CD բխումն | EF + Աստուծոյ պարգէն, ճշմարիտ խաղաղութիւնն

¹³ DF մարգարէից | EF + մխիթարիչ Սուրբ Հոգին | T չիք կենդանարար բղխումն քարոզեալն ի մարգարէիցն

¹⁴ T դասակարգութիւնս

¹⁵ անմարմնականացն պարուց // E անմարմնականաց պարուցն F անմարմնական պարուցն

¹⁶ E հիացեալ

¹⁷ A երկնային BC երկնայնոցն DF երկնայնոց

¹⁸ B չիք

¹⁹ T + երկրածին

²⁰ C սփռել D տարածեալ E չիք

Քանզի էջ բոլորովին անձնաւորութիւն Հոգւոյն¹ այսար ի դասս² առաքելոցն գնդի³, որպէս եւ⁴ Միաձինն⁵ յարգանդ Սուրբ⁶ Կուսին⁷:

Եւ որ եկն⁸, այլ ո՛չ մեկնեցաւ⁹, այլ մնաց¹⁰ յեկեղեցի¹¹ Քրիստոսի¹², ըստ անսուտ խոստմանն¹³ իւրն փեսայի, որ¹⁴ ասաց¹⁵. «Ընդ ձեզ բնակեսցէ, եւ ընդ ձեզ եղիցի յաւիտեան¹⁶» [հմմտ. Յովհ. ԺԴ 16]:

Որ եւ զաւրացոյց այսար զառաքեալսն, եւ կոցա¹⁷ մատակարարութեամբն զընդհանուր տիեզերս, զի եւ¹⁸ սմա առաւել քաղցրացաւ¹⁹ ճաշակ փրկութեան մարդկան²⁰, ընդ որս եկաց եւ բնակեցաւ ի²¹ նոսա²²:

¹ B Հոգին D Հոգոյն C Բանին | DT + Սրբոյ

² D դաս

³ C գնդին

⁴ T չիք

⁵ C Միաձին | D Միաձինն + Որդին | ACT + ի

⁶ ET չիք

⁷ D Մարիամայ

⁸ D + այսար ի սուրբ վերնատունն

⁹ D + ի սրբոց առաքելոցն

¹⁰ E + ի

¹¹ DEF յեկեղեցիս

¹² A Աստուծոյ

¹³ BT խոստման

¹⁴ E որպէս

¹⁵ DE + թէ

¹⁶ C ի յաւիտեան | ընդ ձեզ բնակեսցէ, եւ ընդ ձեզ եղիցի յաւիտեան // E ընդ ձեզ եղիցի եւ ընդ ձեզ բնակեսցէ յաւիտեան

¹⁷ C սոցա DE նոցին

¹⁸ զի եւ // D եւ զի

¹⁹ E չիք

²⁰ փրկութեան մարդկան // T մարդկան փրկութեան

²¹ B ընդ

²² CT չիք ի նոսա

Ուստի եւ Պետրոս կրելով յինքեան զՀոգին, զստելն¹ Ասա-
նիայի՝ ո՛չ մարդկան տայր², այլ Աստուծոյ. «Ընդդէ՞ր, – ասէ³, –
եղիք ի մտի⁴ փորձել զՀոգին Աստուծոյ, զի⁵ կամելովդ⁶ պատ-
րել⁷, ո՛չ մարդկան ստեցիք, այլ Աստուծոյ» [հմմտ. Գործք Ե 4]:

Սորա⁸ շնորհն⁹ ի¹⁰ դնել¹¹ զձեռս առաքելոցն՝ հանգեալ¹² ի
վերայ¹³ Ստեփաննոսի¹⁴, որ եւ անդէն¹⁵ զաւրացաւ առնել
նշանս եւ արուեստս մեծամեծս¹⁶ [հմմտ. Գործք Զ 5-8]:

Սա¹⁷ արդարեւ որպէս զթագաւոր¹⁸ եկեղեցոյ¹⁹ որոշէր
զՊաւղոս եւ զԲառնաբաս ի գործ բանի²⁰ իւրոյ սպասաւորու-
թեանն²¹ [հմմտ. Գործք ԺԳ 2]:

¹ B զստեպն

² մարդկան տայր // E տայր մարդկան

³ E ասէր

⁴ D + դու եւ այր քո | T + ստել Աստուծոյ, եւ

⁵ BCEF զիս D չիք

⁶ D կամելով ձեր զիս E կամելով

⁷ C պարտել E խաբել | զի կամելովդ պատրել // T զիս կամելով դա-
տապարտել

⁸ BC նորա | D + այսմ Հոգոյ

⁹ AD շնորհի C շնորհք

¹⁰ D չիք

¹¹ ACT դնելն

¹² A հանկեալ C հանգալ

¹³ D + սրբոյն

¹⁴ CE Ստեփաննոսի

¹⁵ F անտէն

¹⁶ F չիք | DF + ի ժողովրդեանն

¹⁷ C նա

¹⁸ E զթագաւորս FT թագաւոր

¹⁹ CD եկեղեցոյ

²⁰ CTF բանին

²¹ CE սպասաւորութեան

Սա¹ զոմանս ընտրեաց ի մարգարեութիւն, զոմանս յառաքելութիւն², զայս ի հովուութիւն³ եւ⁴ ի վարդապետութիւն⁵ [հմմտ. Եփ. Դ 11, տէս և հմմտ. Լաւ Ա Կորնթ. ԺԲ 28]:

Որպէս Սատաթեայ զառաքելութիւնս վիճակեաց⁶ [հմմտ. Գործք Ա 26], եւ Ագաբեայ եւ Տիմոթեայ⁷ զմարգարեութիւնս [հմմտ. Գործք ԻԱ 10, Ա Տիմ. Ա 18, Դ 14], եւ երիցանցն⁸ Եփեսոսի եկեղեցոյն՝ զհովուութիւն⁹ եւ զվարդապետութիւն¹⁰:

«Չզոյշ լերուք, – ասէ¹¹, – հաւտիդ, որում¹² եդ զձեզ Հոգին Սուրբ տեսուչս եւ վարդապետս¹³» [հմմտ. Գործք Ի 28]:

Սա¹⁴ արձակեալ¹⁵ համարձակեցոյց զԵզուս¹⁶ նիւթեղէն¹⁷ կոչել հայր զԱստուած¹⁸ [հմմտ. Հռոմ. Ը 15-16], որ նստի ի կառս հրեղէնս¹⁹ եւ թեւասքողեալ պաշտի ի հրեղէն անմարմնական²⁰ բանականացն²¹ [հմմտ. Ես. Զ 1-2]: «Զի առաք

¹ C նա

² ընտրեաց ի մարգարեութիւն, զոմանս յառաքելութիւն // C ընտրեաց ի մարգարեութիւն, զոմանս առաքելութիւն E ընտրեաց ի մարգարեութիւն՝ յառաքելութիւն T ընտրեաց յառաքելութիւն, զոմանս ի մարգարեութիւն

³ CD հովուութիւնս

⁴ E + զկէսս

⁵ D վարդապետութիւնս

⁶ BEF վիճակեալ

⁷ C Տիմոթեայ | E Տիմոթէի

⁸ C իրիցանցն

⁹ C զհովուութիւն

¹⁰ C չիք եւ զվարդապետութիւն

¹¹ F չիք

¹² E յորում

¹³ DE + հովուել զժողովուրդս (E **հովուել զժողովուրդս**) Տեառն, զոր ասարեցոյց արեամբն Իւրով

¹⁴ C նա

¹⁵ F արձակել

¹⁶ DET զԵզուս

¹⁷ T նիւթեղէնս

¹⁸ հայր զԱստուած // F զհայր Աստուած

¹⁹ EF հրեղէն

²⁰ B անմարմնականացն T յանմարմնականացն CF չիք անմարմնական

²¹ CF բանակաց | D + եւ | BT չիք բանականացն

զՀոգին¹ որդեգրութեան, որով աղաղակեմք² Աբբա հայր: Նոյն ինքն Հոգին³ վկայէ⁴ հոգոյս⁵ մերոյ⁶, եթէ եմք որդիք⁷ Աստուծոյ» [Հռոմ. Ը 15-16]:

Սա⁸ ումեմն տայ բան իմաստութեան, այլում բան գիտութեան, միևնույն՝ հաւատք⁹՝ զլերինս փոփոխելոյ, եւ¹⁰ այլում¹¹՝ զաւրութիւն¹²՝ սքանչելի գործս կատարելոյ [իմմտ. Ա Կորնթ . ԺԲ 8-10]:

Սա¹³ աւծանէ զմիտս մեր՝ ըստ Յովհաննու, եւ առնէ քրիստոնեայս եւ քրիստոսընկալս [իմմտ. Ա Յովհ. Բ 24, 27, Գ 24], եւ յայսմ¹⁴ աւծութենէ¹⁵ զաւրանամք գիտել զամենայն [իմմտ. Ա Յովհ. Բ 20]:

Սա¹⁶ լուսաւոր առնէ զաչս սրտից մերոց¹⁷ գիտել¹⁸ գոյս կոչման մերոյ¹⁹, եւ զմեծութիւն փառաց ժառանգութեան²⁰ [իմմտ. Եփ. Ա 18] եւ²¹ զլայնութիւն եւ զերկայնութիւն²² սիրոյն Քրիստոսի [իմմտ. Եփ. Գ 18], վասն որոյ²³ արհամարիեցաք

¹ BC զՀոգիս

² AD աղաղակէ

³ C Հոգիս

⁴ Հոգին վկայէ // E վկայէ Հոգին

⁵ CD հոգոյս E հոգոց

⁶ C մերում E մերոց

⁷ B որդի

⁸ D նա ինքն Հոգին Սուրբ

⁹ AD հաւատս C հաւատ

¹⁰ T չիք

¹¹ F այլումն

¹² D չիք

¹³ D նա

¹⁴ D յայնմ

¹⁵ ACF աւծութենէս

¹⁶ D նա

¹⁷ C մեր

¹⁸ D առ ի գիտել

¹⁹ C մեր

²⁰ ABC ժառանկութեանն T ժառանգութեան

²¹ D այլեւ

²² D զերկայնմտութիւն F երկայնութիւն

²³ C + եւ

զերեւելիս¹, եւ փափագիմք² յաներեւոյթսն³ [իմմտ. Բ Կորնթ. Դ 18]:

Եւ⁴ Հոգւովս⁵ Քրիստոս⁶ ի մեզ բնակեալ⁷ մեռոյց⁸ զզգայարանս⁹ մարմնոյ¹⁰ հեշտութեան մեղաց¹¹, եւ կենդանացոյց¹² զբնական հոգիս՝ արդարութեան¹³ խորհրդոցն¹⁴ յուսով¹⁵, որով զաւրացեալ կոխեցին¹⁶ մարդիկ¹⁷ զնեղութիւն եւ¹⁸ զանձկութիւն¹⁹, զհալածանս²⁰, զսով²¹, զմերկութիւն²², զսուր²³, զորկանս,²⁴ զհանդերձեալսն [իմմտ. Հռոմ. Ը 35, 38]՝ պայծառացեալ հոգւովն²⁵ ի գիտութիւն սիրոյն²⁶ Քրիստոսի [իմմտ. Եփ. Գ 19]:

-
- ¹ C զերեւելիսս D զերեւելիսս
 - ² DE փափագենք CT փափաքենք
 - ³ T աներեւոյթից
 - ⁴ E + այս
 - ⁵ C Հոգովս D Հոգով E Հոգւով F Հոգւովն
 - ⁶ D գ-Քրիստոս F Քրիստոսի
 - ⁷ D կամիմք բնակել որով
 - ⁸ D մեռուցէ
 - ⁹ ABC զզգայարանս | DF զզայարանս
 - ¹⁰ DF չիք
 - ¹¹ հեշտութեան մեղաց // A մեղաց հեշտութեան
 - ¹² D կենդանացուցէ
 - ¹³ F արդարութեամք
 - ¹⁴ A խորհրդոցն CF խորհրդոց
 - ¹⁵ CF չիք
 - ¹⁶ F փոխեցին
 - ¹⁷ D մարդիկք
 - ¹⁸ C չիք
 - ¹⁹ BDEF զանձկութիւն
 - ²⁰ C զհալածանք | E + եւ
 - ²¹ E + եւ
 - ²² E + եւ
 - ²³ զմերկութիւն, զսուր // B զսուր եւ զմերկութիւն
 - ²⁴ E + եւ
 - ²⁵ D հոգովն E հոգւով
 - ²⁶ E չիք

Սա¹, որ քննե զխորս Աստուծոյ [իմմտ. Ա Կորնթ. Բ 10], քննե եւ զսիրտս² մարդկան, եւ տեսեալ զտկարութիւն բնութեանս՝ ի թիկունս հասանե տկարութեան³ մերում եւ բարեխաւս լինի⁴ ի հեծութիւնս անմոռնչս վասն եկեղեցոյ⁵ առ Աստուած [իմմտ. Հռոմ. Ը 26]:

Եւ ինքն⁶ սիրողացն զԱստուած յամենայն⁷ բարիս գործակից լինի⁸ հանապազ⁹ [իմմտ. Հռոմ. Ը 28], ամենեցուն¹⁰ կամի զփրկութիւն, ամենեցուն¹¹ սպասե հաւատոց¹², որպէս զի ի¹³ նուիրելն զհաւատս¹⁴ սերմանեսցե ի նոսա շնորիս¹⁵ եւ զաւրութիւնս¹⁶ հոգեւորս¹⁷:

Կամի՞ն զհտել զչափ սիրոյ¹⁸ սորա¹⁹ առ մարդիկ²⁰.

¹ D նա

² F զսիրտ

³ CE տկարութեանս

⁴ D + վասն մեր

⁵ CF + սրբոյ

⁶ D + Հոգին Սուրբ

⁷ D յամենայնի | T + գործս

⁸ B լինիցի

⁹ բարիս գործակից լինի հանապազ // D գործակից լինի հանապազ ի բարիս

¹⁰ ACF զամենեցուն

¹¹ A զամենեցուն

¹² D հաւատոյ

¹³ F չիք

¹⁴ BF զհաւատն C զհաւատն T զհաւատոյ

¹⁵ ET զշնորիս

¹⁶ ADET չիք եւ զաւրութիւնս | F զաւրութիւն

¹⁷ CF չիք | D չիք որպէս զի ի նուիրելն զհաւատս սերմանեսցե ի նոսա շնորիս հոգեւորս

¹⁸ B չիք

¹⁹ CD նորա | A+ որ

²⁰ E մարդիկք

Յարեաց ի կառս¹ ներքինոյն², որպէս երբեմն Փիլիպպոս³, տէ՛ս, թէ որպէս միով⁴ հաւատով հարցմանն տուաւ⁵ Հոգին փոխանակ:

«Տէ՛ր, – ասէ, – աղաչեմ զքեզ, վասն ի՛ր⁶ ասէ մարգարէն զայս⁷, թէ վասն այլոյ⁸ ուրուք» [հմմտ. Գործք Ը 34]:

Դուռն եղև ուղիղ հարցումն⁹ մտից¹⁰ հոգւոյն¹¹ յանձն ներքինոյն¹² եւ պատրաստեաց տեղի բանիցն Փիլիպպոսի, մինչեւ¹³ եկաց¹⁴ ջրոյն արընթեր, եւ իջեալ¹⁵ Հոգին¹⁶ ուսուցիչ ներքինոյն¹⁷ աւելորդ¹⁸ համարեցաւ այլ աշխատ առնել¹⁹ զՓիլիպպոս [հմմտ. Գործք Ը 26-39]:

Այս²⁰ է Հոգւոյն²¹ Սրբոյ պաշտպանելն աշխարհի, այսքան է նորա մխիթարելն²² զմարդիկ²³:

¹ D կառսն

² DE ներքինոյն

³ DEF + եւ

⁴ C ի միում

⁵ B առաւ

⁶ BDF ոյր

⁷ ասէ մարգարէն զայս // C ասաց զայս մարգարէս F ասաց զայս մարգարէն | BDF + վասն իւր

⁸ B այլ

⁹ C հարցումնս F հարցումնս | դուռն եղև ուղիղ հարցումն // D ուղիղ հարցումն դուռն եղև

¹⁰ F չիք

¹¹ CD հոգոյն F հոգւոցն

¹² DE ներքինոյն

¹³ T մինչ

¹⁴ C կացոյց

¹⁵ E + ասպա

¹⁶ C Հոգւոյն

¹⁷ C ներքոյն DE ներքինոյն

¹⁸ B առաւելորդ

¹⁹ այլ աշխատ առնել // CF աշխատ առնել այլ

²⁰ CF այսպէս

²¹ D Հոգոյն

²² նորա մխիթարելն // E մխիթարելն նորա

²³ DE զմարդիկք

Ո՛չ գեթովպացին խտրե՛¹, ո՛չ գհեթանոսս անարգե, ոչ գհրեայս² յարգե³: Ամենեցուն հաւասար⁴ գծիրն⁵ ընծեոէ:

Միայն գհաւատս յաւժարութեան սրտի⁶՝ նիւթ շնորհին իւրոյ ի մէջ տալ փափագե⁷: Եւ ի նոյն փայլատակեալ ջախս գանազան շնորհի⁸ գեկեղեցոյ⁹ մանկունս¹⁰ ճառագայթէ, եւ գրգեալ¹¹ գնոսա շնորհաւք¹² առ սեր¹³ Հաւրն ձգէ ի հեշտութենէ զբաղմանց¹⁴ աշխարհիս¹⁵:

Զի տղայոց խաղալիկ նշանքն¹⁶ եւ լեզուախաւսութիւնս¹⁷ ի¹⁸ Հոգոյն¹⁹ տուեալ, եւ կաթն մանկանց՝ շնորհք բժշկութեան²⁰ եւ աջողութիւնք²¹ գաւրութեանց²², իսկ կատարելոցն մատակարարէ հաստատուն կերակուր, որ է սերն Աստուծոյ [հմմտ. Եբր. Ե 12-14]:

¹ E խտրե

² C գհրեայն F գհրեայսն

³ D + այլ | E + եւ ո՛չ զբարբարոսս արհամարհե, այլ

⁴ D *չ/ք*

⁵ հաւասար գծիրն // T գծիրն հաւասար

⁶ E սրտին

⁷ CT փափաքէ

⁸ գանազան շնորհի // D գգանազան շնորհին իւրոյ

⁹ C գեկեղեցոյ

¹⁰ BC մանկուն | գեկեղեցոյ մանկունս // D գմակնունս եկեղեցոյ

¹¹ A գրեալ D գրգեալ

¹² C շնորհաւքն

¹³ DEF + երկնաւոր

¹⁴ B պաշտմանց C զբաւսանաց E զբաղանաց

¹⁵ T աշխարհի

¹⁶ խաղալիկ նշանքն // E խաղալիք նշանք

¹⁷ B զլեզուախաւսութիւնն C լեզուախաւսութիւնքն E լեզուախաւսութիւն

¹⁸ E *չ/ք*

¹⁹ D Հոգոյն

²⁰ CD բժշկութեանն

²¹ CF աջողութիւն

²² A գաւրութեանցն CF գաւրութեանն

Որպես աղաղակ՝ որ ճաշակեաց¹. «Եթե ունիցիմ² զամենայն գիտութիւն³ եւ հաւատս⁴ զլերիսս փոփոխելոյ, եւ սեր ո՛չ ունիցիմ, ոչ ինչ աւգտիմ» [իմմտ. Ա Կորնթ. ԺԳ 2-3]:

Չսոյն⁵ եւ աշակերտացն ըղծանայ յասելն⁶. «Աղալթս առնեմ եւ ծուր դնեմ, առնուլ ձեզ ո՛չ Հոգի նշանագործութեան, այլ զՀոգին⁷ իմաստութեան, որ լուսաւորէ զաչս սրտից⁸ ի գիտութիւն լայնութեան եւ երկայնութեան, բարձրութեան եւ⁹ խորութեան¹⁰ սիրոյն Քրիստոսի» [իմմտ. Եփ. Ա 16-18, Գ 14-19]:

Վասն այսորիկ ե՛լ¹¹ նշանաց, ե՛լ լեզուաց ազդումն ի Հոգւոյն իբրեւ¹² զանաւզուտս¹³ պակասեաց ի միջոյ, իսկ Հոգին իմաստութեան եւ հանճարոյ¹⁴ միշտ ներգործէ ի մէջ եկեղեցւոյ [իմմտ. Ես. ԺԱ 2], եւ զսերն Քրիստոսի պայծառացուցանէ¹⁵ յորդոց¹⁶ սորա հոգիս¹⁷:

Մի՛ որ կարծեսցէ Տեր անուանել զՅիսուս¹⁸, եթե ո՛չ ի նմանե՛¹⁹ նախ²⁰ զազդումն²¹ ընկալցի [իմմտ. Ա Կորնթ. ԺԲ 3]: Ապա թե որ մատչի յառաջ առանց կոչման սորին հրամանի, իբրեւ²²

¹ DET ճաշակեացն | D + եւ ասէ

² AF ունիցիմք E ունիմ | T + մարգարեութիւն, եւ գիտիցեմ

³ AD գիտութիւնս

⁴ B հաւատ | DET + մինչեւ

⁵ A ի սոյն

⁶ A ասել B ասելն

⁷ A հոգի

⁸ D + ձերոց

⁹ A + ի

¹⁰ բարձրութեան եւ խորութեան // F խորութեան եւ բարձրութեան

¹¹ E չիք

¹² C իբր

¹³ CF զանաւզուտ

¹⁴ D չիք եւ հանճարոյ

¹⁵ E + ի

¹⁶ D յորդոց

¹⁷ B հոգի C ի հոգիս

¹⁸ E զՔրիստոս

¹⁹ C սմանէ

²⁰ D չիք

²¹ C ազդումն | F զասդումն

²² C իբր

զկախարդն Սիմոն¹ փորձաւ Սուրբ Հոգոյն² ի Դաւթայ տաճարէս³ հերքեսցի [իմմտ. Գործք Ը 9-24]:

Կնիք է ամուր ի վերայ իւրաքանչիւր անդամոց եկեղեցւոյ սրբոյ⁴ Քրիստոսի⁵ [իմմտ. Բ Կորնթ. Ա 22, Եփ. Ա 13, Դ 30], որք⁶ պարսպեալ պահին սովաւ յիւրաքանչիւր պատիւա շնորհի: Քանզի որ հաստատեացն⁷ զմեզ ձեաւք⁸ հանդերձ ի Քրիստոս, Աստուած է, որ եւ⁹ կնքեաց¹⁰ զմեզ եւ ետ զառիաւատչեայ Հոգոյն¹¹ ի սիրտս մեր¹² [իմմտ. Եփ. Ա 13-14]:

Վարդապետ Է¹³ ուսուցանել եւ յիշեցուցանել¹⁴ զառ ի Քրիստոսէ ասացեալսն¹⁵ ամենայն ճշմարտութեամբ¹⁶, որպէս խոստացաւ¹⁷, թէ¹⁸ «յորժամ եկեսցէ Եւ Հոգին ճշմարտութեան, առաջնորդեսցէ ձեզ ամենայն¹⁹ ճշմարտութեամբ» [իմմտ. Յովհ. ԺԶ 13]:

Ճարտարապետ է իմաստուն, որ շինէ զաւտարս եւ զպանդուխտս ի վերայ հիման առաքելոց եւ մարգարեից [իմմտ. Եփ. Բ 20-22], առ ի լնուզ զչափ հասակի կատարմանն Քրիստոսի [իմմտ. Եփ. Դ 13]:

¹ F Սիմոն

² D Հոգոյն

³ ի Դաւթայ տաճարէս // C ի գաւթէ տաճարիս E ի Դաւթեան տաճարէս F ի գաւթայ տաճարէս T ի Դաւթէ տաճարիս

⁴ CF չիք

⁵ D չիք

⁶ T որ

⁷ CET հաստատեաց

⁸ BT ձեւք

⁹ T չիք

¹⁰ BF կնքեացն

¹¹ D Հոգոյն

¹² F ձեր | կնքեաց զմեզ եւ ետ զառիաւատչեայ Հոգոյն ի սիրտս մեր // T ետ զառիաւատչեայ Հոգոյն ի սիրտս մեր, եւ կնքեաց զմեզ

¹³ E վարդապետէ

¹⁴ A յիշեցուցանէ

¹⁵ C ասացեալն

¹⁶ BDE չիք ամենայն ճշմարտութեամբ

¹⁷ B խաւսեցաւ DE խոստացաւն | D + եւ ասաց

¹⁸ CF չիք

¹⁹ F զամենայն

Գետ է¹ յորդառատ՝ առոգանաւոյ մտաց մարդկան, որ արբուցանէ զակաւսս իմաստից մերոց² եւ զուարթացուցանէ³ ցաւոյն իւրով⁴ զգանազան բոյսս առաքիւնութեան⁵ ծաղկանց⁶ անուշահոտից⁷, որպէս ասաց Քրիստոս⁸ գետք յորովայնէ հաւատացելոց իւրոց⁹ բղիւսել¹⁰ ի¹¹ Հոգոյն¹² [իմմտ. Յովհ. Է 38]. ըստ որում նախաճառեաց մարգարէն¹³ [իմմտ. Յովել Բ 28]:

Վերակացու է արթուն, հրահանգիչ կարգաց եկեղեցոյ¹⁴ եւ որոշաւ¹⁵ իւրաքանչիւր աստիճանաց եւ պատուոյ¹⁶, որ¹⁷ եղ նախ՝ զառաքեալս, երկրորդ՝ զմարգարէս, երրորդ՝ զվարդապետս¹⁸, ընդ որս եւ¹⁹ զգաւրութիւնս, եւ զշնորհս բժշկութեան, զագգս²⁰ լեզուաց²¹, եւ զթարգմանութիւն²² լեզուաց²³ [իմմտ. Ա Կորնթ. ԺԲ 28-30]:

¹ գետ է // A գիտէ

² B ձերոց C մեր

³ E զվարճացուցանէ

⁴ CF իւր

⁵ C առաքիւնութեանն

⁶ C ծաղկաց

⁷ BCF *չիք* | DET *չիք* ծաղկանց անուշահոտից

⁸ DE + թէ

⁹ C իւր

¹⁰ AE բղիւսեալ C բխել D բխեալ

¹¹ C *չիք*

¹² CD Հոգոյն

¹³ F *չիք* մարգարէն

¹⁴ D եկեղեցոյս Քրիստոսի

¹⁵ DT որոշող | E որոշիչ

¹⁶ աստիճանաց (C **աշտիճանաց**) եւ պատուոյ // D կարգի, պատուոյ եւ աստիճանի

¹⁷ CF + եւ

¹⁸ F վարդապետս

¹⁹ CDEF *չիք*

²⁰ T ագգս

²¹ CF *չիք*

²² CFT թարգմանութիւնս DE զթարգմանութիւնս

²³ DE + այս

Հոգիս¹ ներգործութեան² յարիւն գղասակարգութիւն³ աստիճանաց⁴ տաճարիս⁵ ի համանմանութիւն երկնաւորացն պարուց⁶ հոգեւոր⁷ երգով⁸ միշտ Աստուծոյ խաւսակցելով⁹:

Հոգիս այս ծնանի գմանկունս¹⁰ եկեղեցւոյ¹¹ Քրիստոսի յորդեգրութիւն Հաւրն երկնաւորի՝ յարգանդէ սրբարար¹² աւագանիս¹³:

Հոգիս այս Սուրբ զարացուցանէ զձեռս քահանայապետից¹⁴ ի շնորհաբաշխութիւն, քահանայից¹⁵ ի նուիրագործութիւն¹⁶, սարկաւագաց¹⁷ ի սպասաւորութիւն սրբոյ¹⁸ եկեղեցւոյ¹⁹:

Սա²⁰ յարուցանէ ժառանգս²¹ աթոռոյ²² եկեղեցականս պատուոյ²³.

¹ C Հոգոյս DE Հոգի

² C ներգործութիւն

³ AF գղասակարգութիւնս

⁴ C աշտիճանաց

⁵ T տաճարին

⁶ CF պարու

⁷ D հոգեւորաց

⁸ C երգովք D երգել

⁹ A + ցնծութեամբ | C խաւսակցել

¹⁰ B գմանգունս

¹¹ T եկեղեցւոյն

¹² C սրբարարն

¹³ C աւագանի | Յորդեգրութիւն Հաւրն երկնաւորի՝ Յարգանդէ սրբարար աւագանին // D յարգանդէ սրբարար աւագանին յորդեգրութիւն Հաւրն երկնաւորի

¹⁴ D քահանայից

¹⁵ C գրքահանայից

¹⁶ F նուիրագործութիւնն | D չիք քահանայից ի նուիրագործութիւն

¹⁷ C զսարկաւագաց

¹⁸ E սուրբ

¹⁹ C չիք սրբոյ եկեղեցւոյ | սրբոյ եկեղեցւոյ // T եկեղեցւոյ սրբոյ

²⁰ D + այս Հոգի

²¹ B ժառանգ

²² C աթոռոց D աթոռոյ

²³ A չիք սա յարուցանէ ժառանգս աթոռոյ եկեղեցականս պատուոյ | C պատուոց

Չոմանս կարգէ ի պաշտան բանի¹, գայս ի հնչումն ձայնից², զկէսս յընթերցումն³ գրոց⁴:

Ի սմանէ⁵ վկայքն⁶ զաւրացան⁷, նահատակքն զինեցան, կանայքն արիացան, արքն⁸ քաջացան⁹:

Սորա զարութիւնն¹⁰ բոխէ¹¹ ի խաչանիշ փայտից սքանչելեաւ¹², ի կառուցեալ յարկաց նշանաւ¹³, յոսկերաց սրբոց բժշկութիւն¹⁴ ամենայն¹⁵ ախտից¹⁶ շնորհաւ¹⁷:

Լի է ամենայն երկիր¹⁸ ողորմութեամբ սորա եւ աւդս¹⁹ մաքրեցաւ յիջանել²⁰ սորա:

Ընդ մեզ է հանապազ, եւ ամենայն ինչ մեր սորա է շնորհածիր²¹ պարգեւ [հմմտ. Յակ. Ա 17],

¹ D բանից E բանին

² C ձայնի

³ C ընթերցման F յընթերցման

⁴ CF գրոցն + գործի | D + եւ զոմանս յունկնդրութիւն իմաստութեան մտաց

⁵ ի սմանէ // D սոյն յայս Հոգոյ

⁶ A վկայք

⁷ E + եւ

⁸ CT կանայք... արք

⁹ C + կուսանք անախտացան, ամուսնացեալք զաւրացան | Կանայքն արիացան, արքն քաջացան // D քաջքն արիացան, կանայքն քաջացան E արքն քաջացան եւ կանայքն արիացան F արքն քաջացան, կանայքն արիացան

¹⁰ T զարութիւն

¹¹ D բխէ

¹² ի խաչանիշ փայտից սքանչելեաւք // E ի խաչանշանիցն զաւրութիւն սքանչելեաց

¹³ D չիք ի կառուցեալ յարկաց նշանաւք

¹⁴ C բժշկութեան

¹⁵ CFT չիք | D ամենեցուն

¹⁶ C ախտիցն | D + ախտացելոց | T + եւ ցաւոց

¹⁷ D + սորա

¹⁸ ամենայն երկիր // C երկիր ամենայն

¹⁹ D աւդս

²⁰ BD ընդ իջանել

²¹ CD շնորհաց ձիր + եւ

Որոյ առաջի անկեալ ի վերայ երեսաց¹ մերոց² մաղթես-
ցուք³.

Ո՛վ Աստուած յԱստուծոյ, եւ նորոգիչ⁴ ամենայնի⁵ Սուրբ
Հոգի.

Ի քո⁶ խնամս պահպանութեան⁷ Հովին քաջ [Յովի. Ժ 11-
16] զհաւտս իւր արար ապաստան⁸,

Եւ սփռեաց զճառագայթս⁹ քո յեկեղեցի իւր մինչեւ ցյալի-
տեան¹⁰:

Ի քէն շարժին լեզուք մեր ի պատարագս արինութեան,
Եւ անձինք մեր կարգեցան ի սպաս զանագան շնորհաց
քոց¹¹ պաշտաման:

Ձքեզ աղաչեմք ամենեքեան¹² միաբան¹³,
Եւ խաւսիմք ընդ քեզ համարձակ՝ որդիք¹⁴ երկանց արգան-
դի¹⁵ քո ծննդեան:

Սի՛ գարշիր ի հաւտէ քումմէ վասն հոտոյ մեղաց զագրու-
թեան,

Եւ մի՛¹⁶ տրտմիր¹⁷ վասն անպարկեշտ¹⁸ բանի¹⁹ բարբառ-
ման:

¹ D էրեսաց

² CF չ/իք | D իմոց

³ CF + արտասուաւք

⁴ DT նորոգաւդ

⁵ C աշխարհի

⁶ D քոյդ E քոյին

⁷ խնամս պահպանութեան // D խնամապահութիւն

⁸ արար ապաստան // F ապաստան արար

⁹ T զճառագայթ

¹⁰ CEF յալիտեան

¹¹ շնորհաց քոց // C երգոց | F չ/իք շնորհաց քոց

¹² T ամենեքին

¹³ ամենեքեան միաբան // D միաբան ամենեքեան

¹⁴ D որդիքս

¹⁵ B աւագանի | F յարգանդի

¹⁶ C չ/իք

¹⁷ D + ի մէնջ

¹⁸ A պարկեշտ

¹⁹ D բանից

Այլ մնա՛ ընդ մեզ հաշտութեամբ մինչեւ ի կէտն¹ աւարտման.
 Եւ լէ՛ր² ուղեկից յերկնային³ քո խորանսդ⁴:
 Ո՛ր⁵ Տէր⁶, եւ զաքսորեալս⁷ ի վայրս նժդեհութեան⁸
 Պարսպեա՛ն⁹ ի թշնամեաց¹⁰ նետից¹¹ խոցոտմանց¹²:
 Զունիմք¹³ զաւրուօթիւն հանդիսանալ ի մարտ ճգնութեան¹⁴.
 Խնդրեմք¹⁵ հառաչմամբ՝ մի՛ տար զմեզ ի փորձանս¹⁶ դա-
 րանակալին չարութեան:
 Տո՛ւր ծարաւեացս¹⁷ զգինի սիրոյ քո արբեցութեան,
 Զմատռուակեալն¹⁸ այսար ի սուրբ վերնատանն¹⁹:
 Զի մխիթարեսցուք²⁰ ի խշտիս մեր²¹ տարտամութեան²²,
 Եւ ի հանդերձեալ կենացդ²³ յոյս կացցուք²⁴ ապաստան:

1 A կէտ
 2 B + մեզ | DE + մեր
 3 C ի յերկնայինդ E ի վերինդ
 4 E խորան F խորանս | քո խորանսդ // C ալթարան
 5 C n
 6 D + Հոգիդ Աստուած բարերար
 7 C զաքսորեալքս T զարտաքսեալքս
 8 BCEF նշդեհութեան D նշժդեհութեան
 9 BE պատսպարեա | T + պահեա
 10 C թշնամեացն D թշնամւոյն
 11 թշնամեաց նետից // E նետից թշնամեաց
 12 AB խոտորմանց C խոցմանց DT խոցոտման
 13 A ունիմք
 14 D + վասն որոյ
 15 D հայցեմք | E + ի քէն
 16 D + պատրանաց
 17 C ծարաւիմք
 18 C զմատռուեալն D զմատրուակեալն
 19 T վերնատան
 20 C + քեւ
 21 DT մերոյ
 22 T տրտմութեան
 23 BT կենացն
 24 DT կայցուք

Ով բարերար Սուրբ Հոգի¹, եւ յայս նուէրս, որ ի քոյոցս² քեզ բուրումն³ արհնութեան,
 Հոտոտեա՛⁴ սիրով⁵, Աստուած իմ⁶, Հոգի⁷ հեզութեան:
 Եւ քեզ արհնութիւն ի մէջ մի բերան⁸,
 Ընդ Հար եւ⁹ Որդոյ¹⁰ ի մշտնջենաւոր¹¹ կեանսդ¹², եւ¹³
 յանվախճան¹⁴: Ամէն¹⁵:

¹ CF չիք Սուրբ Հոգի | D Հոգիդ Աստուած մարդասէր

² C քոյոց

³ B խոստումն

⁴ C հոտոտեաց

⁵ A չիք T քաղցրութեամբ

⁶ D չիք Աստուած իմ

⁷ DE Հոգիդ

⁸ մի բերան // AF + ի մի բերան // C լի բերան DE միաբան

⁹ CD + ընդ

¹⁰ BD Որդոյ T Որդւոյն

¹¹ BD մշտնջենական C մշտնջենաւորդ | E չիք

¹² C չիք

¹³ BE չիք

¹⁴ AB + եւ քրիստոսի փառք յաւիտեանս | յանվախճան // C յայս յաւիտեանս ET անվախճան F յայսմ յաւիտենիս

¹⁵ BE չիք | B + Չստացաւդ լուսազարդ մատենիս զԱստուածատուր սրբասէր կրանաւոր՝ ծնողաք իւրովք հանդերձ յիշեսցիր ի Տէր աղայեմ, ընդ նմին եւ զանայտան հողս՝ զԳրիգորիս գրիչ եւ դուք յիշիք: | C + Չստացող ներբողինիս զՄիմէն, եւ զվերջին գծողս զԿոստանդին յիշեսցիք ի Քրիստոս, աղայեմ: | D + Չստացող ճառիս քո Սուրբ Հոգի գտէր Թումա եպիսկոպոս եւ գհարազատն իւր գհայրապետ Ստեփանոս յիշեա՛ եւ ողորմեա՛ ծնողաց նոցա. եւ բազմավեր ոգոյ գծողիս Գրիգորի, եւ Աւետեաց արեղայի՛ քարտիս կոկողի: | E + Ով բարեսէր հարք եւ եղբարք, յիշեցէք ի Քրիստոս զստացաւդ սուրբ գրոցս զՂարիպշա մահդասին եւ լի բերանով Աստուած ողորմի ասացէք: | F + Ով պատճառ կենդանութեան եղելոցս եւ խաղաղարար աշխարհի Աստուած Սուրբ Հոգի, որ հանգեար ի դաս երանելի առաքելոցն գնդի խոստովանողացս եւ դաւանողացս զքեզ Աստուծոյ Հոգի համապատիւ ընդ Հար եւ ընդ Որդոյ միաւորեալ բնութեամբ երկրպագելով հայցեմք ողորմեա ամենայն հաւատացելոց, նաեւ տառապեալ ոգւոյ եւ անարհեստի եւ փծուն գրչի Ստեփաննոսի եւ ծնողաց իմոց եւ երախտաւորացն եւ վարժապետացն եւ որ բարեմիտն է ասացե սիրով՝ եղիցի, եղիցի եւ նոցա յիշատակ բարի ի յայսմ աւտենի:

ՆՈՒՅՆ ԵՐԱՆԵԼԻ ՆԵՐՍԵՍԻ ՆԵՐԲՈՂՅԱՆԸ ԱՍՎԱԾ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՀՐԱՇԱՓԱՌ ԳԱՆՏՅԱՆ [ԱՌԻԹՈՎ]

Սրտիս բաղձանքի սիրուց ստիպված՝ աղքատ մտքիս խոսքերն եմ նվիրում այս մեծ օրվան: [Ձեր] աղոթքի պարզևները միաբանե՞ք իմ տկարությանը, ո՛վ հանդիսակից ժողովուրդ: Տվե՛ք ինձ այն շնորհը, որ տրվել է այսօր աշխարհին, որպեսզի անվեհեր կերպով նետվեմ Աստծո ճանաչողության իմաստության խորքերը և մատակարարեմ հոգիները պարարող անապական կերակուրը:

Առատ պարզև է հեղվել այսօր երկրի վրա: Աղաչե՛նք, որ Նրա շողերը ճառագայթելով լուսավորեն մեր մտքի հայացքը և առաջնորդեն ընթանալու աստվածային խոսքերի շավիղներով:

Ո՛վ սքանչելիք, որին հրեշտակները ցանկանում էին [զեթ] աղոտ հայացքով նշմարել [հմմտ. Ա Պետ. Ա 12], այսօր շնորհներով իջնելով ստորին գավառ¹ տարածվեց: Եւ ո՛վ չի հուսա հավատով Նրա պարզևները վայելել:

Հոգին Սուրբ, որին բերանաբաց փափագմամբ սպասելով, սերովբեների և քերովբեների դասերը չկարողացան տեսնել Նրա որքանությունը, այսօր իսկապես ցած իջնելով հագեցրեց մարդկանց իր անճառելի խորհուրդների գիտությամբ: Որոնց հետ նաև ես եմ սպասավորում Նրա առատությունից իմաստության կաթիլներ ընդունելու համար:

Արդարև, մարդն իր ձեռքը երկարեց դեպի կենաց ծառը, որից սկզբում հեռացվել էր [հմմտ. Ծննդ. Բ 7, Գ 22-24]: Առավ կերավ [պտուղը]² և հավիտենական կյանքը ժառանգեց:

Եւ ո՛վ է այս շնորհի միջնորդն ու մատակարարը, ուրիշ ո՛վ, եթե ոչ մեր Տեր Հիսուս Քրիստոսը [հմմտ. Ա Տիմ. Բ 5]³ կյանքը,

¹ Նկատի ունի երկիրը, տե՛ս և հմմտ. Եփ. Դ 9-11:

² Հակադրելով ակնարկում է Ծննդ. Գ 6-ում նկարագրված չարի և բարու գիտության ծառի պտուղն ուտելը – ծնթգ. ԱՏ:

լույսը, ճանապարհը, դուռը, հովիվը, քահանայապետը, միջ-
նորդը, հույսը, բարեխոսը [և] կարապետը³, որն ինքնիշխան
գորությամբ առավ [իր անձը] [հմմտ. Հովհ. Ժ 17-18], անցավ
երկինքների երկինքը [հմմտ. Սաղմ. ԿԷ 19] և հրաշափառա-
պես մտավ վարագույրի ներքին կողմը՝ անճառելի հիացմամբ,
և որպես բարեխոս՝ մարդկանց [անունից] Հայր Աստծո առջև
դրեց առիավատչյան [իր անձը] [հմմտ. Եբր. Չ 19-20, Է 15-
28, Ը 1-6, Թ 11-12, 24-25, Ժ 20]:

Այստեղից էլ փոխարենը առատ Պարգևն առնելով՝ տարա-
ծեց երկրի վրա [հմմտ. Սաղմ. ԿԷ 19], որից գմայլանքով ար-
բեցինք [հմմտ. Սաղմ. ԻԲ 5, Եր. ԼԱ 14] և նախամայր [Եւայի]
տրտմության երկունքը [Ծննդ. Գ 16] հավետ մոռացանք:

Այսօր աշխարհի պատրանքի խավարի մեջ ընկղմվածներս
ընդունեցինք լույսն իմանալի, [որ] պայծառացնողն Է հոգիներ-
ի և առաջնորդողը դեպի ողջերի երկիրը:

Այսօր մերկացանք թախծության զգեստից, որն ընդունել
էինք մեր նախահայր Ադամից [տե՛ս Կող. Գ 9-10, հմմտ. Եփ.
Դ 22-24], քանզի նոր Ադամը [հմմտ. Ա Կորնթ. ԺԵ 45] զար-
դարեց մեզ՝ պսակելով և պաճուճելով ոսկեհուռ [հանդերձնե-
րով] [հմմտ. Սաղմ. ԽԴ 10, 15]:

Այսօր սքանչելի հուրը, երկնային բոցաճաճանչ շողերով
արտափայլելով երկրի վրա [հմմտ. Գործք Բ 2-3], բոցավառ-
վելով այրեց մարդկանց միջից մեղքերի անեծքի պատուհասի
փուշը [հմմտ. Ծննդ. Գ 18] և սաստիկ պատիժները:

Այսօր հրեղեն լեզուներին արժանացած ազգը, որը հավա-
սարվել էր անմիտ անասունների, դառնալով՝ վերստին ստա-
ցավ բանի շնորհը [հմմտ. Դուկ. ԺԵ 11-24]՝ պատկերակից լի-
նելով իր արարչին [հմմտ. Ծննդ. Ա 26-27, Բ 7]⁴:

³ Տե՛ս Հովհ. Ա 4, ԺԱ 25, ԺԴ 6 (կյանք), Ա 9, Ը 12, Թ 5 (լույս), Ժ 7,9 (դուռ),
Ժ 11,14 (հովիվ), Եբր. Գ 1, Ը 3, Ժ 12 (քահանայապետ), Ը 6, Թ 15, ԺԲ 24,
Ա Տիմ. Բ 5 (միջնորդ), Կող. Ա 27, Ա Տիմ. Ա 1 (հույս), Հն. Ը 34, Ա Հովհ. Բ
1 (բարեխոս), Եբր. Չ 20 (կարապետ):

⁴ Հայրաբանական ընդունված տեղի, որ սկիզբ է առնում Փիլոն Ալեքսանդ-
րացուց, որը բազմիցս նույնացնում է Աստծո պատկերը (Ծննդ. Ա 26-27)

Այսօր [Սուրբ] Հոգու քաղցր ցողի [իմմտ. Սաղմ ՀԱ 6, Ես. ԻԶ 19] սաստիկ ձայնը որոտաց երկրի վրա [իմմտ. Գործք Բ 22], և անեծքի խոսքը, որ թափվել էր սրա⁵ վրա Ադամի պատճառով [իմմտ. Ծննդ. Գ 17], փոխարկեց օրհնության:

Այսօր անապական կնդրուկի անուշահոտ բույրը տարածվելով [և] մահվան մառախլապատ թանձոր ծուխը այլափոխելով՝ անմահություն հաստատեց:

Այսօր զգալի պատարագը՝ [Քրիստոս], որին զգալի աշխարհն առաքեց դեպի իմանալի գավառը, փոխարենը [որպես] առհավատյա ընդունեց իմանալի Հոգին [իմմտ. Եփ. Ա 13-14]⁶, որը կորոզեց սրա⁷ զգալի տարրերն [ըստ] անկյութ քաղաքի պատկերի⁸:

Օ, [իկչպիսի] շահեկան մեծ տուրևառություն երկնայինների և երկրայինների [միջև], քանզի սրանք⁹ տվեցին մարմին և Նրանցից¹⁰ ստացան Հոգին:

և ներս փչված աստվածային շունչը (Ծննդ. Բ 7)՝ դրանք համարելով մարդկային միտքը՝ աստվածային, անապական տարրը կամ հոգու բանական մասը: Հենց դա է մարդուն տարբերում անբան կենդանիներից: Այդ պատկերը, որ Ադամի անկման պատճառով աղտոտվել էր, բայց ոչ ջնջվել, վերականգնվել է Նոր Ադամի կողմից քրիստոնեական մեկնաբանությամբ (հատկապես Ս. Գրիգոր Նյուսացու «Յաղագս կազմութեան մարդոյ» երկում): Հեղինակի տեսակետը հիմնված է դասական փիլիսոփայության մեջ ընդունված «բան»-ի (լոգոս) և «ոգու» (պնևմա) հոմանիշության վրա – ծնթգ. ԱՏ:

⁵ Նկատի ունի երկիրը:

⁶ Հոգու գալուստն այստեղ դիտվում է որպես կանխավճար կամ գրավ՝ խաչի վրա Քրիստոսի կատարած փրկարար գոհաբերության դիմաց. մնացորդը կամ խոստացվածը վճարելու է վախճանին – ծնթգ. ԱՏ:

⁷ Աշխարհի:

⁸ Չոհարբերության ծիսական քառակողմ սեղանը (Ելք ԻԷ 1–8), որին հրեական և հայրաբանական մեկնողական ավանդության մեջ տրվել է տիեզերքի նշանակություն (ավելի ուշ վերածվել է Խաչի տիպի), այստեղ կապվում է աշխարհի չորս տարրերի հետ և համեմատվում՝ Վերին Երուսաղեմի՝ Աստծո քառակուսի քաղաքի հետ (Հայտ. ԻԱ 9–17) – ծնթգ. ԱՏ:

⁹ Նկատի ունի երկրայիններին՝ մարդկությանը:

¹⁰ Նկատի ունի Աստվածային Սուրբ Երրորդությունը:

Ադամի տունը ընծայեց Քրիստոսին, և Աստծո տունը փոխարենն ուղարկեց միսիթարիչ Սուրբ Հոգուն: Մարդիկ մարդուն տվեցին Աստծուն, և Աստված Աստծուն տվեց մարդկությանը: Սա է Աստծո արդարությունը վկայող տուրևառությունը:

Նախ՝ ծառաներիցս հնազանդության պատարագ, և ապա Տիրոջից՝ խաղաղության պարզևներ:

Նախ մեզանից խաղաղությունը՝ Քրիստոս, որ քանդելով պատեռի միջևորմը, երկուսին մեկ դարձրեց [հմմտ. Եփ. Բ 14], և ապա Աստծո ավետիսի հնչումը, որ ավետարանեց խաղաղություն հեռավորներին և մերձավորներին [հմմտ. Եփ. Բ 17]:

Սկզբում Որդին հնազանդեցնելով այս բնությունը՝ Հոր կամքը մղեց բարեհաճության, և ապա Հոգին մեր տկարությանը օգնության հասնելով՝ Հորը բարեխոսեց [հմմտ. Հռոմ. Ը 26]:

Նախ Քրիստոս խաչի մահվանը հնազանդվելով [հմմտ. Փպ. Բ 8]՝ թշնամությունն իր անծի մեջ խափանեց [հմմտ. Եփ. Բ 16], և ապա Հոգին գալով՝ երկրավորներիս երկնայինների տոնախմբությանը մասնակից դարձրեց:

Խորհո՛ւրդ լայն և ընդարձակ. [այստեղ] Աստծո գիտության առավելությունն է երևում, եղբայրներ՛ր, որովհետև «նրա արդարությունը լեռների [պես] է, և իրավունքը՝ բազում խորությունների [սման]» [հմմտ. Սաղմ. ԼԵ 7]. ինչպես վկայեց մարգարեն¹¹:

Պողոսն աղոթում է, որ աշակերտներն այս իմաստության Հոգին ընդունեն [հմմտ. Եփ. Ա 17], որ հիացնում է քննողներին և բազմացնում առ Աստված փափագն ու իղձը:

Ինչի՞ համար էր Որդու մարմնանալը, և ինչո՞ւ մարմնանալով չեղավ աշխարհի փրկությունը:

¹¹ Նկատի ունի Սաղմոսաց գրքի հեղինակ համարվող Սուրբ Դավիթ թագավորին:

Ի՞նչ պատճառով անպարտականը նախատանիքի խաչը [կրեց], և ինչո՞ւ դրանից հետո մարդիկ կատարյալ [չդարձան]:

Ինչո՞ւ աշակերտները Որդու հետ շրջեցին ու բնակվեցին, և իմաստությունից զուրկ մնացին,

Եւ ի՞նչ պատճառով միայն Հոգու իջնելու ժամանակ այնքան շնորհներով զարդարվելով պսակվեցին:

Ինչի՞ր համար Քրիստոս այնքան մեծամեծ նշաններով որևէ մեկին [չկարողացավ] հավանեցնել, իսկ Պետրոսի մեկ խոսքով այսօր երեք հազար հոգի աշակերտեցին [տե՛ս Գործք Բ 41]:

Սա պետք է քննել և Աստծո իմաստության գանձերը սրտերի շտեմարաններում ամփոփել, որպեսզի կարող լինե՞ք նախ սրտով հավատալ արդարությանը, և ապա բերանով խոստովանել փրկությունը [հմմտ. Հռոմ. Ժ 10]:

Քանզի այս փրկագործության եղանակը ո՛չ թե զորությամբ, այլ իրավունքով է և արդարությամբ, որպեսզի Աստծո ամենակարող զորության հետ նաև ամենաբավ ողորմությունը հաստատվի երկնքում և երկրի վրա [հմմտ. Եր. Թ 23-24, Ես. Ա 27]:

Քանզի Նա¹², որ մարդուն իր բարերարության պատկերով ստեղծեց բարի [հմմտ. Ծննդ. Ա 26-31], և նրան բանասարկուի նախանձից դավաճանված ու մեռած տեսավ, ըստ [իր] արդար իրավունքի չկամեցավ պատրանքով բռնվածին թողնել որսողի ձեռքում: Համագո Բանին ասաց.

«Իջի՛ր, հաղորդվիր այն բնությանը, որին բարի ստեղծեցինք:

Չլինի թե իսկապես [այդ բնությունից] է բխում այն չարության ծուխը, որ կուտակվում է իմ առաջև [հմմտ. Ծննդ. Չ 13, ԺԸ 20]:

Իմացի՛ր, քանի որ եթե ըստ բնական կրքերի է տկարանում իմ օրենքը [պահելու հարցում],

¹² Նկատի ունի Հայր Աստծուն:

Ենթակա չէ [այն] պատուհասին, որ նա սահմանված կարգով բերում է իր վրա:

Իսկ եթե օտար է բնությունից, և խորթ են [մեղանչելու] այն դեպքերը,

[Ապա] պատրողին հանդիմանելով դատապարտի՛ր և նրան¹³ ողորմությամբ և գթությամբ տրոգի՛ր» [հմմտ. Ես. Խ 31, Եզ. ԼԶ 26, Սոփ. Գ 17, Հռ. ԺԲ 2, Բ Կորնթ. Դ 16, Փայ. Գ 21]:

Այս պատվերն առնելով Հորից՝ Բանը հաղորդվեց մարմնին, և մարմինը խառնվեց¹⁴ Աստծուն. խառնումն անճառ [է] և էությունների հատկությունը՝ անշփոթ, որպեսզի մարմնի հետ կապված բոլոր հակաամանքները անձնական փորձով ճանաչի:

Մնաց նրանով երեսուն տարի և չխոնարհվեց բնությանը օտար ներգործության առջև: Եկավ Հորդանան՝ ամենակատար մաքրությունը Հորը նվիրելու, և դավանվեց Նրա կողմից [որպես] հավասարապատիվ սիրելի Որդի [հմմտ. Մատթ. Գ 17]:

Հոգուց տարվեց բանասարկու թշնամու դեմ մարտի ասպարեզ [հմմտ. Մատթ. Դ 1]

Եւ ճանաչեց մեքենայությունները թունավոր օձի նետերի,

¹³ Այսինքն՝ մարդուն:

¹⁴ Խառնումն աստվածաբանական եզրն աստեղ կիրառված է «անշփոթ միավորություն» իմաստով (տե՛ս ՆԲՀԼ, էջ 929), օրինակ՝ «յերկուց մի որդի անճառելի խառնամաք» (Ներսէս Ծնորհայի, Խոստովանութիւն հաւատոյ ճշմարիտ քրիստոնէից, գոր պարտ է ի ժամ վաղճանին նախքան զհաղորդելն խոստովանեսցի և ապա հաղորդեսցի, աշխ.՝ Ա. Աւետիսեանի (Մատենագիրք Հայոց, հտ. ԻԱ, Գիրք Ա), Երևան, 2018, էջ 1216, «Նոր այս խառնումն սքանչելի, Աստուած ընդ մարդ բնութեամբ խառնի/ Ո՛չ էութիւնն փոփոխի, եւ ո՛չ ձևով կերպարանի» Ն. Ծնորհայի, Բան հաւատոյ, աշխ.՝ Գ. Գասպարյանի (Մատենագիրք Հայոց, հտ. ԻԱ, Գիրք Ա), Երևան, 2018, էջ 233:

Որը¹⁵ մոլորեցնում էր սրանց¹⁶ բնության օրենքի համա-
ծայն՝ խոտորվելու դեպի մեղքերի վիհը:

Ծոմ պահեց կերակուրներից արդարների գևդի դասերին
հավասար

Եւ ապա թույլ տվեց մարմնին շարժվել ըստ իր բնական կա-
րիքների ցանկության:

Իսկ թշնամին առնթեր կանգնած սպասում էր,

Եւ որքան [ժամանակ] Նա անձնիշխան կամքով չէր ձգտում
կերակուրներ փափագելուն,

Ոչ էլ [սատանան էր] կարողանում համարձակվել [իր] մեքե-
նայությունները դեպի նպատակն արձակել:

Եւ երբ շարժվեց¹⁷, [Սատանան] հուսաց սրված նետերը
պատկանդարանից¹⁸ դեպի Տերն արձակել:

«Հաց դարձրո՛ւ քարերն այդ քո զորությամբ, – ասում է¹⁹, –
[դու] որ այդչափ պահքի ժուժկալությանը տոկացիր, և Աստ-
ծուն հակառակ արարիչ եղի՛ր»:

Եւ լսելով, թե «գրված է, [որ] Աստծո խոսքով է ապրում
մարդ, առավել քան հացով», [Սուրբ] Գրքով էր ջանում նրան
որսալ²⁰ [հմմտ. Մատթ. Գ 3-7]:

Այնժամ ճանաչեց որոգայքները, խայտառակեց մեքենա-
յությունները, պատռեց պարուրյալ թակարողը, որով որսում էր
մարդկանց: Պարզեց իր Հոր և հրեշտակների առաջ, և ինք-
նիշխանությամբ հեռու քշեց մոլորեցնողին՝ այս մոլորված
բնության օրենքների համաձայն:

Մանուկ Դանիելն արդար դատեց դատաստանը, ամաչեց-
րեց մարդկանց մոլորեցնող չար ծերերին, որ իրենց մեղքերը
սրանն²¹ էին հայտարարում [տե՛ս և հմմտ. Դան. Ա(ԺԳ) 1-64]:

¹⁵ Նկատի ունի օձ-սատանային:

¹⁶ Նկատի ունի մարդկանց:

¹⁷ Այսինքն՝ երբ Քրիստոսի մարմինը սկսեց բնական կարիքների համապա-
տասխան ցանկություններ առաջացնել:

¹⁸ Կապարն:

¹⁹ Նկատի ունի սատանային:

²⁰ Այստեղ՝ խորամանկությամբ խաբել:

²¹ Դան. Ա(ԺԳ) 2-ում հիշատակված Շուշանին:

«Այ չարության օրերով ծերացած, – ասում է –, այժմ եկան հասան քո մեղքերը, որ գործում էիր սկզբից, որովհետև անիրավ դատաստան էիր կատարում, և մարդկանց անմեղ բնությունը քեզ հանցակից [դարձնելով] դատապարտում էիր [հմմտ. Դան. Ա(ԺԳ) 52-53]: Քո չար նախանձը մոլորեցրեց քեզ, և մարդատեցության ախտը շրջեց քո սիրտը [հմմտ. Դան. Ա(ԺԳ) 56]: Այդպես էիք խաբում մարդկանց որդիներին, և նրանք վախից կամակից էին դառնում ձեզ, բայց Երկնավոր Հոր Որդին հանձն չառավ ձեր անօրենությունները» [հմմտ Դան. Ա(ԺԳ) 57]²²:

Այս ասելով և ոտնակոխ անելով ծերացած օձին՝ առաջին հաղթանակը և [մարդկային] բնության անմեղությունը հայտնի դարձրեց իր Հոր և հրեշտակների առաջ:

Այնժամ մոտեցան հրեշտակները, և ծառայում էին նրան ինչով անհրաժեշտ էր [հմմտ. Մատթ. Դ 11], երբ որ հաղթեց չարին [մարդկային] բնությանը հատուկ [ուժեղով] և այս արդարացված բնությամբ գորավոր բազուկներով տիրեց հակառակորդ դևերի վրա:

Արդ՝ քանզի միայն նա եղավ չարից անմասն և Աստծուն հաճելի [Եբր. Դ 15], այդ պատճառով սկսեց մարդկանց կոչել կյանքի ապաշխարության՝ Արքայության հույսով [հմմտ. Մատթ. Դ 17]:

Իսկ նրանք, մոլորությունից խավարած, դժվարանում էին հետևել կոչողին,

Եւ դեպի երկիր սահաճ-ընկածների [համար] ծանր էր երկնքին նայելը:

²² Այստեղ վերաշարադրված են Շուշանի մասին պատումի Ա 52–53, 56–57 համարներում Դանիելին վերագրված խոսքերը (հունարեն Յոթանասնիցում LXX-ում և լատիներեն Վուլգատայում պատումը կցված է Դանիելի գրքին [ԺԳ 52–53], իսկ այլ տարբերակներում [Թեոդոտյան, հին լատիներեն, հայերեն և այլն] դրված է գրքի սկզբում որպես ներածություն), որտեղ մարգարեն դատապարտում է նրա գայթակղիչներին, ովքեր որպես դատավորներ նաև կեղծ վկայություն էին տալիս՝ իրենց մեղքի մեջ մեղադրելով այլոց: 57-րդ համարում «Հուդայի դուստրը» այստեղ փոխարինվել է «Երկնավոր Հոր Որդին» արտահայտությամբ – ծնթգ. ԱՏ:

Եւ այս աշխարհի ցանկությամբ մոլորվածները չէին կամե-
նում վերին փառքը,

Իսկ նրանց անձնիշխան Ստեղծողը չէր կարող [նրանց]
բռնությամբ ձգել,

Եւ նշաններով և վարդապետությամբ քչերը համաձայնու-
թյան եկան:

Այդ դեպքում ի՞նչ աներ, ո՛վ սքանչելիք, քանզի մարդիկ
պատժի էին արժանի, և պետք էր պատիժն այն հատուցել, և
ապա արդար Աստուծոց ողորմության արժանանալ:

Նա, որ անպարտ գտնվեց իր Հոր առաջ, ի գործ ղնելով իր
բազմապատիկ իմաստությունը, մեռավ բոլոր պարտականե-
րիս փոխարեն և ջնջելով պատռեց մեր հանցանքների գիրը
[հմմտ. Կող. Բ 14]:

Նա, որին մահը չէր կարող բռնել, իջավ դժոխք, և արձակեց
մեռյալներին [հմմտ. Ա Պետ. Գ 18-19]: Նույն ինքը եկավ ող-
ջերի մոտ և զորացրեց նրանց: Եւ նրանց, որոնք Ադամի հան-
ցանքով մահվան դատապարտության ներքո էին, իր անմե-
ղության շնորհով վեր բարձրացրեց դեպի արդար կյանքը և
ողջերի երկիրը:

Քանզի ինչպես իմանում ենք Պողոսից. «Հայտնված [է] մեծ
խորհուրդն աստվածաշտության, որ երևաց մարմնով, ար-
դարացավ հոգով, հայտնվեց հրեշտակներին, քարոզվեց հե-
թախոսներին, հավատարիմ եղավ աշխարհում, և համբարձ-
վեց փառքով» [Ա Տիմ. Գ 16]:

Եւ մտնելով վարագույրի ներքին կողմը՝ [հմմտ. Եբր. Զ 19-
20] այդ մեծ քահանան իր պատվական արյունն ընծայեց Հո-
րը՝ իբրև պատարագ [Եբր. Թ 11-12]:

Բացահայտեց նաև նենգողի պատրանքները, և բարեխո-
սում էր մարդկանց հետ խաղաղություն հաստատելու [հա-
մար]:

Իսկ բարի Հայրը, հավանելով սիրելի Որդու սքանչելի գործերը և ջնջելով Ադամի՝ առաջին հոր դատապարտության կնիքը²³,

Տվեց նրան Հոգին՝ սփռելով արյամբ գևված իր հոտի վրա, Վերին հույսով լուսավորելու [համար] նրանց մտքի հայացքը:

Այնժամ Սիածինը ստանալով Միսիթարիչին՝ ցողեց Երուսաղեմի [վրա] և ձյունացրեց այնտեղ գումարված թագավորներին՝ ըստ նախագուշակ երգողի [Սաղմ. ԿԷ 15]²⁴:

Որ եկավ և բնակվեց մեր սրտերում և լուսավոր դարձրեց Քրիստոսի սիրո գերազանցության լայնությունն ու երկարությունը [հմմտ. Եփ. Գ 18-19]:

Եւ որովհետև ձրի շնորհ էր [տրված] Քրիստոսի մահվան փոխարեն, այս պատճառով արժանավորների և անարժանների վրա հավասարապես է տարածվում:

Ուստի և Պետրոսի մեկ խոսքով երեք հազար անձինք աշակերտում են այսօր [Գործք. Բ 41]:

Ուրեմն ճշմարիտ էր վկայությունը, որ սքանչելի է այս մեծ օրվա շնորհը:

Քանզի ինչպես սերմանելուց ավելի հավաքելն է ախորժելի, Այնպես էլ Քրիստոսի խորհրդի բոլոր սերմերի պտուղն է այսօր քաղվում:

Այս է Սուրբ Հոգին, որի մասին վկայեց ինքը [Քրիստոս], [թե պիտի] ուսուցանի մեզ և հիշեցնի իր ասած ամեն բան [հմմտ. Յովհ. ԺԴ 26]:

Այս քաղցր ցողը կենդանություն տվեց Քրիստոսի խոսքերի բույսերին [հմմտ. Չաք. Ը 12], և օրհնելով պսակեց իր գործե-

²³ Սա Կրկնվող մոտիվ է Ադամի մասին պարականոն ավանդություններում – ծնթգ. ԱՏ:

²⁴ Հավանական է, որ «Այնտեղ գումարված թագավորներին» արտահայտությունը ակնարկ է Առաքյալներին՝ արձագանքելով Մատթ. ԺԹ 28-ին (տե՛ս Դուկաս ԻԲ 30): Սաղմոսերգուի հիշատակմանը նախորդում է ակնարկ Հովհ. ԺԵ 26, ԺՉ 7-ին – ծնթգ. ԱՏ:

րի տնօրինական տարին [հմմտ. Ես. ԿԱ 1-2]²⁵, որի համար աղաղակում է եկեղեցին. «Ձմեռն անցավ, այգիները մեր ծաղկեցին, և տվեցին իրենց հոտը» [հմմտ. Երգ Բ 11-12]:

Այս առավոտ երկնավոր Հայրը նայեց երկրին, արբեցրեց այն Սուրբ Հոգու [հմմտ. Յովհ. Է 38] հորդառատ գետով և բազմապատիկ տունների արմատներից փթթեցնելով՝ ծաղկեցրեց առաքիլության զանազան բույսեր [հմմտ. Եզ. ԽԷ 12], ինչպես որ ասում է մարգարեն:

Ահա ընծա, որ չի չափվում,

Եւ պարզև, որին որևէ գործ զուգահավասար չի դառնում:

Ահա տուրք, որի բնության իսկությունը չի պարփակվում,

Եւ շնորհ, որի հեղումը վեհագույն մտքով իսկ չի սահմանվում:

Ահա ողորմությունն առատ, որի համեմատ աշխարհի ամեն թագավորություն փոքր է,

Եւ մխիթարություն, որին մարմնավոր ուրախությունը չի լծորդվում:

Քանզի ո՞վ կարողացավ աշխարհին տիրելու հետ նաև անապականություն ստանալ,

Կամ ո՞ր թագավորն է [երբևէ] ձեռնարկել մահը կյանքի փոխել,

Կամ ո՞ր մարմնավոր երանությունն է կարողացել հավիտենական կյանքն ընդգրկել:

Իսկ նա, այսօր առաքյալների դասերի վրա իջնելով, գորացրեց նրանց բազուկները [Սուրբ Հոգու] այս [շնորհը] ողջ տիեզերքին բաշխելու [համար]:

Քանզի նրանք սրանով²⁶ լցված՝ ստվերով հիվանդներ բժշկեցին [հմմտ. Գործք Ե 15], թաշկինակով ցավեր փարատեցին [հմմտ. Գործք ԺԹ 11-12], ձեռքերով մեռյալներին հա-

²⁵ Տե՛ս Դուկ. Դ 19, որտեղ մեջբերվում է Ես. ԿԱ 2-ը: Ներսեսը, կարծես, կողմնակից է համատես Ավետարանների ավանդությանը, ըստ որի՝ Հիսուսի երկրային ծառայությունը կատարվել է մեկ տարվա ընթացքում – ծնթգ. ԱՏ:

²⁶ Սուրբ Հոգով:

րութիւն տվեցին [Գործք Ի 9-10], կաղերին քայլեցրին [Գործք Գ 1-9], կոյրերի [աչքերը] լուսավորեցին [Գործք Թ 3-18]՝ առավել հոգևոր աչքերը, քան թե մարմնավոր, երկինք հրավիրեցին, անվախճան փառքի ժառանգորդ դարձրին մարդկանց: Ահա, ուրեմն հայտնի եղավ, թե այս երկրավորներից ոչինչ զուգահաւասար չէ երկնային ընծաներին:

Միայն բանականների ազգը չէ, որ եղավ սրան ընդունող, այլև մարդկանցից առավել անշունչ տարրերը²⁷ սրանով գորացան: Որ և նույն ինքը իջնելիս՝ նախ տունը լցրեց սքանչելապէս, և ապա հանգավ նրանց վրա սիրողապէս:

Քանզի ասում է. «Եւ երբ Պենտեկոստեի օրերը լրացան, բոլորը միասին միաբան էին: Եւ հանկարծակի հնչուն եղավ երկնքից՝ ասես սաստիկ հողմից եկած լիներ, և լցրեց ամբողջ տունը, որտեղ նստած էին: Եւ երևացին նրանց բաժանված լեզուներ՝ ասես հրից, և նստեցին նրանցից յուրաքանչյուրի վրա: Եւ ամենեքը լցվեցին Սուրբ Հոգով, և սկսեցին խոսել այլևայլ լեզուներով, ինչպէս որ Հոգին տալիս էր նրանց բարբառել» [հմմտ. Գործք Բ 1-4]:

Ասում է. «Միաբան էին, միասին», որպէսզի ցույց տա, թե ոչ միայն տասներկուսն էին, այլև Աստուածածին Կույսն էր նրանց հետ՝ կանանցով հանդերձ, որոնք ծառայում էին Հիսուսին Գալիլիայում և [Նրա] հարության տեսնողները եղան: Նրանց հետ նաև յոթանասուն [աշակերտների] զունդն էր բոլոր ծանոթներով հանդերձ:

Արդ, եկավ նրանց վրա Սուրբ Հոգին՝ Քրիստոսի՝ նախապէս [տված] խոստման համաձայն, որ ասաց. «Ահա ես իմ Հոր ավետիսն եմ առաքում ձեզ, և դուք մնացեք Երուսաղեմ քաղաքում, մինչև որ ընդունեք երկնքից իջած զորութիւնը» [հմմտ. Գործք Ա 4]:

Եւ հողմի որոտման հնչուն եղավ, որով ցույց էր տալիս հեղման առավելությունը: Դարձյալ քանզի նույն Հոգին էր, որ սկզբում շրջում էր ջրերի վրա [հմմտ. Ծննդ. Ա 2], [այժմ] լցրեց

²⁷ Ինչպէս օրինակ կրակը, Գործք Բ 3 – ծնթգ. ԱՏ:

տունը իմանալի զորությամբ, իսկ հրի զգալի տեսքը պարզամիտներին հիացնելու համար էր:

Եւ ապա այն հրից բաժանվեց լեզուների, և հանգավ նրանցից յուրաքանչյուրի վրա, որով ազդարարում էր այլատեսակ լեզուներով խոսելու շնորհի պարգևները:

Ուստի և նրանց զգալի մարմի վրա զգայարանների համար տեսանելի հրեղեն լեզուների հանգչելու հետ միասին նրանց միտքն իմանալի զորությամբ իմաստնացած՝ սկսեց այլատեսակ խոսքերով շարժել իրենց լեզուները:

Ըստ որում ասում է. «Խոսում էին այլևայլ լեզուներով, ինչպես որ Հոգին էր տալիս նրանց բարբառել» [հմմտ. Գործք Բ 1-4]:

Ոչ թե լեզուներով [խոսելու] շնորհն էր նախապատվում [հմմտ. Ա Կորնթ ԺԴ 1-39], այլ քանզի չկար [դրան] մոտ ոչ մի այլ նշան՝ հռչակելու համար այն շնորհը, որով զորացան:

Իսկ այլատեսակ [լեզուներով] խոսելով՝ քաղաքի ամբողջ հիացած ամբոխին հավաքեց նրանց շուրջը, ինչպես որ ասում էլ է. «Բազմությունը միաբան եկավ և խռովեց, և ամենքը զարմացած հիանում էին» [հմմտ. Գործք Բ 6-7], և ուրիշներն էլ սքանչելի այլափոխումը ծաղրելով՝ ասում էին, թե «հարբած կլինեն» [հմմտ. Գործք Բ 13]:

Արդ, որպեսզի այս շնորհն ամենքին այսպես հայտնի լինի, Հոգին նրանց վրա իջնելիս ոչ թե Զրիստոսի խոստման համաձայն ներգործեց, այլ լեզուներով, քանզի [Զրիստոս] չէր ասել, թե «Այն Հոգով լեզուներով եք խոսելու», այլ՝ թե «կուսուցանի ձեզ, և կհիշեցնի այն ամենը, ինչ ասացի ձեզ» [հմմտ. Հովհ. ԺԴ 26]:

Եթե նրանք սկզբում սա ստացած լինեին, այնպես չէին ամբոխվի, և բազմությանը իրենց այլատեսակ [լեզուներով] խոսելը տեսնելու նպատակով չէին հրապուրի: Այդ պատճառով ամենաիմաստուն [Սուրբ Հոգին] նախ զարմանալի այլափոխմամբ հուզեց նրանց, ասես մանուկների՝ խնջույքների զվարճության ժամանակ:

«Քանզի [Նրանք], որոնք երեկ և այսօր գալիլեացի գոեհիկ և շինական մարդիկ էին, ահա, – ասում են, – ճարտարաբանում են իբրև իմաստուն հելլենացիներ, և այլք պարթևական տարաշխարհիկ բարբառով են Նրանց պատասխանում:

Պետրոսը, որ Կափառնաում [քաղաքում էր] սևվել-մեծացել [իմմտ. Մատթ. Ը 5, 14, ԺԷ 23-26], լսում ենք, որ համարձակ խոսում է հռոմեացիների լեզվով²⁸:

Եւ Փիլիպպոսը, որ Գալիլիայի Բեթսայիդայից էր [իմմտ. Յովհ. Ա 44]՝ արաբացիների բարբառով էր իր խոսքը կազմում²⁹:

Հովհաննեսը, որ Եգարեթում էր սևվել-մեծացել՝ ինչպե՞ս է կիլիկեցիների լեզվով³⁰ մեզ հարց տալիս»:

Եւ սրանք լսում են Թովմասին, որ եթովպացիների լեզվով մարգարեների խոսքերն է հիշեցնում³¹:

²⁸ Պետրոսի՝ Հռոմում քարոզած և նահատակված լինելու մասին տե՛ս Համաբարբառ Յայտնաուրք (Նախածերենցյան 6 խմբագրությունների), Զ - Յունիս, աշխ.՝ Մարիաննա Ապրեսյան, Ս. Էջմիածին, 2011, էջ 291:

²⁹ Ըստ ավանդության, տասներկու առաքյալներից Փիլիպպոսը քարոզել է Փոյուզիայում և նահատակվել Հիերապոլիս քաղաքում, այսինքն՝ արաբների հետ առնչություն չի ունեցել (տե՛ս նույն տեղում, էջ 294-295): Ամենայն հավանականությամբ, Լամբրոնացին այստեղ նկատի ունի Փիլիպպոս սարկավագին (Գործք Զ 5), որն ըստ Գործք Ը 26-40 քարոզում է եթովպացիներին և մկրտում նրան:

³⁰ Կարծում են, այստեղ կարելի է տեսնել Հովհաննես Ավետարանչի՝ «Ասիայում» քարոզած լինելու և ապա, ըստ ամենայնի, Կիլիկիայով Եփեսոս անցնելու ավանդության արձագանքը, տե՛ս նույն տեղում, էջ 293:

³¹ Թովմասի՝ եթովպացիների երկրում ավետարանելու մասին տե՛ս նույն տեղում, էջ 286:

«Թաղեոսն այն տգետ՝ տեսե՞ք, որքան վայելուչ է իր խոսքն ասում Մեծ Հայքի³² բառերով³³։

Եւ պատանի Բարդուղիմեոսը, ասես մարերի մեջ ծնված, նրանց խոսքն է հնչեցնում»³⁴։

Ո՛վ սքանչելիք. գանազան երկրներում ենք ծնվել և չարչարանքով նրանց բարբառները սովորել, իսկ ահա սրանք, որոնք այն քաղաքները չեն տեսել, առանց ջանքի նրանց լեզուներով են խոսում։

«Մեծ է, – ասում են, – սքանչելիքի հրաշքը, և թե ինչ ավարտ է ունենալու, չենք կարողանում հասկանալ»։

Այնժամ Պետրոսը տասնմեկ [առաքյալներով] հանդերձ վեր կենալով բարձրացրեց իր ծայնը և սկսեց տարակուսանքները փարատել [հմմտ. Գործք Բ 14-39]։

³² Գործք Բ 9-ի իր մեջբերման մեջ Եկեղեցու Հայրերից Տերտուղիանոսը (մահ. 220) ունի հետևյալը՝ «պարթևներ, մարեր, էլամացիներ և նրանք, ովքեր բնակվում են Միջագետքում, Հայաստանում [«Հրեաստանի» փոխարեն], Փոյուզիայում, Կապադովկիայում և նրանք, ովքեր բնակվում են Պոնտոսում և Ասիայում...» (*Adversus Judaeos*, 7.4)։ Սուրբ Օգոստինոսը (մահ. 430) նույնպես «Հայաստան» է ընթերցում՝ «Հրեաստան»-ի փոխարեն (*Contra epistulam Manichaei quam vocant fundamenti*, 204)։ Ընդհանրական Եկեղեցու այս երկու հայրերն էլ գործել են Հռոմեական կայսրության նահանգ հանդիսացող Հյուսիսային Աֆրիկայում, որտեղ «Հայաստան» տարբերակն, ըստ երևույթին, ունեցել է վստահելի բնագրային հիմք՝ հաշվի առնելով աստվածաշնչյան հատվածում հիշատակված երկրների և ժողովուրդների աշխարհագրական տարածվածությունը։ Ավելին, Հայաստանի հիշատակումը «օտար» երկրների շարքում առավել տրամաբանական է, քան տեղական Հրեաստանը, որի մասին Տերտուղիանոսը վկայակոչում է շարունակության մեջ. «...և Երուսաղեմում հրեաները» (*Adversus Judaeos*, 7.4)։ Վաղուց ի վեր ընդունված է, որ Գործք Բ 9-ի պահպանված տեքստում ուղղում կատարելու անհրաժեշտություն կա, որի վերաբերյալ տե՛ս Richard I. Pervo, *Acts: A Commentary, Hermeneia—A Critical and Historical Commentary on the Bible* (Minneapolis: Fortress Press, 2009), էջ 67։ Առաջարկվող ուղղումներից Պերվոն նախընտրելի է համարում *Ἀρμενίαν* ընթերցումը – ծնթգ. ԱՏ։

³³ Տե՛ս *նույն տեղում*, էջ 296-297։

³⁴ Տե՛ս *նույն տեղում*, էջ 294-295։

«Ո՛վ հրեաստանցիներ, և ամենքդ, որ բնակվում եք Երուսաղեմում, սա թող հայտնի լինի ձեզ, և ունկն դրեք իմ խոսքերին:

Սա գինուց արբեցություն չէ օրվա երրորդ ժամին³⁵ [Գործք Բ 15], ինչպես դուք եք կարծում, այլ բերկրության բաժակ է և անապականության առհավատցյա, մարգարեների կանխագուշակած և այսօր իր լրումին հասած խորհուրդ:

Ո՛վ օրենստույցներ, և մարգարեների աշակերտներ, սա Յովելի ասած [այն խոսքն] է, որ միշտ ընթերցում եք, որը կատարվեց (հմմտ. Հովել Բ 28): Քանզի ահա վերջին օրերին հե-

³⁵ Գոյություն ունի Ժամարաժանման 2 տեսակ՝ 1) օրը բաժանել 24 հավասար ժամի՝ յուրաքանչյուրը 60 րոպե (այժմ ընդունված տարբերակն է), 2) ցերեկն ու գիշերը առանձին-առանձին բաժանել 12-ական ժամերի: Սուրբգրային, ինչպես նաև եկեղեցական ծիսական ժամերի հաշվարկը կատարվում է երկրորդ տարբերակով: Այսինքն՝ ամառային արևադարձի շրջանում, երբ արևածագը տեղի է ունենում ժամը 04:30, սուրբգրային ցերեկային ժամը հավասար է 75 ր., այսինքն՝ ճաշու երրորդ ժամը 07:00-08:15 ընկած հատվածն է (04:30 + 2·75 ր. = 07:00), գարնանային և աշնանային օրահավասարներին, երբ արևածագը տեղի է ունենում ժամը 06:00, սուրբգրային ցերեկային ժամը հավասար է 60 ր., այսինքն՝ ճաշու երրորդ ժամը 08:00-09:00 ընկած հատվածն է (06:00 + 2·60 ր. = 08:00), իսկ ձմեռային արևադարձի ժամանակ, երբ արևածագը տեղի է ունենում ժամը 07:30, սուրբգրային ցերեկային ժամը հավասար է 45 ր., այսինքն՝ ճաշու երրորդ ժամը 09:00-10:00 ընկած հատվածն է (07:30 + 2·45 ր. = 09:00) (հաշվարկը կատարել է Տ. Հայկազուն քին. Մահակյանը լուսահոգի աստղագետ-տոմարագետ Գրիգոր Բրուսյանի առաջարկած մեթոդաբանության հետևողությամբ, տե՛ս Լուսինե Թումանյան, «Վանականների սնունդը և Մեղան օրինելու կարգը հայկական վանքերում», Աստվածաբանական և կրոնագիտական հոդվածների ժողովածու, Աստվածաբանության ֆակուլտետ, Երևան, 2020, էջ 130-131): Համաձայն Եկեղեցական հայրերի մեկնությունների՝ 3-րդ ժամին է տեղի ունեցել մարդու արարումը, նրա մեղանչումը, Աստծո Որդու մարդացումը, այլև երրորդ ժամին է խաչ բարձրացվում Քրիստոս (ինչպես Ադամով մահվան դատապարտվեցինք, նույնպես և Քրիստոսով բոլորս կենդանացանք), և նույն ժամին էլ Սուրբ Հոգին իջնում է առաքյալների վրա վերնատանը՝ բազմատեսակ շնորհներով զարդարելով նրանց և նրանցով էլ՝ բոլոր հավատացյալներին (տե՛ս Ժամագիրք Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ, Սբ. Էջմիածին, 2016, էջ 275):

դեց Աստված իր Ոգուց զանազան հասակի մարմնավորներինս վրա, և մարգարեանում ենք:

Այս Հիսուս Եւազովրեցին, որ ձեզ երևաց նշաններով ու հրաշքներով և տարապարտորեն խաչվեց, ելավ երկինք և նստեց Աստծո աջ կողմում, և Սուրբ Հոգու այս պարզան ընդունելով Հորից՝ մեզ վրա սփռեց [իմմտ. Գործք Ա 6-9]:

Նա, երբ որ փառքով երկինք էր համբարծվում, մեզ խոստացավ, և մտնելով երկինք՝ Հորը և Հոգուն հավասար նստելով՝ այս ասաց.

«Ես այն գործերը, որ ինձ վստահեցիք, երկրի վրա կատարեցի, իմ Հոր անունը փառավորեցի մարդկանց առաջ, չարի նախանձից ապականված մեր պատկերակցին, մեր աստվածության բնությանը խառնելով, սքանչելապես սրբեցի³⁶: Իմ մահը փոխանակ ողորմելի և տառապած մարդկային ազգին տալով՝ ազատեցի նրանց անեծքից: Եւ այժմ նույն մարմնով գալով՝ երկրպագություն եմ ընդունում երկնավորներից:

Այսուհետև քեզ է հասել գործելու ժամանակը, ո՛ր վառակից իմ Հոգի, և հարկ է, որ քո մարդասիրությունը ցույց տաս երկրի վրա: Այսուհետև քեզ եմ վստահում մեր Աստվածության անունը մարդկանց առաջ պատվելը:

Իմ մարմնի պատարագով Հայրս ներեց և թողեց նրանց պարտքերը, որով խափանվեց Քո հեղվելը նրանց վրա: Ինձ ընդունեց որպես առհավատջա նրանց կողմից, և քեզ թող տա նրանց [որպես] խաղաղություն:

Սիրով իջի՛ր այժմ նրանց մոտ, [ո՛ր] սիրո՛ւ աղբյուր, և մխիթարի՛ր նրանց, որոնք պանդխտության վայրում տառապում են նժդեհ և անցավոր կյանքով: [Ե՛տ] դարձրու նրանց այն ունայնություններից, որոնցով իզուր գրգռում է թշնամին, [և շեղում է] այս բազմապատիկ օթևաններին նայելուց, որ պատրաստել ենք նրանց համար³⁷: Բաշխի՛ր նրանց առատ իմաստություն, որպեսզի եղեռնագործը նրանց չմոլորեցնի,

³⁶ Ամփոփում է Հովհ. ԺԷ 4, 11, 15, 17-19, 21-22, տե՛ս. Բ Կորնթ. Ե 17-19 – ծնթգ. ԱՏ:

³⁷ Ակնարկ է Հովհ. ԺԱ 1-3 – ծնթգ. ԱՏ:

Հաղորդակից եղա նրանց կարիքներին, և փորձով ճանաչեցի, որ տկար և դյուրակործան բնություն է վիճակվել [նրանց], այդ պատճառով աղաչում եմ, անբաժան եղիր նրանցից և զորացրո՛ւ նրանց ընդդեմ բոլոր փորձանքների, սանձի՛ր մարմնի կամքը և զորացրո՛ւ մտքի կամքը:

Քեզ եմ տալիս նրանց, քեզ եմ հանձնում նրանց, նրանց խոստացել եմ [ուղարկել] Քեզ, և այժմ Քո պահպանությանն եմ թողնում նրանց բոլորին, որպեսզի զուր չլինի նրանց համար իմ արյան հեղումը:

Առատացրո՛ւ նրանց մեջ, ո՛վ համագոյակից իմ Հոգի, բժշկության շնորհները, մարգարեությունը, վերինը խորհելը, ստորինն ատելը:

Ես թեպետև բազում անգամ ճառեր էի խոսում նրանց [համար] երկնքի արքայության մասին, [սակայն] սիրով ականջ չէին դնում լսելու համար:

Բայց երբ մարմնի բժշկություններ էի կատարում՝ մեռելների էի հարություն տալիս, կույրերին էի լուսավորում, կաղերին՝ քայլեցնում, ամենքի սերն իմ հանդեպ աճելով առատանում էր:

Հոգու հացը՝ իմաստության խոսքերը տալիս էի, և ոչ ոք չէր զգաստանում:

Բայց երբ մարմնավոր հացը առատապես տվեցի նրանց հագեցնելու համար, այնչափ շատացավ իմ հանդեպ նրանց սերը, մինչև անգամ կամենում էին բռնի ուժով տանել և թագավոր ինձ կարգել [իմմտ. Հովհ. Չ 1-15]:

Այս է մարդկային ազգի մտքի ճանապարհը, որ փորձով [ճանաչեցի].

Անկարող են դարձել իրենց խոստացված այս վերին բարիքների մասին խորհելու, ծանոթ չեն այս երկնային փառավորությանը, այլ միշտ երկրի վրա են դեգերում, կասկածներ ունեն այս ճշմարտության [հանդեպ], իսկ այն՝ [երկրայինը] նրանց կողմից վայելուչ կյանք է համարվում:

Որի համար դու նրանց պարզամտությունը նախ նշաններով և սքանչելիքներով զարմացրո՛ւ և նրանց կասկածները բժշկության շնորհով ուղղիր դեպի հավանության հավատը:

Մի՛ արգելիր քո առատ շնորհները բաշխել ի փառս և ի գովեստ մեր աստվածության:

Մե՞ծ [բան] է, որ երկնքի պես երկիրն էլ լցվի մեր աստվածության փառքով, և ինչպես հրեշտակները՝ այսպես էլ մարդկանց հաստատենք որպես մեր անվան օրհնաբանիչներ: Չարմանալի չէ, եթե մեր մոլորված արարածներին մեր բազմապատիկ զորությամբ դեպի մեզ բերենք:

Արդ՝ իջի՛ր, աղաչում եմ, իջի՛ր, որովհետև տարակույսը պաշարել է նրանց:

Փոքր ինչ բաժանվեցի [նրանցից] մահվանս տնօրինության ժամանակ, և ասես ծննդկանի երկունքը պաշարեց իմ աշակերտներին՝ մինչև որ շտապեցնելով հարությունը՝ մխիթարեցի նրանց:

Տասնմեկ [առաքյալներից] մեկն այնտեղ չէր և հարության մասին [մյուս] տասի վկայությանը չէր հավատում³⁸, մինչև դարձյալ հայտնվեցի նրանց և կողիս խոցված վերքը շոշափել տվեցի, որպեսզի հավատա:

Եւ այժմ, [երբ] ես ճանապարհ ընկա դեպի երկինք, նրանց կարճամտությունը թող չգայթակղվի քո մխիթարության հույսով: Որի համար շտապի՛ր մխիթարել իմ որդիներին և աշակերտներին: Գնա՛, հանգի՛ր նրանց վրա, ինչպես խոստացա նրանց, և վարդապետելով հիշեցրու նրանց իմ բոլոր ասածները»» [հմմտ. Հովհ. ԺԴ 26]:

Այնժամ սլանալով ամենակար զորությունը, փրկական առատությունը, հեզության աղբյուրը, մարդասեր շնորհը, Աստծո առատության հեղումը, բարության Հոգին, կենդանարար բխումը՝ մարգարեների [կողմից] քարոզված, անցնում էր ահեղ որոտմամբ անմարմինների խմբերի դասակարգություն-

³⁸ Ակնարկում է Թովմասին, տե՛ս Հովհ. Ի 24-29:

ների միջով, և սքանչանալով զարմանքից ապշեցին հիացմամբ երկնաւոր զորքերի ևահապետությունները:

Քանի տեսան, որ [Եւ], ում [իրենք] ցանկանում էին [գեթ] աղոտ կերպով տեսնել, իսկական էութամբ շարժվել [և] սփռվել է մարդկային ազգի վրա:

Քանզի այսօր Հոգու ամբողջական անձնավորությունն իջավ առաքյալների բազմության այս դասի վրա, ինչպես որ Միաձինն [էր իջել] Սուրբ Կոյսի արգանդը:

Եւ որ եկավ, այլևս չհեռացավ, այլ մնաց Քրիստոսի եկեղեցում, ըստ անսուտ խոստմանն իր³⁹ Փեսայի, որ ասաց. «Ձեզ հետ կբնակվի և ձեզ հետ կլինի հավիտյան» [հմմտ. Հովհ. ԺԳ 16]:

Որը և զորացրեց այսօր առաքյալներին, և նրանց մատակարարությամբ՝ ողջ տիեզերքը, քանզի և Նրան առավել հաճելի եղավ մարդկանց փրկության ճաշակումը, որոնց մոտ եկավ և բնակվեց նրանց մեջ:

Ուստի և Պետրոսը իր մեջ կրելով Հոգին, համարում էր, [որ] Անանիան ոչ [թե] մարդկանց, այլ Աստծուն է ստել. «Ինչո՞ւ, – ասում է, – ձեր մտքում դրեցիք փորձել Աստծո Հոգին, որով հետև կամենալով խաբել, ոչ թե մարդկանց ստեցիք, այլ Աստծուն» [հմմտ. Գործք Ե 4]:

Սրա շնորհը առաքյալներից ձեռնադրվելու ժամանակ հանգավ Ստեփանոսի վրա, որը և իսկույն զորացավ նշաններ ու մեծամեծ հրաշքներ գործելու համար [հմմտ. Գործք Զ 5-8]:

Եւ⁴⁰ արդարև, որպես եկեղեցու թագավոր, Պողոսին և Բառնաբասին կարգեց իր խոսքի սպասավորության գործին [հմմտ. Գործք ԺԳ 2]:

Սա ոմանց ընտրեց մարգարեության, ոմանց առաքելության, այլոց հովվության և վարդապետության համար [հմմտ. Եփ. Դ 11, տե՛ս և հմմտ. Լան Ա Կորնթ. ԺԲ 28]:

³⁹ Նկատի ունի Եկեղեցին:

⁴⁰ Նկատի ունի Սուրբ Հոգին:

ինչպես Սատաթիային առաքելությունը վիճակեց [հմմտ. Գործք Ա 26], Ագաբոսին և Տիմոթեոսին՝ մարգարեությունը [հմմտ. Գործք ԻԱ 10, Ա Տիմ. Ա 18, Դ 14], և Եփեսոսի եկեղեցու երեցներին՝ հովվությունն ու վարդապետությունը:

«Ձգո՛ւյձ եղեք, – ասում է, – այդ հոտի [համար], որի վրա տեսուչներ և վարդապետներ կարգեց ձեզ Սուրբ Հոգին» [հմմտ. Գործք Ի 28]:

Սա արձակելով կյուրեղեն լեզուն՝ համարձակություն տվեց հայր կոչել Աստծուն [հմմտ. Հռոմ. Ը 15-16], որ նստում է հրեղեն կառքի վրա և թևաքողված պաշտվում է հրեղեն անմարմնական բանականների կողմից [հմմտ. Ես. Ձ 1-2]: «Քանի որ ստացանք որդեգրության Հոգին, որով աղաղակում ենք՝ Աբբա հայր: Նույն [այս] Հոգին է, որ վկայում է մեր հոգուն, թե Աստծո որդիներ ենք» [Հռոմ. Ը 15-16]:

Սա մեկին տալիս է իմաստության խոսք, ուրիշին՝ գիտության, մյուսին՝ հավատք՝ լեռները շարժելու [չափ], և ուրիշին՝ զորություն՝ սքանչելի գործեր կատարելու [հմմտ. Ա Կորնթ. ԺԲ 8-10]:

Սա օժույթ է մեր միտքը՝ ըստ Հովհաննեսի, և դարձնում քրիստոնյա և քրիստոսընկալ [հմմտ. Ա Հովհ. Բ 24, 27, Գ 24], և այս օժությունից զորանում ենք իմանալու համար ամեն ինչ [հմմտ. Ա Հովհ. 2.20]:

Սա լուսավորում է մեր սրտի աչքերը, [որպեսզի] իմանանք, թե ինչ է մեր կոչման հույսը, ժառանգության փառքի մեծությունը [հմմտ. Եփ. Ա 18] և Քրիստոսի սիրո լայնությունն ու երկարությունը [հմմտ. Եփ. Գ 18], որի համար արհամարհեցինք երևելիները, և փափագում ենք աներևույթներին [հմմտ. Բ Կորնթ. Դ 18]:

Եւ այս Հոգով Քրիստոս մեր մեջ բնակվելով՝ մեռցրեց մարմնի զգայարանները մեղքերի հեշտանքի [համար] և կենդանացրեց բանական հոգին՝ արդարության խորհուրդների հույսով, որով զորացած՝ մարդիկ կոխտեցին ներկա և գալիք նեղությունն ու անձկությունը, հալածանքը, սովը, մերկությունը,

սուրբ [հմմտ. Հռոմ. Ը 35, 38]՝ հոգով պայծառանալով Քրիստոսի սիրո ճանաչողության համար [հմմտ. Եփ. Գ 19]:

Աս, որ քննում է Աստծո խորությունները [հմմտ. Ա Կորնթ. Բ 10], քննում է և մարդկանց սրտերը, և տեսնելով տկարությունն այս բնության՝ օգնության է հասնում մեր տկարությանը և Աստծո առաջ անմոռու հառաչանքով բարեխոսում է Եկեղեցու համար [հմմտ. Հռոմ. Ը 26]:

Եւ ինքը Աստծուն սիրողներին ամեն բարիքի մեջ մշտապես գործակից է լինում [հմմտ. Հռոմ. Ը 28], ամենքին կամենում է փրկություն, սպասում է ամենքի հավատքին, որպեսզի հավատ ընծայելու ժամանակ նրանց մեջ սերմանի հոգևոր շնորհներ և զորություններ:

Կամենո՞ւմ ես իմանալ նրա սիրո չափն առ մարդիկ.

Մոտեցիր ներքինու կառքին, ինչպես մի ժամանակ Փիլիպպոսը⁴¹, տե՛ս, թե ինչպես հավատքով [եղած] մի հարցման դիմաց տրվեց Հոգին:

«Տե՛ր, - ասում է, - աղաչում եմ քեզ, ի՞ր մասին է ասում այս մարգարեն, թե մեկ ուրիշի» [հմմտ. Գործք Ը 34]:

Այս ազնիվ հարցումը դուռ դարձավ, որպեսզի Հոգին մտնի ներքինու անձի մեջ, և տեղ պատրաստեց Փիլիպպոսի խոսքերի [համար], մինչև կանգնեց ջրի մոտ, և Հոգին ներքինուն որպես ուսուցիչ իջնելով՝ ավելորդ համարեց այլևս Փիլիպպոսին հոգնեցնելը [հմմտ. Գործք Ը 26-39]:

Այս է Սուրբ Հոգու՝ աշխարհը պաշտպանելը, այսչափ է Նրա՝ մարդկանց մխիթարելը:

Ո՛չ եթովպացուն է խտրությամբ [վերաբերվում], ո՛չ հեթանոսներին է անարգում, ոչ հրեաներին է պատվում: Ամենքին հավասար շնորհներ է պարգևում:

Միայն հոժար սրտի հավատքն է փափագում մեզնից, որ տանք [որպես] իր շնորհի կյուր: Եւ զանազան շնորհների միևնույն փայլատակած ջահից ճառագայթում է Եկեղեցու մա-

⁴¹ Նկատի ունի Փիլիպպոս սարկավագին (տե՛ս Գործք 2 5), որին Սուրբ Հոգին ուղարկում է դեպի եթովպացի ներքինու կառքը (տե՛ս Գործք Ը 26-40):

տուկների վրա, և շնորհներով փայփայելով նրանց՝ աշխարհի զբաղումների հեշտությունից ձգում է դեպի Հոր սերը:

Քանի որ նշաններն ու լեզվախոսությունը Հոգու կողմից տրվեց երեխաներին [որպես] խաղալիք, և մանուկներին՝ բժշկության շնորհն ու զորությունների հաջողությունները՝ [որպես] կաթ, իսկ հասուններին մատակարարում է պինդ կերակուրը, որ Աստծո սերն է [իմմտ. Եբր. Ե 12-14]:

Ինչպես աղաղակում է [Պողոս Առաքյալը], որ ճաշակել էր. «Եթե ունենամ ամբողջ գիտությունը և լեռները շարժելու չափ հավատ, բայց սեր չունենամ, ոչ մի օգուտ չեմ ունենա» [իմմտ. Ա Կորնթ. ԺԳ 2-3]:

Նույնը և աշակերտներին է մաղթում [իետևյալն] ասելով. «Աղոթում և ծնկի եմ գալիս, [որպեսզի] ոչ թե նշանագործության հոգին ստանաք, այլ իմաստության Հոգին, որ լուսավորում է սրտի աչքերը Քրիստոսի սիրո լայնության և երկարության, բարձրության և խորության գիտության համար» [իմմտ. Եփ. Ա 16-18, Գ 14-19]:

Այս պատճառով Հոգու կողմից և՛ նշանների, և՛ լեզվախոսության ազդեցությունը, որպես անօգուտ մի բան, պակասեց, իսկ իմաստության և հանճարի Հոգին միշտ ներգործում է եկեղեցում [իմմտ. Ես. ԺԱ 2] և Քրիստոսի սերը պայծառացնում է նրա որդիների հոգիներում:

Ոչ ոք թող հույս չունենա, [թե կարող է] Տեր անվանել Հիսուսին, եթե նախ Նրանից⁴² ազդումը չընդունի [իմմտ. Ա Կորնթ. ԺԲ 3]: Իսկ եթե մեկը առաջ մոտենա առանց Նրա հրամանի կոչման, Սուրբ Հոգուն փորձող կախարգ Սիմոնի պես կհեռացվի Դավթի տաճարից [իմմտ. Գործք Ը 9-24]:

[Սուրբ Հոգին] ամուր կնիք է՝ դրված Քրիստոսի Սուրբ Եկեղեցու անդամներից յուրաքանչյուրի վրա [իմմտ. Բ Կորնթ. Ա 22, Եփ. Ա 13, Դ 30], որոնք պարսպված պահպանվում են Սրանով՝ Իր շնորհի պատվի մեջ: Քանզի Նա, որ հաստատեց մեզ ձեզանով հանդերձ Քրիստոսի մեջ, Աստված է, որ և կ-

⁴² Նկատի ունի Սուրբ Հոգուց:

քեց մեզ և մեր սրտերին տվեց Հոգին որպես առհավատցյա [հմմտ. Եփ. Ա 13-14]:

Վարդապետ Է, [որև] ուսուցանում և հիշեցնում Է Քրիստոսի ասածները ամենայն ճշմարտությամբ, որպես խոստացավ, թե «երբ զա Նա՝ ճշմարտության Հոգին, կառաջնորդի ձեզ ամենայն ճշմարտությամբ» [հմմտ. Հովհ. ԺԶ 13]:

Իմաստուն ճարտարապետ Է, որ օտարներին և պանդուխտներին կառուցում Է առաքյալների և մարգարեների հիմքի վրա [հմմտ. Եփ. Բ 20-22], լրացնելու համար չափը Քրիստոսի կատարյալ հասակի [հմմտ. Եփ. Դ 13]:

Հորդառատ գետ Է՝ մարդկանց մտքերը ոռոգող, որ արբեցնում Է մեր մտքի ակոսները և իր ցողով զվարթացնում առաքիլության անուշահոտ ծաղիկների զանազան բույսերը, ինչպես ասաց Քրիստոս, [թե] Հոգու միջոցով գետեր Է բխեցնելու իր հավատացյալների որովայնից [հմմտ. Հովհ. Է 38]. ինչպես որ նախաճառել էր մարգարեն [հմմտ. Հովել Բ 28]:

Արթուն վերակացու Է, եկեղեցու կարգերի հրահանգիչ և յուրաքանչյուր աստիճանն ու պատիվը որոշող, որ կարգեց նախ՝ առաքյալներին, երկրորդ՝ մարգարեներին, երրորդ՝ վարդապետներին, որոնց հետ և զորությունները, բժշկության շնորհները, լեզուների տեսակները, և լեզուների թարգմանությունը [հմմտ. Ա Կորնթ. ԺԲ 28-30]:

Այս ներգործող Հոգին օրինադրում Է այս տաճարի աստիճանական դասակարգությունը երկնավորների դասերի համանմանությամբ՝ հոգևոր երգով միշտ Աստծո հետ խոսակցել տալով [նրանց]⁴³:

Այս Հոգին Է, որ սրբարար ավագանի արգանդից Քրիստոսի եկեղեցու մանուկներ Է ծնում երկնավոր Հորը որդեգրության [տալու համար]:

Այս Սուրբ Հոգին Է զորացնում քահանայապետերի ձեռքերը շնորհաբաշխության [համար], քահանաներին՝ նվիրագոր-

⁴³ Ակնարկում Է Կեղծ-Գիտնիստյան երկնային նվիրապետության և եկեղեցական նվիրապետության տեսությունը – ծնթգ. ԱՏ:

ծության, սարկավագներին՝ սուրբ եկեղեցու սպասավորության:

Նա ժառանգներ է առաջ բերում եկեղեցական պատվի աթոռի համար.

Ոմանց կարգում է խոսքի ծառայության, այլոց՝ երգելու, մնացածներին՝ [Սուրբ] գրքի ընթերցման:

Նրանով վկաները զորացան, ևահատակները զինվեցին, կանայք արիացան, այրերը քաջացան:

Նրա զորությունը խաչանիշ փայտից բխում է սքանչելիքներով, կառուցված հարկերից⁴⁴՝ նշաններով, սրբերի մասունքներից՝ ամեն տեսակի ախտերի բժշկության շնորհներով:

Լի է ամբողջ երկիրը նրա ողորմությամբ, և օղը մաքրվեց, երբ նա իջավ:

Մեզ հետ է հանապազ, և մեր ամեն ինչը Նրա շնորհածիր պարգևն է [հմմտ. Հակ. Ա 17],

Որի առաջ երեսնիվայր ընկնելով՝ աղաչում ենք.

Ո՛վ Աստված Աստծուց, և կորոզող ամենայնի Սուրբ Հոգի. Քաջ Հովիվն [Հովի. Ժ 11-16] իր հոտը Քո պահպանության խնամքին հանձնեց,

Եւ առիավետ սփռեց Քո ճառագայթներն իր եկեղեցում:

Քեզանով են շարժվում մեր լեզուները օրհնության պատարագների ընթացքին,

Եւ մեր անձերը կարգվեցին Քո զանազան շնորհների սպասավորության համար:

Քեզ ենք աղաչում ամենքս միաբան,

Եւ խոսում ենք Քեզ հետ համարձակ՝ Քո արզանդի երկունքի ծննդյան որդիներս:

Մի՛ գարշիր Քո հոտից [մեր] մեղքերի գարշահոտության պատճառով,

Եւ մի՛ տրտմիր [մեր] անպարկեշտ խոսքերի համար:

Այլ մնա՛ մեզ հետ հաշտությամբ մինչև կյանքի ավարտը,

⁴⁴ Ամենայն հավանականությամբ նկատի ունի եկեղեցիները:

Եւ ուղեկից եղի՛ր դեպի երկնային Քո խորանները:
Ո՛վ Տեր, և ևժդեհության այս վայրն աքսորվածներիս
Պարսպի թշնամիների ևետերի խոցոտումներից:
Չունենք զորություն ճգնության մարտի մեջ [թշնամու դեմ]

ճակատելու.

Խնդրում ենք հառաչմամբ՝ մի՛ տար մեզ չար դարանակալի
փորձանքների մեջ:

Տո՛ւր ծարավածներիս Քո սիրո արբեցնող գինին,

Որ մատովակվեց այսօր սուրբ վերնատանը:

Որպեսզի միխթարվենք մեր այս երերուն խշտյակի մեջ

Եւ հանդերձյալ կյանքիդ հույսի մեջ ապաստանենք:

Ո՛վ բարերար Սուրբ Հոգի, և այս ևվերը, որ Քեզանից դեպի
Քեզ [առաքված] օրհնության բուրմունք է,

Հոտոտի՛ր սիրով, Աստված իմ, Հոգի հեզության:

Եւ մենք միաբերան օրհնում ենք քեզ,

Հոր և Որդու հետ, մշտնջենավոր կյանքիդ մեջ, անվախճան:

Ամեն:

A SHORT INTRODUCTION TO ST. NERSĒS OF LAMBRON

St. Nersēs (1153–1198) was the third child of Oshin II, the Het‘umian Lord of Lambron (ca. 1125–1170), and Shahandukht, the niece of St. Nersēs the Gracious (Shnorhali, Catholicos 1166–1173). Born in Lambron, an impregnable citadel in the foothills of the Taurus Mountains north of Tarsus in Cilicia, and given the baptismal name Smbat, as a child he was dedicated by his mother to the Holy Virgin Mary of Skevra, a nearby monastery. There he was nurtured in the best traditions of the Church, and at age sixteen tutored at Hřomklay (the Catholicosal See) by his great uncle Shnorhali. In his “Panegyric on the Ascension” he refers to his being a votive child: “Like Samuel, I was dedicated by my mother, given to God and nurtured in the service of the Temple.”

He was greatly admired by Shnorhali, who ordained the teenage Smbat a priest, giving him his own name, Nersēs, and acquainted him early on with his ecumenical endeavors involving both the Roman Church and the Greek Church—while Shnorhali himself was assisting his elder brother and predecessor, Grigor III (Catholicos 1113–1166). Following in his great uncle’s footsteps, the young Nersēs was destined to become a theologian, hymnographer, poet, and statesman. He pursued the austere life at the “admirable” monasteries of Sev Leř (Black Mountain), refusing to serve as abbot anywhere—lest he be considered higher than his elderly teachers whom he loved ardently, especially Abbot John of Sev Leř’s Monastery of Saghru. However, Shnorhali’s successor, Grigor IV Tghay (The Youth, Catholicos 1173–1193), prevailed upon the young monk to return to Hřomklay, where he was privileged to associate with the great teachers of the time. In his first year there, he wrote the “Panegyric on St. Nersēs Shnorhali” and translated works of St. Cyril of Alexandria (d. 444); and in the

following year, at age twenty-two, he was consecrated as Bishop of Tarsus, an office he held until his untimely death (1175–1198).

On a journey to Antioch in 1176, he became acquainted with Benedictine monks in that Crusader Principality and was greatly impressed by their discipline and liturgy, leading him to translate the Rule of St. Benedict at the Monastery of St. Paul. Given his knowledge of Greek and Latin, he was not only a well qualified translator of ancient texts but also an eligible ambassador to Emperor Frederick Barbarossa (r. 1155–1190) and later to Alexios III of Byzantium (r. 1195–1203), a sincere mediator who pursued the ecumenical initiatives of Shnorhali for the unity of the Church Universal. He took the lead—albeit in vain—to persuade traditionalist Armenian theologians at the 1177 Synod of Hromklay to engage in ecumenicity. His oration on that occasion, known as “The Synodal Discourse,” is a celebrated document for both its ecumenical theology and oratorical temperament.

Nersēs is a voluminous author, having written volumes of commentaries and treatises on various subjects, in addition to translations, poetic hymns and panegyrics. Among the latter, his “Panegyric Pronounced upon the Miraculous Descent of the Holy Spirit” is traditionally favored, to apoint of being given a special place in the Lectionary (Čšaoc‘) of the Armenian Church. His biblical commentaries include a massive commentary on the Psalms and others on the biblical Wisdom Literature and liturgical texts. All these, some fifty works, coupled with his active devotion to the Church Universal and association with the port-city of Tarsus, the birthplace of the Apostle Paul, have earned him the nickname “the new Saint Paul.”

Abraham Terian

**NERSĒS OF LAMBRON:
PANEGYRIC PRONOUNCED UPON THE
MIRACULOUS DESCENT OF THE HOLY SPIRIT***
(trans. Abraham Terian)

I am constrained by my heart's passionate love to dedicate to this great day the words of my feeble mind. You also, assembled people, offer the gift of your prayers for my feebleness. Give me of that grace bestowed on this day upon the world, that I may immerse myself boldly in the deep denotations of divine knowledge; that I may be able to dispense the incorruptible and nourishing spiritual-food.

On this day a bountiful gift inundated the earth. Let us wish for its luminous rays to penetrate our minds' sight and to guide us as we walk in the paths of divine sayings.

O what a wonder! He whom angels longed to see even dimly,¹ having come down on this day with grace to the lower realm, is being promulgated. And who would not wish to enjoy His gifts through faith?

The Holy Spirit, whose immensity the myriads of dumbfounded Seraphim and Cherubim were unable to comprehend in spite of their desire, by truly coming down on this day, imbued humanity with the knowledge of His ineffable mysteries. With them I also await to receive some drops of His abundant wisdom.

* The translation follows the critical text provided here, which is preferable to that found in the *Čašoc* (Lectionary), Part II (Jerusalem: St. James Press, 1967), 60–69. There are two Western Armenian translations based on the latter text: by Yeghishē Dērdērian (Yeghivard, Patriarch of Jerusalem 1960–1990), *Sion* 10 (1936) 202–7, and by Arshen Aivazian, ed. and trans., *Ճաշոց Գիրք / Lectionary of the Armenian Apostolic Orthodox Church for Sunday Synaxis and Feast Days* (privately published in the US, 2021), 400–25, with Eng. trans. en face. The panegyric is based on Acts 2:1–41, reverberated throughout.

¹ Said of Jesus, 1Pet 1:12.

Indeed, man stretched out his hand to the tree of life, which was kept far away from him at the beginning. He took and ate of it,² and (has now) attained eternal life. And who is the mediator and distributor of this grace but Jesus Christ our Lord:³ the Life, the Light, the Way, the Door, the Shepherd, the High Priest, the Mediator, the Hope, the Intercessor, and the Forerunner!⁴ He is the One who by His sovereign will moved from one heaven to another, gloriously entered within the veil as our mediator, and with ineffable contentment placed before God the Father the first instalment from humanity.⁵ Thus He obtained this bounteous gift in exchange, which He spread out on earth. In our amazement we were inebriated, and forever forgot the sorrowful birth pangs of our foremother Eve.⁶

On this day we, who were submerged in the darkness of the world's deception, received the intelligible light that enlightens souls and leads them into the land of the living.

On this day we took off the garment of sorrow, which we inherited from our forefather Adam, for the New Adam has adorned us,⁷ has crowned and decked us in gold-woven clothing.⁸

² Allusion to Gen 3:6 and, interpretively, to the life-giving Cross prefigured by the tree of life.

³ Allusion to 1Tim 2:5.

⁴ John 1:4; 11:25; 14:6 (Life); 8:12; 9:5 (Light); 14:6 (Way); 10:7, 9 (Door); 10:11, 14 (Shepherd); Heb 3:1; 8:3, 6; 10:12 (High Priest); 8:6; 9:15; 12:24 (Mediator; cf. 1Tim 2:5); Col 1:27; 1Tim 1:1 (Hope); Rom 8:34; 1John 2:1 (Intercessor, said also of the Spirit in Rom 8:26–27); Heb 6:20 (Forerunner).

⁵ Allusion to Heb 6:19–20; 7:15–28; 8:1–6; 9:11–12, 24–25. Arm. *արհաւատչեայ*, a recurring word in the panegyric, corresponds to Gk. *arrabōn*. Just as the Spirit is the “first instalment” or the “pledge” of more gifts to come (Eph 1:13–14), those resurrected at the time of Christ's resurrection are the “first instalment” of the redeemed from among humans (a partitive-genitive, *ἡ ὑπαρρηλασίη*), presented by Him to the Father. Cf. 2Cor 1:22; 5:5.

⁶ Allusion to Gen 3:16.

⁷ Allusion to Col 3:9–10; cf. Eph 4:22–24.

⁸ Allusion to Ps 45:9, 14 (44:10, 15 ArmB).

On this day the amazing fire glittered with heavenly flames flashing upon the earth,⁹ burned and eradicated the thorn (of sin) from among humans, as well as the severe punishment inflicted because of the curse due to sin.

On this day the race that was privileged with tongues of fire, that had made itself equal to irrational animals, was again granted the grace of reason—being partaker of its Creator’s image.¹⁰

On this day the mighty sound of the Spirit’s sweet shower reverberated on earth,¹¹ and the words of the curse spoken there because of Adam were replaced with blessing.

On this day the fragrant aroma of the myrrh of incorruptibility was spread, transforming the suffocating, heavy smoke of death into immortality.

On this day in return for the perceptible Sacrifice who was sent to this perceptible world, this comprehensible realm received the first installment of the Spirit who transformed the perceptible elements of this world into the form of the ethereal City.¹²

⁹ Acts 2:2–3.

¹⁰ A Patristic commonplace owing to Philo of Alexandria, who repeatedly equates the image of God (Gen 1:26–27) and the inbreathed divine spirit (Gen 2:7), taking them for the human mind: that divine, incorruptible element or the rational part of the soul. This is what distinguishes humans from irrational animals. The image, tarnished because of Adam’s fall but not effaced, was restored by the New Adam in Christian interpretation (especially in Gregory of Nyssa, *On the Creation of Man*). The author’s view is further based on the synonymy of “reason” (logos) and “spirit” (pneuma) in Classical Philosophy.

¹¹ Acts 2:2–3.

